# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԲ

Թ. ՏԱՐԻ

Յունուար–Փետրուար

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1952

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին . . . . . 3

ԳԵՈՐԳ Զ. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, Սրտագին ողջերթ Նորին Սրբազնության Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին . . . . . . . . 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը . . . . . 8

Ամենապատիվ Տեր Խադ արքեպիսկոպոս Աջապահյան՝ Կաթողիկոսական տեղապահ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի . . . . . . 11

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ . . . . . . . 15

ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ, Վեհափառ Հայրապետը և Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը . . . . . . . . . . . . 22

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ, Սարկավագական ձեռնադրություն . . . 26

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Անապատ կամ Նոր-Վարագ վանքը և նրա վիմագրությունը . . . . . . . . . . . . 27

ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ԱԹԱՆԱՍՅԱՆ, Իմ աշակերտելս Խրիմյան Հայրիկին Վարագա վանքում և Մուշի Ս. Կարապետում . . . . . 35

ԹՂԹԱԿԻՑ, Խնդության երգեր . . . . . . . . . 40

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ, Երևանյան տպավորություններ . . 44

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ . . . . . . . . . . . 50

Վերափոխման տոնակատարությունը Երուսաղեմի մեջ . . . . 54

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Դավիթ Ալավկա որդու կանոնները . 56

Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1952 թվականի ընթացքում տպագրված նյութերի . . . . . . . . . . 68



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1952 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

# ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մոսկվայի եվ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի ծննդյան յոթանասունհինգամյակի կապակցությամբ եվ նշելով նրա հայրենասիրական աչքի ընկնող գործունեությունը ինչպես Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում, այնպես էլ նրանից հետո,—Մոսկվայի եվ Համայն Ռուսիո Պատրիարք ԱԼԵՔՍԻԻՆ պարգեվատրել ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ շքանշանով:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ՝
**Ն. ՇՎԵՐՆԻԿ**

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Քարտուղար՝
**Ա. ԳՈՐԿԻՆ**

Մոսկվա, Կրեմլ
8 նոյեմբերի 1952 թ.



# ՍՐՏԱԳԻՆ ՈՒՂԵՐՁ

## ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻՆ

**ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈ՛ՒՆ, ՍՐԲԱԶԱՆ ԵՂԲԱՅՐՆԵ՛Ր ԵՎ ՄԵԾԱՀԱՐԳ ՀՅՈՒՐԵ՛Ր.**

Այսօր՝ Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և ռուս հավատացյալ ժողովրդի համար՝ տոնական օր է: Մենք հավաքվել ենք խորհրդային Ռուսաստանի պատմական մայրաքաղաքում՝ Մոսկվայում, ռուս պատվական ժողովրդից սիրված, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պետի՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազան Պատրիարք Ալեքսիի 75-ամյա հոբելյանը տոնելու:

Հոբելյանական տոները անձի կամ հաստատության գործունեության արժեքավորման տոներ են. ուստի և մենք եկել ենք մեր սիրելի Սրբազան Հոբելյարի գործունեության գնահատականը տալու, նրա գործունեությունը արժեքավորելու:

Մենք նկատի ենք առնելու Սրբազան Հոբելյարի կյանքի վերջին շրջանի գործունեությունը, երբ Սրբազան Հոբելյարին փոքրիշատե ի մոտո ճանաչելու առիթն ունեցանք, վերապահելով նրա գործունեության ամբողջական պատկերը տալ ավելի գիտակներին և ի մոտո ծանոթներին:

Յուրաքանչյուր անհատ, ինչպես յուր ծնողների, նույնպես նաև յուր ազգի հոգեկան կարողությունների ժառանգորդն է: Մենք անձնապես չենք ճանաչում Սրբազան Հոբելյարի ծնողներին, սակայն լավատեղյակ ենք ռուս գնահատելի ժողովրդի հոգեկան հատկություններին, որին ժառանգորդ է Հոբելյարը: Ռուս մարդիկ կրոնասեր են, սիրում են իրենց ժողովուրդը և Հայրենիքը, մարդասեր են և աչքի են ընկնում իրենց համբերատարությամբ: Ռուս պատվական ժողովրդի վերոհիշյալ հոգեկան թանկագին հատկությունները մենք տեսնում ենք Հոբելյարի մեջ, որպես հայելու մեջ:

Հոբելյարի հիշյալ հոգեկան կարողությունները մենք առաջին անգամ հիացմամբ տեսանք՝ 1941 թվականին ծագած՝ Հայրենական պատերազմի ժամանակ: Նա այն ժամանակ Լենինգրադի միտրոպոլիտ էր՝ և ազգի ու Հայրենիքի սիրով տոգորված, Լենինգրադի պաշարման ամբողջ ընթացքում, որ տևեց 30 ծիգ ամիսներ, մարդկային տանջանքների անասելի շրջանում, վճռականու-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆՎԻՐԱԾ ԳՈՐԳԸ ՀՈԲԵԼՅԱՐԻՆ

թյուն և հաստատակամություն ունեցավ մնալու այնտեղ՝ պաշարված քաղաքում և՝ իր վառվռուն ու զգայացունց քարոզներով՝ հանդիսացավ Լենինգրադի հերոսական պաշտպանների մխիթարիչը:

Ռուս գրողներից մեկը՝ Հայրենական պատերազմում ռուս ժողովրդի անպարտելիության հիմքը համարում է նորա բարոյական վսեմ գաղափարները՝ կրոնասիրությունը, ժողովրդասիրությունը և հայրենասիրությունը, որով զինված՝ զորքը հերոսացավ և հաղթանակեց: Ճիշտ այդպես մեկնաբանվել է նաև 1812 թվականին Նապոլեոնի դեմ ռուս զորքի տարած հաղթանակը. այն ժամանակ ևս ռուս զորքի անպարտելիության հիմքը ճանաչվել է ռուս ժողովրդի կրոնասիրությունը, ժողովրդասիրությունը և հայրենասիրությունը: Այսպես է մեկնաբանել ժամանակակից միտրոպոլիտ Ֆիլարետը, որ նույնպես իր վառվռուն ճառերով ոգեշնչել է հավատացյալներին և անձնազոհ մարտիկներին:

Վերոհիշյալ երկու փաստերը պատմական խոշոր դաս են ռուս ժողովրդի համար՝ հավատարմությամբ պահել՝ իր կրոնասիրությունը, ժողովրդասիրությունն ու հայրենասիրությունը, որպես հիմք և խորհրդանշան իր անպարտելիության, որպիսի գաղափարի պաշտպանն է եղել և է այսօր Սրբազան Հոբելյարը: Այս դասը անշուշտ դաս է նաև Խորհրդային Միության մեջ ապրող մյուս բոլոր ազգերին:

Սրբազան Հոբելյարի գովելի եկեղեցասիրության և հայրենասիրության ապացույց է նաև՝ 1948 թվականին, Մոսկվայում, նորա նախաձեռնությամբ գումարված Պրավոսլավ Ավտոկեֆալ եկեղեցիների ժողովը, ուր շեշտվեցավ Պրավոսլավ եկեղեցու միասնականությունը և ամրացավ ավտոկեֆալ եկեղեցիների փոխադարձ բարոյական կապը, որ Ռուս եկեղեցու համար կարևոր պարագա է: Հիշյալ ժողովը իր հաջող ընթացքն ու ավարտը պարտական է Սրբազան Հոբելյարի ճարտար խոսքին, սիրալիր վարվեցողության և շնորհալի տակտին:

Սրբազան Հոբելյարի իմաստուն ղեկավարության և շնորհալի տակտի հետևանքով է, որ այսօր Ռուս Պրավոսլավ և Հայ եկեղեցիների փոխհարաբերությունը բարեկամականի է փոխարկվել: Ցարական Ռուսաստանը՝ ռուս ժողովրդի հոգեբանության հակառակ, «Բաժանեա՛ զի տիրեսցես» պառակտողական սկզբունքով էր ղեկավարվում, որ միայն նպաստում է ժողովուրդների պառակտման և երկրի թուլացման: Նույն այդ ուղղության՝ իր ժամանակին՝ արձագանքել են նաև Ռուս Պրավոսլավ եկեղեցու որոշ ղեկավարներ, որի հետևանքով, հիշյալ երկու եկեղեցիների միջև ստեղծվել էր սառը հարաբերություն: Իսկ այսօր փոխվել է պետական ղեկավար սկզբունքը և՝ շնորհիվ Սրբազան Հոբելյարի շնորհալի տակտի և իմաստուն ղեկավարության, փոխվել է նաև երկու եկեղեցիների փոխհարաբերությունը՝ սառնության փոխարինել է ջերմ բարյացակամություն, որ մենք կկոչեինք անգամ մտերմություն:

Քաղաքական պայմանների փոփոխության հետևանքով՝ մեր երկրի բոլոր քրիստոնեական եկեղեցիների մեջ ծնունդ առին եկեղեցական արտառոց շարժումներ: Այդպիսի շարժում տեղի ունեցավ նաև Ռուս Պրավոսլավ եկեղեցու մեջ, որ կոչվեցավ վերանորոգչական շարժում: Սրբազան Հոբելյարը, որպես կողմնակից եկեղեցական կանոնների անձեռնմխելիության, փորձեց հաշտարար քաղաքականությամբ վերջ տալ այդ շարժմանը: Սակայն հակառակորդները չըմբռնեցին եկեղեցու ջանքը և Սրբազան Հոբելյարի բարի ձեռնարկը անհաջողության մատնեցին: Այնուհանդերձ Սրբազան Հոբելյարը, իր պատրիարքության ժամանակ, վայելեց իր և այլոց աշխատանքի պտուղը. վերանորոգչական շարժումը մեռավ ի շահ Պրավոսլավ եկեղեցու:

Սրբազան Հոբելյարի ձեռնարկները բազմաթիվ են, բայց նրանցից լավագույնը համամարդկային խաղաղության պաշտպանության գործն է:

Համամարդկային խաղաղության ձեռնարկը աննախընթաց և աննման ձեռնարկ է, որի նախաձեռնությունը պատկանում է Խորհրդային Միության: Աննախընթաց ենք կոչում, քանի որ չունի անցյալում իր նմանը. աննման ենք կոչում, որովհետև իր մեջ ամփոփում է մարդկության ցարդ արտահայտած իղձերի հարթման և կենսագործման ուղիները: Խաղաղության գաղափարի կենսագործմամբ աշխարհում ամենուրեք սկիզբ կառնեն համերաշխ ու խաղաղ կյանք և համերաշխ գործունեություն, որոնք նյութական և՛ հոգեկան կուլտուրայի ծաղկումն ու մնայուն պահպանությունն են ապահովում, որի հետևանքով կապահովվի նաև համամարդկային երջանիկ կյանքը, որ մարդկության վախճանական նպատակներից էականն է:

Համամարդկային խաղաղության ձեռնարկը մի այնպիսի ձեռնարկ է, որ մարդկությունը հավետ անմոռաց պիտի պահե իր հիշողության մեջ և երախտագիտությամբ հիշե նրա նախապատճառ եղող և կենսագործման հաջողության համար պայքարող Խորհրդային Միության անունը:

Համամարդկային խաղաղության ձեռնարկի կենսագործման նպաստող Պրավոսլավ Եկեղեցու բերած աջակցությունը՝ ի դեմս Սրբազան Հոբելյարի և նրա հարազատ գործակցի, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու նորագույն պատմությունը պիտի արձանագրե, որպես համայն մարդկության մատուցած իր մեծագույն գործերից մեկը: Իսկ ռուս հավատացյալ ժողովուրդը երախտագետ զգացմամբ՝ որդոց-որդի հավետ անմոռաց պիտի պահե Ալեքսի Սրբազան Պատրիարքի անունը:

Հայ Եկեղեցին իր հավատացյալ հոտով՝ մեծարելով Սրբությանդ կրոնասիրությունը, ժողովրդասիրությունն ու հայրենասիրությունը, գնահատելով Ձեր մատուցած ծառայությունը մեր սիրեցյալ ռուս մեծ ժողովրդին և Հայրենի Պետության, այլև նկատի առնելով Սրբությանդ շեշտված աջակցությունը համամարդկային խաղաղության կենսագործմանը (նկատի ունենք հատկապես 1950 թվականին Թբիլիսիում գումարված երեք Պատրիարքների ժողովն ու նրա Դիմումը բոլոր քրիստոնեական եկեղեցիներին, և 1952 թվականի մայիսին Զագորսկում գումարված համամիութենական բոլոր եկեղեցիների և կրոնների ժողովն ու նրա Դիմումը համաշխարհային բոլոր եկեղեցիների և կրոնների պետերին) և մեծապես գնահատելով Սրբությանդ ցուցաբերած քրիստոնեական սիրո և ճշմարիտ եղբայրության զգացմունքները հանդեպ Հայ Եկեղեցու և նրա հոտի, Հայ Եկեղեցին իր հավատացյալ հոտով՝ ի նշան իր խորը հարգանքի, սիրո և երախտագիտական զգացման հանդեպ Ռուս Պրավոսլավ Եկեղեցու, ռուս մեծ ժողովրդի և Խորհրդային Միության՝ բերում է Սրբազան Հոբելյարիդ իր փոքրիկ նվերը՝ մի պատի գորգ Սրբությանդ նկարով, հայ գորգագործական արվեստի լավագույն մի նմուշ, որպես կոնկրետ արտահայտություն և մնայուն հուշարար իր զգացմունքների:

ԳԵՈՐԳ Զ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

9 նոյեմբերի 1952 թ.
ՄՈՍԿՎԱ

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

Մայր Աթոռի նորաբաց Հոգևոր Ճեմարանը, որ թևակոխել է իր գոյության 7-րդ տարին, Նորին Ս. Օծության Տ. Տ. Գևորգ Զ. Վեհափառ Հայրապետի ամենակարևոր ձեռնարկումներից մեկն է հանդիսացել: Սկզբնավորության առաջին իսկ օրերից, Հոգևոր Ճեմարանը Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում է եղել, նրա սրտի ամենամոտիկ հաստատությունը հանդիսացել: «Իմ ցանկություններից երկուսն ամենից կարևորներն եմ համարում,— գրել է Վեհափառն իր հայրապետական անդրանիկ կոնդակում,— առաջինը՝ տեսնել Մայր Տաճարը նորոգված և երկրորդը՝ նորաբաց Ճեմարանի շրջանավարտներով լի վիճակի գտնվել ծածկելու Հայաստանյայց Եկեղեցու ասպարեզում եղած բացը»:

Վեհափառ Հայրապետի ցանկության և ծրագրի համաձայն, Հոգևոր Ճեմարանը կոչված է մեծ ու պատվավոր դեր կատարելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կյանքում՝ իր կոչման ու պարտականության գիտակցող, բարեկիրթ, հայրենասեր նոր հոգևորականություն պատրաստելու ասպարիզում:

Այսօր ուրախությամբ պետք է արձանագրել, որ այս կարճ ժամանակում, Հոգևոր Ճեմարանը տվել է իր անդրանիկ հոգևոր հունձքը. 12 հոգի ավարտող ուսանողներից սարկավագական կոչում են ընդունել: Ճիշտ է, համեստ է այդ հունձքը, իբրև սկզբնավորություն, բայց մեծ ու հուսադրիչ է նրա ապագա հեռանկարը, բարոյական նշանակությունը:

Դառն, ողբերգական ճակատագիր էր վիճակվել հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին: Հայ հոգևորականությունը, հավատարիմ իր դարավոր ազգային ավանդներին, ի գլուխ իր հավատացյալ հոտին, ապրել է իր պատմության ամենաողբերգական էջերից մեկը: Թափուր են դեռևս մինչև այսօր 1915 թվականի մեծ եղեռնից հետո երբեմնի ծաղկյալ հոգևոր կենտրոնները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու: Երբեմնի Հայաստանից դուրս գտնվող հազարավոր չեն ու պայծառ վանքերից, հոգևոր մշակութային կենտրոններից մնացել են միայն Երուսաղեմն ու Անթիլիասը:

Հարկավոր էր ոտքի կանգնեցնել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, նոր շունչ, կենդանություն տալ նրան, նոսրացած շարքերը համալրել նոր ուժերով ու նորից Եկեղեցին դնել իր հոգևոր կոչման և նշանակության բարձրագույն դերի վրա:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերականգնման ճիգերը, Համաշխարհային առաջին պատերազմի մեծ ալեկոծությունից հետո, մասամբ հաջողությամբ պսակվեցին Երուսաղեմում: Հատկապես Դուրյան և Գուշակյան պատրիարքների շնչով հասակ է առել շնորհալի հոգևորականների մի նոր սերունդ, որը ո՛չ միայն տերունական սուրբ տեղերում արիաբար պաշտպանում է ազգային-եկեղեցական մեր դարավոր իրավունքները, այլ նաև Վեհափառ Հայրապետի ցանկությունների և հրահանգների համաձայն, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասն է կատարում մեր թեմերում:

Անթիլիասում, Տ. Բաբգեն աթոռակից և մանավանդ Տ. Գարեգին Վեհի ղեկավարությամբ, հասակ է առել նույնպես շնորհալի հոգևորականների մի նոր սերունդ, որը լրիվ չափով մատակարարում է կիլիկյան տարագիր թեմերի հոգևոր սպասը: «Այժմ վստահ

կարող ենք լինել,— նշել է Վեհափառ Հայրապետը.— Ս. Էջմիածնի Ճեմարանը, Ս. Երուսաղեմի, Տանն Կիլիկիո ընծայարանների հետ, ըստ ամենայնի ի վիճակի կլինեն հայ ժողովրդի հոգևոր-եկեղեցական կարիքները հոգալու և նորա կրոնական դաստիարակության գործը բարձր մակարդակի վրա դնելու, որն այնքան կարևոր է հայ ժողովրդի հոգևոր զորացման, կուլտուրական բարձրացման և ազգային ինքնագիտակցության զարգացման համար»:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենտրոնական հոգևոր դպրոցը, է՛լ ավելի պետք է մեծացնել, հռչակել, ինչպես եղել է անցյալում, ինչպես վայել է Ամենայն Հայոց Հայրապետության դիրքին և հեղինակության:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գոյություն է ունեցել 5-րդ դարից: Ս. Էջմիածինը, հին Վաղարշապատը, շատ հնուց եղել է հայ ժողովրդի քաղաքական և կրոնական կենտրոն: Վաղարշապատ մայրաքաղաքում էին նստում և՛ թագավորը և՛ կաթողիկոսը. այնտեղ էր առաջին մեծ քրիստոնյաների հոգևոր դպրոցը, աշակերտների մեծ խմբերով, որոնք եկել էին Վաղարշապատ՝ «ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհի, յորդեալք և դրդեալք հասանէին ի բաղեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ՝ քանզի յԱյրարատեան գաւառին բղխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Կորյուն):

Մեծ է եղել անցյալում, մեր ժողովրդի մշակույթի պատմության մեջ, մեր հոգևոր ճեմարանների, ընծայարանների, վանքերի դերը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին անցյալում կատարել է իր ժամանակի համար խոշոր մշակութային-լուսավորական գործ իր վանքերով, հոգևոր կենտրոններով, որտեղ մշակվել, զարգացել և ապա պահվել պահպանվել են մեր մշակույթի թանկագին գանձերը՝ մատենագրությունը, արվեստը, գիտությունը, գրչագրությունը:

Մեծ ու պատվավոր է եղել վանքերի, հոգևոր ճեմարանների դերը մեր մշակույթի պատմության մեջ: Վանքերում ծաղկած գիտությունը, մատենագրությունը, արվեստը, արդյունք են մեր ժողովրդի հոգևոր, բարեպաշտական զգացմունքների և հայ հոգևորականության երկնատուր վաստակին: Տաթև, Սանահին, Հաղբատ, Գլաձոր, Կարմիր վանք, Սիս, Աղթամար, Երուսաղեմ, Էջմիածին անունները անցել են վաղուց մեր մշակույթի պատմության մեջ, իբրև հոգևոր մշակույթի կենտրոնները: Խոսելով միայն 19-րդ դարի 70-ական թվականների Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի մասին, պետք է նշել, որ այն շատ կարևոր դեր է կատարել հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակում: Գևորգյան Ճեմարանը ավել է ո՛չ միայն բարձր հոգևորականության հրաշալի, գիտնական մի սերունդ, այլ նաև հայագետների, բանաստեղծների, պատմաբանների, մանկավարժների մի պատկառելի սերունդ:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը ուղղակի շարունակությունն է անցյալի Գևորգյան Ճեմարանի, ավելի հոգևոր մասնագիտական կրթությամբ:

Անցյալում Հայաստանյայց Եկեղեցին, բացի իր զուտ հոգևոր սպասից, կատարել է նաև հասարակական, մշակութային-լուսավորական աշխատանք: Ի պատիվ նրա, պետք է արձանագրել, որ նա իր հասկացած ձևով շատ շնորհընկալ գործ է կատարել մեր մշակույթի զարգացման գործում: Այժմ, հայրենի բարեխնամ կառավարության առկայության դեպքում, նա, սիրահոժար, իր օրինավոր տիրոջն է վերադարձրել ժողովրդական կրթության ողջ պատասխանատվությունը, դրանով շահել են յոկ Հայաստանյայց Եկեղեցին և հայ մշակույթը: Այսօր Սովետական Հայաստանի դպրոցներում սովորում է ավելի քան 300.000 մարդ: Միայն հետպատերազմյան տարիներին մեր ռեսպուբլիկայում կառուցվել է 95 նոր դպրոցական շենք: 1952 թվականին մեր ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունները տվել են զանազան մասնագիտությունների գծով 2.500 շրջանավարտ, այդ թվում 1.080 մանկավարժ, հայկաբան, հայ գրականության, հայ պատմության մասնագետներ:

Այժմ Հոգևոր Ճեմարանն առանձնապես կոչված է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար նոր երիտասարդ հոգևորականություն պատրաստելու պատասխանատու գործին, թե՛ Սովետական Միության և թե՛ արտասահմանյան հայ եկեղեցիների համար: Ա՛յս պիտի կազմի նրա աշխատանքի հիմնական խնդիրը: Ա՛յս է պահանջում և Եկեղեցին: «Կրօնաւորութիւն սուրբ և անարատ առ ի յԱստուծոյ և ի Հօրէ այս է, այցելու լինել որբոց և այրեաց ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ» (Ընդհ. թուղթ Յակոբ առաք., Ա 27), ըստ առաքելական հրահանգի:

Պետք է բարձրացնել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր կոչումն ու նշանակությունը: Այդ նպատակի համար է նաև հիմնված Հոգևոր Ճեմարանը: Վեհափառ Հայրապետի ցանկությունն է այն դարձնել «աղբիւր բաղեալ գիտութեան Աստուծոյ» հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նոր հոգևորականության պատրաստության գործում: Վեհափառ Հայրապետի առաջին

ցանկությունն է՝ համառ ու հետևողական աշխատանքով, անդուլ կերպով աշխատել համալրել հայ հոգևորականության տակավին նոսրացող շարքերը, ավելի կրթված, գիտակից, հոգեպես մարդկանցով, որոնք կարողանան բարձր պահել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հմայքը, պատմական նշանակությունը, հայրենական սուրբ կրոնի բույրը, ազգային մայրենի լեզուն, հայրենասիրության դրոշը:

Վեհափառ Հայրապետի ցանկությունն է. Հոգևոր Ճեմարանի միջոցով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դարձնել մեր օրերում շնչող, կենդանի և անհրաժեշտ մի հաստատություն. հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր նկարագրի, բարոյական բարեմասնությանց զարգացման գործում, ազգային նկարագրի անաղարտ պահպանման բնագավառում:

Այսօր, ավելի քան մի այլ ժամանակ մեր եկեղեցական պատմության մեջ, Ս. Էջմիածինը ունի բոլոր հնարավորությունները դառնալու, իրապես, միակ, ամբողջական, հոգեվոր կենտրոն հայության, իր Հոգևոր Ճեմարանով, մամուլով, հայ հավատացյալ ժողովրդի անհկուն հավատով: Դժբախտություն է, որ այսօր մեր հոգևորականության որոշ տոկոսը դեռևս չունի համապատասխան մասնագիտական հոգևոր դաստիարակություն և կրթություն: Պետք է վճռականապես բարելավել հայ հոգևորականության վիճակը. ստեղծել նյութական, բարոյական, կենցաղային բոլոր պայմանները, հոգևոր ասպարեզը դարձնել հրապուրիչ, առինքնող մի ասպարեզ, ինչպես եղել է անցյալում:

Վեհափառը անշուշտ շատ բան կարող է անել և անում է նոր հոգևորականության քրիստոնեական, հայեցի դաստիարակության գործում: Նա Հոգևոր Ճեմարանը, ուսանողությանը շրջապատել է հայրական գուրգուրանքով: Բայց վարդապետ ու քահանա, բարոյական ու մտավոր պատրաստությամբ երկնքից չեն իջնում միանգամից պատրաստ ու կազմակերպված: Ազգային-եկեղեցական կյանքում ո՛չ մի արժեքավոր ու մնայուն գործ չի կատարվել և չի կարող կատարվել լոկ բարի ցանկություններով: Հարկավոր է մտածել, ազգային-եկեղեցական ընդհանուր շահերից ելնելով: Հարկավոր են վերևից եկած, քաջ մտածված ու կշռված հայրապետական հրամանների տառ առ տառ կատարողներ, որոնք հասկանան իրենց պարտականությունն այնպես, ինչպես Վեհափառն է հասկանում: Հարկավոր է՝ շքեղ երազներին մարմին տալ, ցանկություններն իրականացնել. «Լինիջիք առնելիք Բանին և մի՛ լսելիք միայն համարեսջիք զանձինս», որովհետև, «Հաւատք առանց գործոց մեռեալք են»: Այլ է կամենալը, այլ է կատարելը:

Հոգևոր Ճեմարանը դրամական խոշոր գումարներ պահանջող հաստատություն է: Գևորգ Դ.ի օրով Մայր Աթոռի տարեկան բյուջեի կեսից ավելին ծախսվում էր Ճեմարանի վրա: Այժմ Հոգևոր Ճեմարանի ամբողջ ծախսը հոգում են Մայր Հայրենիքի եկեղեցական թեմերը: Սփյուռքի մեր թեմական առաջնորդները, թեմական խորհուրդները, հովվական տեսչությունները շատ քիչ բացառությամբ հետաքրքրվում են Հոգևոր Ճեմարանի տնտեսական հարցերով: 1945 թվականին, ազգային-եկեղեցական ժողովում, մեր բոլոր թեմերի ներկայացուցիչները հանդիսավոր խոստումներ են տվել Հոգևոր Ճեմարանին օգնելու համար: Ժամանակն է այժմ, որ այդ հանդիսավոր խոստումները գործի վերածվեն և կատարվեն ստանձնված պարտականությունները:

Հոգևոր Ճեմարանի գոյության, հարատևության հարցը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, խղճի, հավատքի հարցն է: Հարկավոր է շատ լրջորեն ու մտածված ձևով մոտենալ այս խիստ կարևոր հարցին: Հայ ժողովուրդը նվիրաբերող ժողովուրդ է. նա իր այրի կնոջ լումաներով անցյալում կանգուն ու պայծառ է պահել Լուսավորչի կանթեղը, մեր բոլոր մշակութային, հոգևոր կենտրոնները իր բարեպաշտական ինքնաբուխ նվիրատվությամբ, ազնվական առատաձեռնությամբ: Անհրաժեշտ է միայն կազմակերպել:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Գևորգ Զ.ի իմաստուն և շրջահայաց ղեկավարությամբ, հոգևոր զարթոնքի մի նոր ու լուսավոր շրջան է ապրում: Հոգևոր Ճեմարանի գոյությունը շատ մեծ երաշխիք է այդ զարթոնքը ապահովելու և ավելի արդյունավետ, լուսաճաճանչ դարձնելու տեսակետից: Այժմ խնդիրն այն է, որ մեր բոլոր եկեղեցական թեմերը հասկանան Հոգևոր Ճեմարանի պատմական դերն ու նշանակությունը Հայաստանյայց Եկեղեցու կյանքում և իրենց սրտի ամենամոտ հաստատությունը դարձնեն այն:

Այդ կլինի մեր թեմերի հայրենասիրության, էջմիածնասիրության անկեղծ զգացմունքների դրական ու շոշափելի արտահայտությունը:

## ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՏԵՐ ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԱՊԱՀՅԱՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻ

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի սույն թվականի հուլիսի համարում հրատարակված է մի հեռագիր, ըստ որում, Կիլիկիայի Կաթողիկոսության միաբանական ժողովը, Անթիլիասում, Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի Կաթողիկոսական տեղապահ է ընտրել ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աճապահյանին:

Միաբանական ժողովի սույն ընտրությունը, ինչպես հաստատվում է Ամենայն Հայոց Հայրապետ Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ-ի պատասխանով, «Դրական է նորա խոհական և համերաշխ գործունեության», համերաշխություն, որը ոչ միայն պատիվ կբերի Կիլիկիայի միաբանության, այլև ուրախությամբ կլցնի Հովսեփյան Գարեգին Ա. բազմերախտ Կաթողիկոսի մահից հետո, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի ճակատագրով մտահոգված հայերի սրտերը: Հուսալի է, որ միաբանական ժողովի ցուցադրած համերաշխ գործունեությունը կշարունակվի, հետագայում ևս, Կիլիկիայի Կաթողիկոսության ենթակա թեմերի բոլոր ժողովներում և այդպիսով, ինչպես նշվել է Ամենայն Հայոց Հայրապետի պատասխանում, միջազգային քաղաքական փոխհարաբերությունների ներկա լարված պայմաններում, ողջ հայ ժողովրդին կապահովվի իր նյութական ու հոգևոր ուժերն ազգի, Հայրենիքի և աշխարհի խաղաղության օգտին միայն ի սպաս դնելու բարենպաստ դրությունը:

Խադ սրբազանը Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ կարգվել էր ի կենդանության երջանկահիշատակ Գարեգին Ա. Հովսեփյան Կաթողիկոսի և նրա ձեռամբ. մի կարգադրություն, որը նշանակում էր, թե հանգուցյալ Վեհափառը վստահություն ուներ իր Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդի հանդեպ:

Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի Կաթողիկոսական ընդհանուր տեղապահ ամենապատիվ Տ. Խադ սրբազան արքեպիսկոպոսը ծնվել է 1883 թվականին, Հայկական Կիլիկիայի երբեմնի կաթողիկոսանիստ քաղաք Սսում: Ինչպես վկայում է իր ազգանունն էլ, նա սերում է դարավոր Աճապահյան տոհմից, որը Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին տվել է 9 օրհնավոր և 3 վիճելի, ընդամենը 12 կաթողիկոսներ:

Ինչպես պարզ ցույց է տալիս «Աճապահյան» կամ «Աջապահյան» բառի իմաստը, այդ տոհմը դարեր շարունակ իրեն է վերապահել պահպանության մենաշնորհը «Սրբոց չորից աջաց (Լուսավորչի, Սիլվեստրոսի, Նիկողայոս Սքանչելագործի և Բարսամ Ճգնավորի) և Երեսուն ութ հազար մարտիրոսաց, որք կան ի պահպանութիւն ազգիս Արամեան, այսօր ի հրաշափառ Սուրբ Աթոռ Մեծին Կիլիկիոյ»:

Դեպքերի դասավորումն այնպես է եղել, որ Կաթողիկոսական փոխանորդ Խադ սրբազանը, սարկավագ ձեռնադրվելուց (1907 թ.) մինչ այժմ միշտ մնացել է կաթողիկոսների հետ միասին, կարծես արդարացնելու համար իր Աջապահյան ազգանունը: Նա վարդապետ է ձեռնադրվել 1909 թվականին Սսում, իսկ ծայրագույն վարդապետությունից եպիսկոպոսական աստիճանի բարձրացվել 1929 թվականին, Վարագա Խաչի տոնի օրը, Հալեպի Քառասուն Մանկունք եկեղեցու մեջ, օծակից ունենալով անցյալ տարի սեպտեմբերին Փարիզում մահացած, Արևմտյան Եվրոպայի հայերի Կաթողիկոսական պատվիրակ երջանկահիշատակ Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանին, այն ժամանակ առաջնորդ Բերիո (Հալեպի)



ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ՝
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ընդարձակ թեմի, որն իր մեջ պարփակում էր նաև Ջեզիրեի և Ալեքսանդրետի սանջակի հայերին:

Գերաշնորհ Տ. Խադ սրբազանը, Կաթողիկոսական փոխանորդի տիտղոսով, առաջնորդական պաշտոն է վարել Հալեպում, Դամասկոսում, Ալեքսանդրետի սանջակում (Հալեպի թեմից բաժանվելուց հետո) և Բեյրութում: Նա եղել է նախագահ կրոնական, դատաստանական և գավառական (թեմական) ժողովների, ինչպես նաև Գաղթականաց տեղավորման հանձնախմբի, որի պաշտոնն էր ղեկավարել 1939 թվականին Ալեքսանդրետի սանջակից Բեյրութ քաղաքն ապաստանած հայ գաղթականների տեղավորման գործը:

Մասնավորապես Ալեքսանդրետի սանջակում փայլեց նա որպես արթուն հովիվ և բարեխնամ թեմակալ, երբ 1936 թվականից սկսյալ քաղաքական անորոշ փոթորիկ պայթեց սիրիական այդ հողամասի գլխին:

Ինչպես հայտնի է, 1921 թվականին Ֆրանսիայի կառավարության և Թյուրքիայի միջև կնքված մի դաշինքի համաձայն, Ալեքսանդրետի սանջակը թեև մաս էր կազմելու Սիրիայի, բայց ունենալու էր տեղական ինքնավարություն, որտեղ թյուրքերը պիտի վայելեին մշակութային ազատություն և թյուրքերենը, արաբերենի և ֆրանսերենի հետ, պիտի լիներ երրորդ պաշտոնական լեզուն:

Մինչև 1936 թվականը, ուրեմն, Ալեքսանդրետի ինքնավար սանջակը նկատվում էր սիրիական հողամասի անբաժանելի մի մասը. սակայն այդ թվականին, երբ Ֆրանսիայի և Սիրիայի միջև համաձայնագիր կնքվեց, մեծապես քաջալերված հիտլերյան ֆաշիզմի օրինակից, որը պատռել էր Վերսալի հաշտության դաշնագիրը և պատերազմի նիզակ էր ճոճում Արևմուտքի և Արևելքի դեմ, Թյուրքիան, օգտագործելով առիթը, պահանջեց սանջակի կցումը: Ազգաժողովը, իբր թե չեզոք պետությունների ներկայացուցիչներից կազմված մի հանձնախումբ ուղարկեց սանջակ, կատարվեց հանրաքվե: Հակառակ այն իրողության, որ հանրաքվեի արդյունքն ի նպաստ Սիրիայի էր, թյուրքական կառավարությունը, 1938 թվականի հուլիսի 5-ին սանջակ մտցրեց մի զորաբաժին, որպես թե միասին պահպանելու բնակչության անդորրությունը: Ըստ Ժնևում կայացած ֆրանք և թյուրք համաձայնության (1937 թ.), կազմվեց մի խըրտվիլակ պետություն՝ «Հաթայ»= Հիթիթ պետություն !! (1938 թ.): Թյուրքիան սրանով էլ չգոհացավ. օգտվելով անգլիական ու ֆրանսիական կառավարությունների տված համաձայնությունից, սանջակը կցվեց Թյուրքիային: Այս անարդար հափշտակության դեմ բողոքող միակ պետությունն եղավ Սովետական Միությունը:

Ալեքսանդրետի սանջակի Թյուրքիային կցվելը (1939 թ.) ծանր հարված եղավ այդ հողամասում ապրող 30.000 հայերի համար, որոնք չցանկանալով նորից ենթարկվել թյուրքական լծին, որոշել էին ընդմիշտ հեռանալ սանջակի հողերից:

Ահա այդ փոթորկոտ տարիներին էր, որ այն ժամանակ Կաթողիկոսական փոխանորդ Տ. Խադ արքեպիսկոպոսը, որպես ժողովրդանվեր հովիվ քաջ, դիմեց ուր որ պետքն էր և ապահովեց սանջակի համարյա ամբողջ հայության ծովի ու ցամաքի ճանապարհով Սիրիա և Լիբանան փոխադրվելը: Նա Ալեքսանդրետ մնաց մինչև 1939 թվականի հոկտեմբերի 7-ը: Երբ դատարկվեցին սանջակի երբեմնի շեն ու բարգավաճ հայ գյուղերն ու ավանները, երբ ֆիզիկական գոյությունը վտանգված հոտը զանգվածային ու մասնակի արտագաղթով ապավինել էր համեմատաբար ապահով երկնքի տակ, քաջ հովիվը՝ Աջապահյան Խադ սրբազանը, ինքն էլ ձեռք առած գաղթականի ցուպը, հեռացավ սանջակից: Նրա ժողովրդանվեր այդ գործունեությունն արժանացավ համազգային գնահատանքի:

Կիլիկիայի Կաթողիկոսության ենթակա հայերի սիրտը Սովետական Հայաստանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ ամրորեն զոդելու աշխատանքում ևս մեծ գործ է կատարել Խադ Սրբազանը: Նա, ներկայումս, արտասահմանում ապրող ու գործող հայ բարձրաստիճան եկեղեցականների շարքում, եղել է այնպիսի անբասիր հոգևորական, որի անունը երբևիցե չի արատավորվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, հայ ժողովրդի և նրա սիրելի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի կենսական շահերին հակառակ նկատված մի որևէ մութ ու վտանգավոր արարքով:

Ներշնչված Սահակ Բ. Խապայանց Կաթողիկոսի, Բաբգեն Ա. Գյուլեսերյան Աթոռակից-Կաթողիկոսի և մանավանդ Գարեգին Ա. Կաթողիկոսի բարձրորեն էջմիածնասեր ոգով Խադ սրբազանը ամենասերտ կապով կապված է Ս. Էջմիածնին և նրա ազգընտիր Հայրապետին՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին:

Համաշխարհային երկրորդ պատերազմի ահավոր թափով շարունակված մեկ պահին Խադ սրբազանը, որպես պատգամավոր Կիլիկիայի Կաթողիկոսության, հարթելով ճանապարհորդական այլազան դժվարությունները, 1942 թվականի ապրիլի 3-ին ինքնա-

տիռով և Բեյրութ–Իրաք–Իրան երթուղով ուղևորվեց դեպի Երևան-Էջմիածին, մասնակցելու համար Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը կատարելու սահմանված համագումարին (առ այդ Սովետական Հայաստանի կառավարության արտոնությունն առնված լինելը հեռագրով հաղորդվել էր արդեն Անթիլիաս՝ հանգուցյալ Սարաջյան Կաթողիկոսի ընտրության օրն իսկ):

Վերադառնալուց հետո համագումարից, որը միաձայնությամբ Կաթողիկոսական տեղակալ էր ընտրել Չորեքչյան արքեպիսկոպոսին (արդի Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոսին) և այդ ընտրության տվել էր ազգընտիր հանգամանք, Սիրիայի և Լիբանանի եկեղեցիների և ակումբների բեմերից Տ. Խադ սրբազանը քարոզեց, հառախոսեց, լայնորեն բացատրեց ժողովրդին Հայաստանում կատարված շինարարական, մշակութային, գյուղատնտեսական, հարտարարվեստական հիանալի վերելքի մասին, Մայր Աթոռի ազգընտիր Տեղակալի ազգօգուտ գործունեության մասին: Նրա բերած Հայաստանի հողը բյուրեղյա սըրվակների մեջ պահպանվեց պանդուխտ հայ տներում որպես սրբազան մասունք: Ավելի ուշ, հայրենադարձության ժամանակ և հաջորդող տարիներին, մենք տեսել ենք նրան՝ Խադ արքեպիսկոպոսին Սովետական Հայաստանի, Էջմիածնի Մայր Աթոռի ու նրա ազգընտիր Գահակալի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետի հանդեպ այնպիսի սիրով ու հավատարմությամբ, ինչպիսին էր երջանկահիշատակ Գարեգին Ա. Հովսեփյան Կաթողիկոսը:

Ցանկալի է, որ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի Կաթողիկոսական ընդհանուր տեղակալ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աջապահյանը արդարացնի միաբանական ժողովի և արտասահմանի հայերի ակնկալությունները:





# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

## ԺՈԼԻՈ-ԿՅՈՒՐԻԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՍԻԱՅԻ ԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻՆ

*ՊԵԿԻՆ, 2 հոկտեմբերի (ՏԱՍՍ).— Սինխուա գործակալությունը հաղորդում է.*

*Խաղաղության Համաշխարհային խորհրդի նախագահ Ժոլիո-Կյուրին ողջույնի ուղերձով դիմել է Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների խաղաղության կողմնակիցների՝ այսօր բացված կոնգրեսին։ Ուղերձի մեջ ասվում է.*

*Թանկագին բարեկամնե՛ր, մենք բոլորս համոզված ենք Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների խաղաղության կողմնակիցների կոնգրեսի կարևորության մեջ։ Դա պատմական նշանակություն ունեցող իրադարձություն է, քանի որ առաջին անգամ երկրագնդի այդ կարևորագույն շրջանի ժողովուրդների ներկայացուցիչները միասին հավաքվել և քննարկում են իրենց սեփական անվտանգությունը, իրենց բարեկեցության ու ապագայի վերաբերող հարցեր։*

*Պաշտպանել խաղաղությունն Ասիայում՝ ահա ձեր խնդիրը։*

*Պաշտպանել խաղաղությունն Ասիայում՝ նշանակում է փրկել միլիոնավոր տղամարդկանց ու կանանց կյանքը. չէ՞ որ հենց Ասիայում 1945 թվականին առաջին անգամ գործադրվեց ատոմային զենքը՝ ամբողջ քաղաքների բնակիչների մասսայական ոչնչացման համար նախատեսված այդ զենքը։*

*Հենց Ասիայում՝ Կորեայում, ինչպես նաև չինական հողում են կատարվում ամենաբարբարոսական օդային հարձակումները՝ նապալմային ռումբերի գործադրումով, և մղվում է բակտերիոլոգիական պատերազմ՝ բոլոր պատերազմներից ամենասոսկալին։*

*Այդ պատերազմի շարունակումն ու ընդլայնումը անհնար դարձնելու համար մենք կարող ենք մեր հետևից տանել ամբողջ աշխարհի մարդկանց՝ նրանց ներկայացնելով այն բանի ապացույցները, թե ինչպիսի մեթոդներով է այդ պատերազմը մղվում։*

*Ես համոզված եմ, որ ձեր կոնգրեսը կօգնի ամրապնդելու խաղաղությունն ամբողջ աշխարհում և հզոր գործոն կհանդիսանա խաղաղության պաշտպանության՝ ժողովուրդների մեծ կոնգրեսի նախապատրաստության համար։*

---

# ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ԵՆ

## ԱՍԻԱՅԻ ԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*ՊԵԿԻՆ, 17 հոկտեմբերի (ՏԱՍՍ).— Սինխուա գործակալությունը հաղորդել է ազգային անկախության հարցի վերաբերյալ այն բանաձևի տեքստը, որը միահամուռ ընդունվել է Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների խաղաղության կողմնակիցների Պեկինի կոնգրեսի եզրափակիչ նիստում։*

*Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների խաղաղության կողմնակիցների կոնգրեսը հաստատ հավատում է, որ խաղաղությունն ու ազգային անկախությունը անբաժանելի են, ասվում է բանաձևում։*

*Կոնգրեսը խորապես անհանգստացած է Ասիայի և Խաղաղ օվկիանոսի շատ երկրների ազգային անկախության հարաճուն սպառնալիքից, այն համարելով սպառնալիք խաղաղությանը։ Մինչդեռ որոշ երկրներ ենթարկվում են օտարերկրյա ռազմական ագ-*

րեսիայի. ուրիշ երկրների ստիպում են մասնակցել ագրեսիային. որոշ երկրներ օկուպացված են օտարերկրյա ագրեսիվ զորքերի կողմից և հարկադրված են իրենց տերիտորիայում տրամադրել ռազմական բազաներ. մի շարք երկրների ներքին գործերն ու նրանց էկոնոմիկան վերահսկում են օտարերկրացիները. որոշ երկրներ դարձել են տնտեսական բլոկադայի ու նրանց ազգային կուլտուրայի ճնշման օբեկտ և այդպիսով զրկվել են ազատությունից՝ պաշտպանելու և զարգացնելու տնտեսական ու կուլտուրական փոխհարաբերությունները այն երկրների հետ, որոնց հետ կցանկանան։

Կոնգրեսը բոլոր այդ զայրացուցիչ գործողությունները դիտում է որպես ոտնձգություն երկրների ազգային անկախության դեմ և սպառնալիք ամբողջ աշխարհի խաղաղության։ Կոնգրեսը գտնում է, որ ազգային անկախության պաշտպանությունը կայուն խաղաղության ապահովման կարևոր պայմանն է։ Կոնգրեսը պաշտպանում է ազգային անկախության բոլոր շարժումների արդարացի պայքարը և խաղաղություն ձեռք բերելու համար առաջարկում է հետևյալ միջոցառումները.

1. Հարգել բոլոր երկրների սուվերեն անկախությունն ու տերիտորիալ ամբողջականությունը և վճռականորեն հանդես գալ ընդդեմ ամեն մի ոտնձգության մի երկրի կողմից մյուս երկրի տերիտորիալ ամբողջականության նկատմամբ կամ մի երկրի միջամտության՝ մյուսի ներքին գործերին։

2. Անհապաղ դադարեցնել այժմ Կորեայում, Վյետնամում, Մալայայում և այլ երկրներում մղվող ագրեսիվ պատերազմները. այդ երկրներից դուրս բերել օտարերկրյա բոլոր զորքերը։

3. Դուրս բերել օկուպացիոն զորքերը Ճապոնիայից և օտարերկրյա զորքերը այլ երկրներից. լիկվիդացնել օտարերկրյա ռազմական այն բազաները, որոնք մի երկիրն ստեղծել է մյուսի տերիտորիայում. դադարեցնել ռեմիլիտարիզացումը և չեղյալ հայտարարել նոր պատերազմի սանձազերծման նպատակին ուղղված ագրեսիվ պայմանագրերը։

4. Հարգել յուրաքանչյուր երկրի՝ իր ազգային ռեսուրսները զարգացնելու և օգտագործելու, ուրիշ երկրների հետ ապրանքների ազատ փոխանակում կատարելու և իր ժողովրդի կենսապայմանների բարելավման համար իր ռեսուրսներն օգտագործելու իրավունքն ու իր խաղաղ էկոնոմիկան զարգացնելու իրավունքը և վճռականորեն հանդես գալ մի երկրի կողմից մյուսի ազգային ռեսուրսները զավթելու դեմ։

5. Պայքարել բլոկադայի և էմբարգոյի դեմ։ Հարգել բոլոր երկրների ու բոլոր ժողովուրդների միջև ազատ առևտուր՝ հիմնված հավասարության և փոխադարձ շահավետության սկզբունքի վրա։

6. Հանդես գալ այն բոլոր գործողությունների դեմ, որոնք նպատակ ունեն հրահրել ռասսայական խտրականություն և սերմանել երկպառակություն ժողովուրդների միջև, ինչպես նաև պատերազմի չարամիտ պրոպագանդայի դեմ, հարգել ժողովուրդների կրոնական դավանանքը, իրենց ազգային կուլտուրան զարգացնելու և միմյանց հետ կուլտուրական հարաբերություններ պահպանելու նրանց ազատությունը։

Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների խաղաղության կողմնակիցների կոնգրեսը բոլոր երկրների ժողովուրդներին կոչ է անում աջակցել միմյանց բոլոր վերոհիշյալ նպատակների իրագործման համար մղվող ընդհանուր պայքարում. կոնգրեսը այդ պայքարում մասնավորապես, ջերմ հույս է դնում Միացյալ Նահանգների, Անգլիայի, Ֆրանսիայի ժողովուրդների աջակցության ու համագործակցության վրա։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊՐԵՍ-ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

ՎԻԵՆՆԱ, 17 հոկտեմբերի (ՏԱՍՍ).— Երեկ Վիեննայում տեղի ունեցավ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամների պրես-կոնֆերենցիա, որին ներկա էին ավստրիական և օտարերկրյա ժուռնալիստներ։ Պրես-կոնֆերենցիայում հանդես եկան Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամներ Իվ Ֆարժ (Ֆրանսիա), Իլյա Էրենբուրգը (ՍՍՌՄ) և Մոնտեգյուն (Անգլիա)։ Նրանք պատմեցին առաջիկա խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի հսկայական նշանակության մասին, կոնգրես, որը կբացվի դեկտեմբերի 12-ին Վիեննայում։ Ելույթ ունեցողները ընդգծեցին, որ կոնգրեսը կնպաստի երկրագնդի բնակչության ամենատարբեր սոցիալական ու հասարակական խավերի համախմբմանը՝ խաղաղության գործի պաշտպանությանն ու ամրապնդմանը։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՄՅՈՒՆԻԿԵՆ

*ՎԻԵՆՆԱ, 17 հոկտեմբերի (ՏԱՍՍ).— Վիեննայում տեղի ունեցավ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի բյուրոյի նիստը, որը նվիրված էր Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստմանը։ Նիստից հետո հրապարակվեց կոմյունիկե, որի մեջ ասվում է.*

*«Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի հրավիրման մասին Խաղաղության Համաշխարհային Խորհրդի կոչը հսկայական հետաքրքրություն է առաջացնում բոլոր երկրներում, արդեն ծնունդ է տալիս շատ նախաձեռնությունների։*

*Ազգերի հարաբերություններում ուժի քաղաքականության վարելը ստեղծել է լարվածություն, որի հետևանքներն ու վտանգը ավելի ու ավելի ակնբախ են։ Այդ իրադրության մեջ հասարակական ամենատարբեր շրջաններ, մասնավորապես քաղաքական, պրոֆմիութենական, կրոնական ու պացիֆիստական խմբեր այն համոզմանն են, որ պետք է ելք գտնվի փակուղուց։*

*Ինչպե՞ս դադարեցնել ներկայումս մղվող պատերազմները։*

*Ինչպե՞ս վերջ դնել սառը պատերազմին։*

*Ինչպե՞ս ապահովել ազգային անկախությունը և երաշխավորել բոլոր երկրների անվտանգությունը։*

*Այս հարցերի պատասխանները կարող են գտնվել միայն դիսկուսիաների միջոցով նրանց միջև, ովքեր իրոք մարմնավորում են ժողովուրդների խաղաղասիրական կամքը։*

*Խաղաղության Համաշխարհային Խորհրդի կողմից հրավիրվող՝ ժողովուրդների կոնգրեսը կհանդիսանա տարբեր ազգերի ու տարբեր ապրելակերպի մարդկանց միջազգային հանդիպում։*

*Կոնգրեսին՝ որպես դելեգատներ, հյուրեր և դիտորդներ մասնակցելը չի նշանակի, որ նրանք պարտավոր են միանալ խաղաղության կողմնակիցների շարժմանը։*

*Ազատ դիսկուսիայում ժողովուրդների կոնգրեսը կձգտի այն բանին, որպեսզի գտնի հրատապ հարցերի խելացի լուծում։*

*Գեթ մեկ հարցում ձեռք բերված համաձայնությունը կհեշտացնի մյուս հարցերի լուծումը և կնպաստի միջազգային մթնոլորտի մեղմացմանը։*

*Ժողովուրդները համատեղ կգտնեն խաղաղության ուղին»։*

---

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՄՅՈՒՆԻԿԵՆ

*ՊՐԱԳԱ, 27 նոյեմբերի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային Խորհրդի քարտուղարությունը նոյեմբերի 26-ին կոմյունիկե է հրապարակել Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստման ընթացքի մասին։ Կոմյունիկեում ասվում է.*

*Խաղաղության պաշտպանության կոնգրեսի հրավիրման մասին Խաղաղության Համաշխարհային Խորհրդի հրապարակած կոչը լսվեց բոլոր երկրներում։ Նա հսկայական հետաքրքրություն առաջացրեց խաղաղասեր բոլոր մարդկանց մեջ։*

*Գիտակցելով, որ իրենք մի ուժ են, որն ընդունակ է ապահովել այդպիսի միջոցառման հաջողությունը, բոլոր երկրների խաղաղության կողմնակիցները բազմապատկում են իրենց ջանքերն ու նախաձեռնությունները, որպեսզի ժողովուրդների կոնգրեսում ներկայացվեն բոլոր նրանք, ովքեր ցանկանում են, որպեսզի գերակշռի բանակցությունների ոգին։*

*Նախապատրաստման կամպանիային ակտիվորեն մասնակցում են աշխարհի այնքան բազմաթիվ ու բազմազան ուժեր, որ դժվար է որոշել նրանց սահմանները։*

*Միացյալ Նահանգներում, Անգլիայում, Բրազիլիայում, Գերմանիայում, Ավստրիում, Հոլանդիայում, Բելգիայում, Դանիայում, Նորվեգիայում, Վենեսուելայում, Պարագվայում և ուրիշ երկրներում ստեղծված են օժանդակող և նախապատրաստող կոմիտեներ։ Ավստրիայում տարբեր հայացքների ու պրոֆեսիաների պատկանող 312 գործիչներ*

ստորագրել են դեկլարացիա, որով պատրաստակամություն են հայտնում դիմավորել դելեգատներին և ողջունում են Կոնգրեսի հրավիրումը Վիեննայում։

Պեկինի կոնգրեսը, որին ներկա էին Ասիայի ու Խաղաղ օվկիանոսի 37 երկրների ներկայացուցիչներ, մեծ ավանդ մուծեց ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստման գործում և բանաձև ընդունեց այն պաշտպանելու մասին։

Գերմանական պրոբլեմի խաղաղ լուծման միջազգային կոնֆերենցիան, որ նորերս տեղի ունեցավ Բեռլինում եվրոպական 15 երկրների ականավոր գործիչների մասնակցությամբ, առանձնացրեց դելեգացիա, որը Կոնգրեսին կներկայացնի կոնֆերենցիայի ընդունած բանաձևերը։ Դելեգացիայի անդամները Կոնգրեսի աշխատանքին կմասնակցեն որպես դիտորդներ։

Անգլիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի Կանադայի, Բրազիլիայի, Չիլիի, Ավստրալիայի, Բելգիայի բազմաթիվ առողջապահական կազմակերպություններ նշանակալից ավանդ կմուծեն խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստման գործում։ Նրանցից շատերն արդեն ընտրել են իրենց ներկայացուցիչները։ Խաղաղության պաշտպանության հյուսիսային երկրների բանվորների՝ նորերս կայացած կոնֆերենցիայում, որին մասնակցեցին սկանդինավյան չորս երկրներից ժամանած 434 դելեգատ, ընտրվեց Վիեննայի Կոնգրեսի՝ ինը մարդուց բաղկացած դելեգացիա։

Այդ օրինակները վկայում են, որ բոլոր երկրների բանվորները, որոնք միավորված են զանազան պրոֆմիություններում, ավելի ու ավելի ակտիվորեն են մասնակցում ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստմանը։

Արդեն հայտնի դելեգացիաների կազմը ցույց է տալիս, որ Կոնգրեսում ներկայացված են ռնակչության գյուղացիական ամենալայն խավերը։

Գիտության շատ գործիչներ և մտավոր աշխատանքի ուրիշ աշխատողներ հայտարարում են խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսին աջակցելու մասին։

Շատ երկրների՝ Իտալիայի, Գերմանիայի, Հնդկաստանի, Իրանի, Եգիպտոսի, Արգենտինայի, Մեքսիկայի, Աֆրիկայի քաղաքական շրջաններում և, մասնավորապես, պառլամենտների դեպուտատների մեջ, ականավոր գործիչները հայտարարում են, որ իրենք ցանկանում են մասնակցել Կոնգրեսին կամ հրապարակորեն իրենց պաշտպանություն են հայտնում Կոնգրեսին։

Բրազիլիայում և Չիլիում բոլոր պարտիաների ազդեցիկ գործիչները պաշտպանում են ժողովուրդների կոնգրեսի գաղափարը։ Վիեննայի կոնգրեսի համար Անգլիայում ընտրված դելեգատների կեսից ավելին լեյբորիստական պարտիայի անդամներ են։

Ժողովուրդների կոնգրեսը մեծ հետաքրքրություն է առաջացնում շատ երկրների արդյունաբերական և առևտրական շրջաններում, առանձնապես Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, Բելգիայում, Բրազիլիայում, Արգենտինայում, Ավստրալիայում։ Զուտ տնտեսական հարցերի նվիրված կոնֆերենցիաները ընտրել են կոնգրեսի իրենց ներկայացուցիչներ։

Զանազան եկեղեցիներ և կրոնական ղեկավարներ աջակցություն են ցույց տալիս ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստմանը։

Ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստման գործում կանայք բացառիկ մասնակցություն են ունենում և հանդես են գալիս զանազան այնպիսի նախաձեռնություններով, ինչպիսիք են «Մոր օրը» Ֆրանսիայում, «Հանուն մեր որդիների փրկության» կամպանիան Միացյալ Նահանգներում, անգլիական կանանց դիմումը, չեխոսլովակյան կանանց ուղերձը ամերիկյան կանանց։

Կոնգրեսին կմասնակցեն կանանց շատ կազմակերպություններ, ինչպես օրինակ Կանանց միջազգային դեմոկրատական ֆեդերացիան, խաղաղության և ազատության պայքարի կանանց միջազգային լիգան, «Գիլդ դե կոոպերատրիս» ազգային կազմակերպությունը։

Ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստման ուղղությամբ լայն գործունեություն է ծավալել երիտասարդությունը։ Երիտասարդական ֆեստիվալը, որը տանում է ամբողջ աշխարհի երիտասարդության ուղերձը, ներկայումս մոտենում է Վիեննային։

Զանազան երկրներում՝ ՍՍՌՄ-ում, Չի-

նաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում, Բոլիվիայում, Ճապոնիայում, Բուլղարիայում, Արգենտինայում, Ալբանիայում, Անգլիայում, Կանադայում և այլն, անց են կացվել կամ անց են կացվում տեղական շրջանային ժողովներ և ազգային կոնգրեսներ, որտեղ ընտրվում են ժողովուրդների կոնգրեսի դելեգատներ։

Մինչև այսօր, մեր ստացած տեղեկություններով, 70 երկրներից ընտրված դելեգատների թիվը, որոնք արդեն գտնվում են Վիեննայի ճանապարհին, 1.500-ից ավելի է։ Միաժամանակ միջազգային 20 կազմակերպություններ հայտարարել են, որ իրենք կոնգրես կուղարկեն իրենց ներկայացուցիչները։ Այդ առաջին տվյալները վկայում են, որ խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստումը բացառիկ թափի է հասել։ Դրանք խոսում են խաղաղությունը պաշտպանելու ամբողջ աշխարհի ժողովուրդների անսասան կամքի մասին։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԼԵՆՈՒՄԸ

Նոյեմբերի 27-ին Երևանում կայացավ խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի պլենումը։ Պլենումը լսեց խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ ընկ. Վ. Հ. Համբարձումյանի հաղորդումը խաղաղության պաշտպանության ժողովուրդների առաջիկա կոնգրեսի մասին։ Մտքերի փոխանակությանը ելույթ ունեցան ընկ. ընկ. Կ. Պետրոսյանը, Մ. Պետրոսյանը, Դ. Դեմիրճյանը։

Պլենումը ընտրեց խաղաղության կողմնակիցների Համամիութենական չորրորդ կոնֆերենցիայի 21 դելեգատ։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

1952 թվականի դեկտեմբերի 2—4-ը Մոսկվայում, Միությունների Տան Սյունազարդ դահլիճում տեղի ունեցավ խաղաղության Կողմնակիցների Համամիութենական չորրորդ կոնֆերենցիան։

Կոնֆերենցիան ընդունեց հետևյալ օրակարգը.

1. «Սովետական ժողովուրդը խաղաղությունն ամրապնդելու և պահպանելու համար մղվող պայքարում» զեկուցումը։

2. Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի ընտրությունները։

3. Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի դելեգացիայի ընտրությունները։

4. Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսում սովետական դելեգացիային տրվող Նակազի հաստատումը։

Ակադեմիկոս Ի. Գ. Պետրովսկու օրակարգի առաջին կետի շուրջ զեկուցումից հետո, ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն։ Սովետական Միության բազմազգ ժողովուրդների դելեգատները նիստերում հայտնում էին իրենց ներկայացրած ժողովուրդների բուռն ցանկությունները խաղաղության պահպանման համար և նրանց անխորտակելի կամքը՝ խաղաղության պաշտպանության գործում։

Կոնֆերենցիան, իր վերջին նիստում, ընտրեց խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտե, որի անդամ է ընտրվել Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. Կաթողիկոսը։ Միահամուռ կերպով ընտրվեց նաև դեկտեմբերի 12-ին Վիեննայում բացվելիք խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի սովետական դելեգացիա։ Մեծ խանդավառությամբ հաստատվեց խաղաղության պաշտպանության սովետական դելեգացիային տրվող Նակազը։

# ՆԱԿԱԶ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵԼԵԳԱՏՆԵՐԻՆ

Մենք, խաղաղության կողմնակիցների Համամիութենական չորրորդ կոնֆերենցիայի դելեգատներս, որ հավաքվել ենք խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի նախօրյակին, ողջունում ենք այդ կոնգրեսի հրավիրումը և վստահություն ենք հայտնում, որ կոնգրեսում ժողովուրդների ներկայացուցիչների հանդիպումը կծառայի խաղաղության պահպանման և ամրապնդման գործին։

Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսը գումարվում է համաշխարհային նոր պատերազմի ուժեղացող սպառնալիքի պայմաններում։ Երրորդ տարին է, ինչ իմպերիալիստական ագրեսորները ՄԱԿ-ի դրոշակի ներքո բարբարոսական պատերազմ են մղում կորեական ժողովրդի դեմ, ձախողում զինադադարի կնքումը Կորեայում։ Այդ պատերազմում ինտերվենտները գործադրում են մարդկանց ոչնչացման ամենատմարդի միջոցներ, այդ թվում՝ բակտերիոլոգիական զենք։ Շարունակվում է զինված ինտերվենցիան Վյետնամում, Մալայայում և մի շարք ուրիշ երկրներում։ Իմպերիալիստական երկրներում տեղի է ունենում սպառազինությունների կատաղի մրցավազք։ Արագ տեմպերով անց է կացվում Արևմտյան Գերմանիայի ու Ճապոնիայի վերառազմականացումը և դրանք վեր են ածվում նոր համաշխարհային պատերազմի պլացդարմի։ Իմպերիալիստները ոտնակոխ են անում ժողովուրդների ազգային սուվերենությունը, խախտում պետությունների տերիտորիալ ամբողջականությունը, ստեղծում ռազմական բազաներ և կազմակերպում ագրեսիվ բլոկներ ընդդեմ խաղաղասեր պետությունների։

Միայն բոլոր ժողովուրդների վճռական պայքարը կարող է ձախողել պատերազմի հրձիգների հանցավոր պլանները և պաշտպանել խաղաղության գործը։ Ժողովուրդները պատերազմ չեն ցանկանում։ Նրանք կողմնակից են խաղաղությանը և ուժեղացնում են իրենց հակահարվածը պատերազմի հրձիգներին։ Ավելի ու ավելի լայնորեն է ծավալվում խաղաղության պաշտպանության համաժողովրդական դեմոկրատական շարժումը։ Հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումի տակ դրված ավելի քան 600.000.000 ստորագրությունները հանդիսանում են խաղաղության գործը պաշտպանելու ժողովուրդների պատրաստակամության վկայությունը։ Խաղաղության համար մղվող պայքարում ժողովրդական ուժերի հզոր ցույցը հանդիսացավ Ասիայի ու Խաղաղ օվկիանոսի երկրների խաղաղության կողմնակիցների կոնգրեսը, որը այդ երկրների 1.600.000.000 բնակչության անունից հայտնեց նրանց վճռականությունը՝ պաշտպանել խաղաղության և ժողովուրդների անվտանգության գործը։

Պատերազմի հրձիգները ստիպված են հաշվի առնելու ժողովուրդների խաղաղության կամքը։ Ուստի նրանք իրենց ագրեսիվ դիտավորությունները քողարկում են իրենց իբր խաղաղասիրական մտադրությունների վերաբերյալ երկերեսանի հայտարարություններով, հույս ունենալով խաբել ժողովուրդներին և նրանց ներքաշել պատերազմի մեջ։

Բոլոր երկրների խաղաղության կողմնակիցները խաղաղության և միջազգային անվտանգության համար իրենց ազնիվ պայքարում կարող են հաստատապես հուսալ, որ սովետական ժողովուրդը ամեն կերպ կաջակցի նրանց։

Մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը ասել է. «Իսկ ինչ վերաբերում է Սովետական Միությանը, ապա նրա շահերը առհասարակ անբաժանելի են ամբողջ աշխարհի խաղաղության գործից»։

Սովետական մարդկանց ջանքերը ուղղված են խաղաղ շինարարության նպատակների, խաղաղ արդյունաբերության ծավալմանը, բնության վերափոխման ստալինյան պլանի իրագործմանը։

Խաղաղության գործը պաշտպանելու իր պատրաստակամությունը սովետական ժողովուրդը ցուցադրեց միահամուռ կերպով պաշտպանելով հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումը, որի տակ ստորագրել է Սովետական Միության ամբողջ չափահաս բնակչությունը։

Արտահայտելով սովետական բոլոր մարդկանց կամքը, խաղաղության կողմնակիցների Համամիութենական չորրորդ կոնֆերենցիան խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի սովետական դելեգատներին հանձնարարում է.

1. Հայտարարել խաղաղության գործը պաշտպանելու սովետական ժողովրդի վճռականության մասին և նրա պատրաստակամության մասին՝ համագործակցելու բոլոր նրանց հետ, ովքեր անկեղծորեն ձգտում են պատերազմի կանխմանը, ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, երկրների միջև տնտեսական ու կուլտուրական կապերի ընդլայնմանը։

*2. Հավանություն տալ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի գործունեությանը, որն ուղղված է խաղաղության կողմնակիցների շարժման զարգացմանն ու ամրապնդմանը, որ կարևոր դեր է խաղում պատերազմը կանխելու համար մղվող պայքարում։*

*3. Պաշտպանել ժողովուրդների ազգային անկախության ու սուվերենության պաշտպանության պահանջը՝ որպես խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու կարևորագույն պայմաններից մեկը։ Արտահայտվել այն բանի օգտին, որպեսզի բոլոր ժողովուրդների համար ապահովվեն անվտանգություն և նրանց տերիտորիաների անձեռնմխելիություն, յուրաքանչյուր ժողովրդի կողմից իր ապրելակերպի ազատ ընտրություն և ժողովուրդների միջև տնտեսական ու կուլտուրական լայն փոխանակման իրականացում՝ իրավահավասար հիմքի վրա։*

*4. Պահանջել պատերազմական ագրեսիայի դադարեցումը Կորեայում, զինադադարի շուտափույթ կնքումը՝ միջազգային համաձայնագրերը պահպանելու և Կորեայից օտարերկրյա բոլոր զորքերը դուրս բերելու հիման վրա։*

*5. Վճռականապես դատապարտել բակտերիոլոգիական զենքի գործադրումը ամերիկյան ագրեսորների կողմից՝ որպես մարդկանց մասսայական ոչնչացման հրեշավոր միջոց։ Պահանջել բակտերիոլոգիական, ատոմային, քիմիական և մարդկանց մասսայական ոչնչացման ուրիշ միջոցների արգելումը և այդ միջոցների գործադրման մեջ մեղավոր անձանց ենթարկել խիստ պատասխանատվության։*

*6. Պնդել, որպեսզի հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ ժողովուրդների միահամուռ պահանջը իրագործվի, նկատի ունենալով, որ Խաղաղության Պակտի կնքումը պայմաններ կստեղծի ժողովուրդների միջև երկարատև խաղաղությունն ապահովելու, սպառազինությունները կրճատելու և միջազգային բոլոր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար։*

*Մենք, Խաղաղության կողմնակիցների Համամիութենական չորրորդ կոնֆերենցիայի դելեգատներս, սովետական բոլոր մարդկանց, բոլոր երկրների խաղաղության բոլոր բարեկամներին կոչ ենք անում ուժեղացնել պայքարը ի պաշտպանություն խաղաղության, աննահանջ վերպով մերկացնել պատերազմի հրձիգների՝ ամբողջ մարդկության ամենաոխերիմ թշնամիների մեքենայությունները։*

*Կեցցե՛ խաղաղությունը ժողովուրդների միջև։*

*Կորչե՛ն պատերազմի հրձիգները։*

Արտատպված «Սովետական Հայաստանի»
1952 թվականի դեկտեմբերի 7-ի №-ից

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

*Դեկտեմբերի 5-ին տեղի ունեցավ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական չորրորդ կոնֆերենցիայի ընտրած՝ Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումը։*

*Պլենումը քննարկեց կազմակերպական հարցեր։*

*Պլենումն ընտրեց Կոմիտեի Նախագահություն հետևյալ կազմով. ընկ. ընկ. Ն. Ս. Տիխոնով, Ա. Ա. Ֆադեև, Ա. Ն. Նեսմեյանով, Բ. Դ. Գրեկով, Ի. Գ. Էրենբուրգ, Ա. Ե. Կորնեյչուկ, Կ. Մ. Սիմոնով, Ն. Վ. Պոպովա, Ս. Ա. Գերասիմով, Զ. Պ. Տումանովա, Մ. Ի. Կոտով, Ա. Ա. Սուրկով, Վ. Ի. Կոչեմասով։*

*Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նախագահ ընտրվեց Ն. Ս. Տիխոնովը։*

*Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նախագահի տեղակալներ ընտրվեցին ընկ. ընկ. Բ. Դ. Գրեկովը, Ի. Գ. Էրենբուրգը, Զ. Պ. Տումանովան, Ս. Ա. Գերասիմովը։*

*Կոմիտեի պատասխանատու քարտուղար է ընտրված ընկ. Մ. Ի. Կոտովը։*






ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

*Հայ Եկեղեցու պատմության ամենակարկառուն եկեղեցական դեմքերից մեկն է Գևորգ Զ. ուսումնասեր Հայրապետը։ Մեծանուն Հայրապետի ազգային-եկեղեցական գործունեությունը դարակազմիկ է բացել մեր եկեղեցական պատմության մեջ։ Շնորհազարդ և բազմավաստակ Գևորգ Զ.ի հայրապետության օրով սկզբնավորվում է Հայաստանյայց Եկեղեցու համար մեր ազգային-եկեղեցական պատմության բախտորոշ, լուսավոր շրջանը։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին այսօր Մայր Հայրենիքում հոգևոր, մշակութային զարթոնքի մի պայծառ շրջան է բոլորում. Նրան բախտ վիճակվեց իր հայրապետական գահի վրա տեսնել շրջահայաց, եկեղեցանվեր և հայրենասեր այնպիսի քաջ հովվի, որպիսին է ներկա Վեհափառ Հայրապետը։*

*Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ.ը Ամենայն Հայոց Հայրապետ ընտրվեց այնպիսի բարդ ու պատասխանատու շրջանում, երբ Հայոց Հայրապետության առջև ծառացել էին բազմաթիվ լուրջ ու հրատապ խնդիրներ՝ Մայր Աթոռի տնտեսական և մշակութային անշուք վիճակի վերականգնումը, Հոգևոր Ճեմարանի վերաբացումը, Մայր Տաճարի վերանորոգությունը, Սփյուռքի և Մայր Հայրենիքի կապի ամրապնդումը, թեմերի կազմակերպումը, եկեղեցական բարեկարգությունը և այլն։ Այս մեծ և պատասխանատու ձեռնարկությունները ի կատար ածելու համար, պահանջվում էին ո՛չ միայն տաղանդ և ժամանակ, այլև՝ աշխատանքի մեծ եռանդ, անսահման նվիրվածություն և տոկունություն, նյութական, բարոյական պայմաններ։ Ազգընտիր Հայրապետը կարողացավ լուծել այդ դժվարությունները և ապահովեց մեր Եկեղեցու գոյության համար անհրաժեշտ բոլոր պայմանները։ Մեր Եկեղեցին անհամեմատ կարճ ժամանակամիջոցում, հայրենասեր Հայրապետի ամենօրյա առաջնորդությամբ և ցուցումներով սկսեց ամրապնդվել, բարգավաճել, իր բովանդակ գործունեությունը նվիրելով հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր սպասին։*

Վեհափառ Հայրապետի սկզբնական շրջանի անհրաժեշտ ձեռնարկումներից մեկը հանդիսացավ Հոգևոր Ճեմարանի վերաբացումը։ Հոգևոր Ճեմարանի բացումը մեծագույն նշանակություն ուներ Հայ Եկեղեցու համար կրթված և հայրենասեր եկեղեցական նոր սերունդ պատրաստելու գործում։

1945 թվականին, իր կաթողիկոսության հենց առաջին տարին, Վեհափառ Հայրապետը վերաբացեց Ճեմարանը։ Բայց դա դեռ գործի սկիզբն էր։ Վեհափառ Հայրապետը կամենում էր նորաբաց Ճեմարանը հասցնել իր կոչման և պարտականության բարձրությանը, լավագույնս ծառայելու համար Հայ Եկեղեցուն։ «Պիտի կարողանա՞մ արդյոք նորաբաց Հոգևոր Ճեմարանը իր բարձրության հասցնել՝ մատակարարելով Հայ Եկեղեցուն արժանավոր հովիվներ»,— գրել է նա իր անդրանիկ կոնդակի մեջ։

Առաջադրած այդ շատ պատասխանատու նպատակին հասնելու համար, Վեհափառը նորաբաց Ճեմարանը կարողացավ ապահովել դոկտորական, պրոֆեսորական և դոցենտական կոչում ստացած որակյալ դասախոսներով։ Նոր Ճեմարանը նախկինի պես, ուներ երկու բաժին՝ դասարանական և լսարանական (յուրաքանչյուրը երեք տարով)։ Հայագիտական և ընդհանուր պատմաբանասիրական առարկաներից բացի, Ճեմարանում ուսման առարկաների ծանրության կենտրոնը կրոնական-աստվածաբանական առարկաներն էին՝ մեկնություն Հին և Նոր Կտակարանաց, Ընդհանուր Եկեղեցու պատմություն, Հայ Եկեղեցու պատմություն, Հիսուսի կյանք, մեկնություն Ս. Գրոց, քարոզչական աստվածաբանություն, հովվական աստվածաբանություն, ընդհանուր աստվածաբանություն, քարոզախոսություն և այլն։

Արժանավոր եկեղեցականություն պատրաստելը եղել է Հոգևոր Ճեմարանի գլխավոր նպատակը։ Այս մասին ակնհայտ կերպով ընդգծվել է Ճեմարանի նախապատրաստման որոշումներում. «Ներկայիս Ճեմարանը կոչված պիտի լինի, առաջին հերթին, հոգևոր կադրեր պատրաստել թե՛ Միության և թե՛ արտասահմանյան եկեղեցիների համար։ Այս պետք կազմի նրա աշխատանքի հիմնական խնդիրը։ Սակայն, իհարկե, չի կարելի Ճեմարանը վերաբանալով սահմանափակվել միայն դրանով։ Մեր կարծիքով, Ճեմարանը պիտի զբաղվի նաև Հայ եկեղեցական անցյալ կյանքի ուսումնասիրությամբ, քանի որ մեր անցյալի եկեղեցական կյանքի հետ են կապված եղել ոչ պակաս պատմական հետաքրքրական և ուսումնասիրության արժանի խնդիրներ» («Էջմիածին», 1945 թ., հունվար-փետրվար, էջ 43)։

Կրոնական-աստվածաբանական առարկաների կողքին Ճեմարանում մտցված են հայագիտական առարկաներ, որովհետև նրանց հետ է առնչված մեր եկեղեցական պատմության մի շարք խնդիրների լուծումը, որովհետև նրանք անհրաժեշտ են բարձրագույն կրթություն ստացած անձանց համար։ Ներկա ճեմարանավարտը պետք է մասնագիտականանա հատկապես մեր եկեղեցական և հոգևոր մշակույթի ասպարիզում։ Մեր եկեղեցական անցյալ կյանքի ուսումնասիրության գծով կատարվել են լուրջ գիտական աշխատանքներ, բայց չի կարելի սպառված համարել մեր եկեղեցական պատմության լուսաբանությունն ու ուսումնասիրությունը։ Հոգևոր Ճեմարանը պիտի տա այդ հարցերի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետ-եկեղեցականներ։

Այսպիսով, Նոր Ճեմարանի առջև դրված էին լուրջ և պատասխանատու խնդիրներ։ Հայ հավատացյալ ժողովուրդը մեծ հույսեր էր կապել նրա հետ և ուներ մեծ ակնկալություններ։ Հարկավոր էր արդարացնել այդ հույսերը։ Այդ իսկ տեսակետից, նորաբաց Հոգևոր Ճեմարանը գտնվել է Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում։ Մեծանուն Հայրապետը, չնայած իր պատկառելի ծերությանը, անձամբ ներկա է եղել Ճեմարանի բոլոր քննություններին, հանդես է եկել իր հայրական խրատիչ ելույթներով։

Ճեմարանի սաների զարգացման համար ստեղծվել են բոլոր հնարավոր պայմանները. հաճախակի եղել են գիտական հավաքույթներ, որտեղ ուսանողները հանդես են եկել իրենց ինքնագիր շարադրություններով այս կամ այն հարցի մասին։ Նրանք բովանդակալից զեկուցումներով նշանավորել են եկեղեցական և ազգային տոները, մեծ ուրախություն պատճառելով Վեհափառին։

Վեհափառ Հայրապետը հայրական ամենօրյա հոգատարություն է ցուցաբերել ուսանողների նյութական և կենցաղային բոլոր կարիքների ուղղությամբ։ Բազմիցս այցելել է ուսանողների ննջարանները, հետաքրքրվել նրանց առօրյայով ու կենցաղով, եղել է ուսանողական ճաշարանում, հետաքրքրվել է ճաշերի որակով։

Ճեմարանն այժմ ունի մասնավոր բժիշկ և բուժսպասարկման կայան։ Ամեն տարի, տարեվերջի քննություններից հետո, Վեհափառը ուսանողներին ուղարկել է Սովետական Հայաստանի և Միության հայ եկեղեցական թեմերը՝ հանգստանալու և կազդուրվելու։



Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի սարկավագները

Վեհափառը եղել է մեր հայրն ու ուսուցիչը։ Բազմաթիվ անգամներ կանչելով մեզ իր մոտ, խոսել է մեր մեծ պարտավորությունների ու հետագա անելիքների մասին, ամեն կերպ աշխատել արմատավորել մեր կրոնական համոզմունքը, քաջ գիտակ դարձնել ավետարանի վսեմ սկզբունքների ճիշտ ըմբռնմանը, ցույց տալով, որ, առանց այդ, հնարավոր չէ կատարել մեր ժողովրդի կրոնական դաստիարակության գործը, որը մեծ նշանակություն ունի նրա հոգևոր զորացման ու կուլտուրական բարձրացման համար։ Խոսելով ներկա հայ հոգևորականի մեծ դերի մասին Ճեմարանի վերաբացման առթիվ, Վեհափառ Հայրապետը հայտնել է հետևյալը. «Այժմ վստահ կարող ենք լինել, Ս. Էջմիածնի Ճեմարանը, Ս. Երուսաղեմի, Տանն Կիլիկիո ընծայարանների հետ, ըստ ամենայնի ի վիճակի կլինեն հայ ժողովրդի հոգևոր եկեղեցական կարիքները հոգալու և նորա կրոնական դաստիարակության գործը բարձր մակարդակի վրա դնելու, որ այնքան կարևոր է հայ ժողովրդի հոգևոր զարգացման, կուլտուրական բարձրացման և ազգային ինքնաճանաչության զարգացման համար» («Էջմիածին», 1945 թ., սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 11)։

Վեհափառի անցած պատմական փառավոր ուղին, ժողովրդանվեր գործունեությունը, բովանդակ կյանքը, մեզ, ուսանողներիս համար, պայծառ ու կենդանի օրինակ է։ Վեհափառ Հայրապետը՝ իր կյանքի օրինակով, յուրաքանչյուր Ճեմարանցու համար գործունեության, նվիրման, աշխատանքի մտատիպար է։ Մենք բոլորս ձգտում ենք ընթանալ այն ճանապարհով, ծառայության այն ուղիով, որով ընթացել են մեր պատմության եկեղեցական մեծ դեմքերը, որով ընթացել և այժմ էլ ընթանում է մեր եռամեծ վարդապետը, սիրելի ու հոգևոր ծնողը։

Սիրելի Հայրապետը եղել է ոչ միայն մեր հայրն ու ուսուցիչը, այլև մեր մեծ դաստիարակը։ Իր բոցաշունչ խոսքերով նա մեր մեջ վառել է եկեղեցասիրության ու հայրենասիրության կրակը, աշխատասիրության ոգին, այն ամեն առաքինի ու ազնիվ հատկությունները, որոնք հատուկ են իրեն, հայ արժանավոր հոգևորականին։ Իր հարազատ որդիների նման փայփայելով ու գուրգուրելով մեզ, սիրելի Հայրապետը չի խնայել մատնացույց անելու մեր թերությունները ու սխալները։

Մեզ հետ ունեցած իր մտերիմ զրույցների և խոսակցությունների ժամանակ, սիրելի Հայրապետը մատնանշել է միշտ, որ մեր ընտրած ասպարեզը պահանջում է համառ աշխատանք, նվիրվածություն ու անձնվիրություն։ Ծուլությունը մահացու մեղք է և այն չի կարող տեղ գտնել ներկա միաբանության մեջ։ Միևնույն նպատակը և իրար նկատմամբ ջերմ սերը պետք է համախմբեն միաբաններիս շաղկապող օղակը։ Մենք մեր կյանքով, եղբայրական սիրով, անբասիր կենցաղով օրինակ պետք է հանդիսանանք ժողովրդին, մեր ապրած կյանքը պայծառ քարոզ պետք է լինի մեր հավատին և սկզբունքներին։ Մենք պիտի դառնանք այնպիսի հոգևորականներ, որ խորապես վայելենք մեր ժողովրդի սերն ու համակրանքը. այդ է Վեհափառի ցանկությունն էր։ Մի անգամ խոսակցության ժամանակ նա մեզ ասաց. «Ես ձեզանից այնպիսի լուսամիտ եկեղեցականներ պիտի պատրաստեմ, որ օրինակելի լինեք ինչպես ձեր վարքով ու բարքով, այնպես և իմաստությամբ»։ Վեհափառ Հայրապետը արդեն ճաշակել է իր իսկ ձեռքով տնկած այգու առաջին քաղցր պտուղները. Նորաբաց Հոգևոր Ճեմարանը տվել է իր երկրորդ շրջանավարտները։

Տարեցտարի համալրվում է Էջմիածնի միաբանության թիվը երիտասարդ միաբաններով։ Վեհափառի անմիջական հսկողության տակ դաստիարակված երիտասարդ հոգևորականները շուտով աշխատանքի կանգնեն մեր թեմերում և ստույգ կկատարեն իրենց ծառայությունները իրենց սիրելի ժողովրդին, իրենց հարազատ Հայրենիքին։ Սիրելի Հայրապետը շատ ճիգեր ունի։ Չնայած իր պատկառելի հասակին, նա անխոնջ աշխատում է։

Թո՛ղ Ամենաողորմ Տերը լսի հավատացյալներիս օրհնությունները ու մաղթանքները և ուժ ու կարողություն շնորհի մեր մեծ Հայրապետին, ամեն։

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ

# ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ



*Վեհափառ Հայրապետի հատուկ խնամքի և ուշադրության առարկան է եղել միշտ էլ Ս. Էջմիածնի միաբանությունը։ Վեհափառի ամենամեծ ցանկությունն է Էջմիածնի միաբանության շարքերը խտացնել նոր և զարգացած եկեղեցականներով։ Վեհափառի այդ ակնկալությունն իրագործելու է կոչված Հոգևոր Ճեմարանը՝ իր հասցրած երիտասարդ հոգևորականներով։ Հոգևոր Ճեմարանը մեր օրերում ազգային-եկեղեցական դաստիարակության վառ օջախներից մեկն է։ Հոգևոր Ճեմարանը տվել է արդեն կրթված, ընդունակ, կայուն նկարագրի տեր երիտասարդ սարկավագներ, Վեհափառի մասնավոր ընտրությամբ։*

*Վերջերս Էջմիածնի միաբանության շարքերում ավելացավ մի նոր սարկավագ՝ Պերճ Գետիկյանը։ Նորընծա սարկավագն ավարտելով Հոգևոր Ճեմարանի դասընթացը, զգացել է կոչում՝ հոգևոր ասպարեզում ծառայելու։ Իր այդ ցանկությունը նա փոխանցրած արտահայտեց Վեհափառ Հայրապետի անունով գրած հետևյալ դիմումի մեջ.*

*«Վեհափառ Տե՛ր.*

*Ստանալով հոգևոր կրթություն Ճեմարանում և ավարտելով նրա վեցամյա դասընթացը, ու միաժամանակ նվիրված, գիտակից եկեղեցականների կյանքը, գործունեությունն իբր օրինակ ունենալով, ես եկա այն եզրակացության, որ կարող եմ մեր ժողովրդին լավագույնս ծառայել, ընտրելով հոգևոր ասպարեզը։*

*Խոստանալով, որ Ձեր իմ վրա դրած հույսերը ի գերև չեմ հանի, խնդրում եմ ինձ շնորհել սարկավագության կոչումը»։*

*Գետիկյանն իր համեստությամբ, աշխատասիրությամբ և եկեղեցասիրությամբ արժանացավ Վեհափառի բարձր հավանությանն ու շնորհին. Էջմիածնի կաթողիկեում, կիրակի, նոյեմբերի 2-ին, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվեց սարկավագ։*

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ԱՆԱՊԱՏ ԿԱՄ ՆՈՐ-ՎԱՐԱԳ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

### ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Ինչպես տեսանք, Անապատի կամ Նոր-Վարագ վանքի վիմագրությունը կարևոր և պատմական նշանակություն ունի։*

*Սրան կից հրատարակվող արձանագրությունները 43 հատ են, որոնցից վերջին երկուսը մեզ անհայտ, սակայն բերվում են հուշարձանների այդ խմբի վիմագրությունը մի տեղում լրացնելու նպատակով։ Հիշյալ 43 արձանագրություններից առաջին անգամ հրատարակվում են $31^1/_2$ հատը (ձախից աստղանիշով նշվածները)։*

*Հրատարակված են, Շահխաթունյանի կողմից՝ №№ 19 և 20, Ջալալյանի կողմից՝ №№ 4 և 20, Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի կողմից՝ №№ 12 (առաջին մասը), 19, 20 և 42, Կ. Ղաֆադարյանի կողմից՝ №№ 3, 4, 5, 11, 18, 19, 20, 37, 38 և 43։*

*Հին բանասերների վերծանությունները մեծ մասով ճիշտ չեն. բացառություն է կազմում Ջալալյանի հրատարակությամբ մեր № 20 արձանագրությունը, որը վերցված է ոչ թե հուշարձանից, այլ մի ձեռագրից։ Դրա մասին նա իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայք» աշխատության Ա հատորի 160 էջում գրում է այսպես. «Յաղագս այսր վանաց այսպէս պատմի ի միում հին ձեռագրի, զոր տեսի յԱրցախ գաւառի, ուր պատմիչն առեալ ինքեան հիմն զվէպն գրեալ ի վերայ տփոյ Սուրբ Նշանիս Վարագա, ասի...», հետո բերում է № 20 արձանագրության տեքստը, համարյա նույնությամբ։*

*Նոր բանասերներից Կ. Ղաֆադարյանի վերծանությունն ամենաբարեխիղճը և ճիշտն է, սակայն մի քանի տեղ զգալի տարբերություն կա նրա և մեր վերծանության մեջ։ Դրանցից նշելի են №№ 11-ի և 18-ի թվագրերը և № 38-ի տեքստը, որով իմաստը փոխվում է։*

*Մեր պայմանական նշանները գործածված են նույն իմաստով, որի մասին մանրամասն հիշված է «Էջմիածին» ամսագրի 1951 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր համարի 41 էջում։*

### ԱՆԱՊԱՏ ԿԱՄ ՆՈՐ—ՎԱՐԱԳ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

#### Ա. Անապատ

* *№ 1. Մատուռի միջնորմի կիսամույթի ճակատին.*

1 ✕ Սր Սարգսին կիւրակէին : Ե: պա-
2 տարագն Սիրադեղա որդեացն է ան-
3 խափան : Բ : Սարգսի : Ա: Գրիգորո : Ա : Սիրադ-
4 եղա : Ա : Անպատա : ով խափանէ: Նացան
5 մեղացն տէր է եւ դատապարտի յԱյ

---

*1. Շարունակված ամսագրի 1952 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր համարից։*

* № 2. Եկեղեցու մուտքի ճակատաքարի վրա, ներսից.

1 ԹՈՒ ՈՃԷ
2 կամաւ ամենա(կա)լին Այ այս
3 մեր գիր է հաւրս Պետրոսի եւ եղբարցս
4 որ հրամանաւ պատրոնին ընգալաք Սարգսի զմիաբ-
5 անութին եւ տուաք ի տարումն Ե աւր աղբայրա-
6 ժամ եւ ի հետ մահուն զմիաբանուբն զժամն եւ ով
7 խափանէ դատի յԱյ եւ նզովք առցէ ամ(է)ն

№ 3. Նույն մուտքի ճակատաքարի վրա, դրսից, գավթի կողմից. գրերի փոսերը մասամբ կարմրադեղով ներկված.

1 Կամաւն Այ ես Դաւիթ որդի Վասակա թոռն Կիւ-
2 րիկէ արքայի շինեցի զԱնապատս յիմ իշխան(ու)թես : ձեռամբ
3 վարդապետին Մխիթարա: եւ ի ՈԽԷ թվիս շինեցի զեկեղեցիս
4 ձեռամբ հաւր Գրիգորո. եւ նորին արբանեկին Պետրոսի եւ եղբարց նորա
5 Յովանիսի եւ Ազարիայի: եւ ետու հող ի Տանձեկս. եւ յեզեր գետին:
6 եւ զդրախտն ընծուցի ի ջաղացէն Համղնո մինչ յնգուզուտն խար-
7 բի. եւ ջաղաց մի. եւ ի Թալին այգի. եւ շինական մի : եւ ետուն ինձ
8 զՁատիկն աւուրն եւ զԾրագալուցին ժամն որչափ լինի.
9 ով խափանէ դատապարտեսցի ի Տէ:

№ 4. Նույն մուտքի ձախ կողմի խաչքարի վրա, կիսաշրջանի մեջ.

1 Սբ Նշան տրուհա-
2 կան : Դաւրի լեր աւգնական:
3 յանեղ աւուրն անզրաւական:

№ 5. Նույն խաչքարի տակ, խոշոր գրերով.

1 Դաւիթ շինող
2 վա(ն)իցս

* № 6. Նախորդ՝ № 5՝ կարճ արձանագրության վրա, մանր գրերով, փորագրված է 9 շարքից բաղկացած, ՈԿԸ թվակիր մի նվիրատվական արձանագրություն, որը կիսով չափ եղծված է, ումն «Գրիգորոյ» որդու անունից:

* № 7. №№ 5 և 6 արձանագրությունները կրող խաչքարի և դրան կից՝ տապանատան պատի վրա.

1 Ած ողորմի Հազար-
2 դեղին որ զՔարս կրեաց
3 ամէն:

* № 8. Եկեղեցու մուտքից աջ, պատի միջի խաչքարի վրա, կիսաշրջանաձև

1 Զկենտակիր
2 Նշանս կառուցաք յոր..
3 ..... բարեխաւս....
4 ո[ր երկրպա]գէք յիշեցէք ի Քս

* № 9. Նախորդ արձանագրությամբ կրող խաչքարի տակ, խոշոր գրերով.

1 Խաչս Թա...
2 արին է

* № 10. Եկեղեցուն կից (հարավից) մատուռի ճակատաքարի վրա, մանր. անկյունավոր գրերով.

1 խաչերից վերև — Ավ ագ
2 խաչերի տակ — Մկիչ Թր վդ

№ 11. Տապանատան մուտքի ճակատաքարի վրա, կամարաձև փորագրված է

1 [Ոխթ Թվի] Ես Դաւիթ որդի Կասակա թոռն Կիւրիկէ
2 ա(ր)ճաի շինեցի զեկեղեցիս եւ զտապանատունս եւ եառւ
3 ի Տանձեկի զիմ

ԾԱՆ. Արձանագրությունը կիսատ է թողնված և թվագիրը սուր գործիքով խեփված է, բայց հետքը մնացել է։

## Թ. Ժամատուն

№ 12. Մուտքի ճակատաքարի վրա, դրսից.

1 Ի Թվ : Ջծ :
2 Կամաւն Այ : Ես Հայրուտս վաելեալ գ-
3 ծիավարժ իշխանութի եւ ճասեալ իմ (?) զարճուրեց-
4 ա ի սպառնալե(ա)ց : Եւ դիմեցի յեղբայրանց Անապատիս առ ոտս
5 տր : Ցոն : շինողի սբ ուխտիս: Եւ ստացա զտանականս յիշատակ ինձ եւ իմ-
6 ոցն : արդ ես Ցոն : որդի Հայրուտին յիշելով զառաճեալական ճրամանս ճճազանդ յինէ-
7 յ ճաւրն զարճուրեցա ի գործոց իմոց : Եւ Եառւ բնծա եւ միաբանճս ճաստատեցին : Բ : պ-
8 ար : ի տաւնի Տերընդառաջին:Ա: Հայրուտին:Ա: Վէլուշին:ով խափանէ պարտական լիցի մեղաց նոցա:

ԾԱՆ. Ինչպես բովանդակությունից երևում է, այստեղ երկու արձանագրություն է, որոնցից երկրորդն սկսվում է 8-րդ շարքի առաջ բառից և չի հրատարակված։ Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանը «Արցախում» հրատարակել է առաջին մասը ոչ ճիշտ վերծանությամբ։

* № 13. Աստվածածին եկեղեցու ժամատան մեջ բացվող մուտքից աջ, պատին կից մույթի խոյակի վրայի խաչքարի տակին.

1 Ած ողորմի : Սգի : Սգսոն
2 ո : Ած ող Շանճշանի աղբէր
Աղեղին:

ԾԱՆ. 3-րդ շարքի «Աղեղին»ը կարելի է կարդալ նաև «Աղեղին»։

* № 14. Նույն մույթի խոյակի ճակատին.

1. [կամաւն] Այ Ես Գրիգոր միա[բանե]-
2 ցա Ե[կե]ղ(եցոյս) եւ Եառուն ինձ : Ա : ժ[ամ]
3 [ի տաւ]նի Համբարձ[ման]

ԾԱՆ. Անկյունավոր փակագծերի մեջ բերված տեղերում քարը հողմահարված է։

* № 15. Ժամատան հարավ-արևելյան որմնախորշի տակ, զույգ խաչերի երկու կողերին, տառերի փոսերը կարմրադեղով ներկված.

| | |
|---|---|
| 1 Մեծ | յուսով Ես Սեւինչս |
| 2 Եւ ամո | ւսին իմ Ցաղէս միաբան- |
| 3 Եցաք | եկեղե(ցոյս) միաբանճս Եառուն |
| 4 մեզ Բ: | ժամ ի տաւնի Լ աձնին |

* № 16. *Նախորդից ցած, կեսը կոտրված մի մեծ քարի վրա. գրերի փոսերը կարմրադեղով ներկված.*

1 Ես Զատիկս եւ
2 որդի իմ Սասնէս
3 միաբանեցաք եկեղ(եցոյս)
4 եւ միաբանքս ետուն մ–
5 եզ . Ա . աւր ժամ ի տաւնի սբ
6 խաչին անխափան

* № 17. *Նախորդի տակ, չորս հաա փոքր խաչերի աջ կողմում, ոչ խորը փորագրված մի այլ արձանագրության սկզբի մասից պահվել է երեք շարք, յուրաքանչյուր շարքում 3—4 տառ։ Այդ պատառիկն այստեղ չենք բերում, որևէ իմաստ չունենալու պատճառով։*

## Գ. Աստվածածին կաթողիկե եկեղեցի

№ 18. *Գլխավոր (արևմտյան) մուտքի բարավորի վրա, խոշոր գրերով.*

1 Ի Թվ ..Գ շինեցաւ եկեղեցիս ձեռամբ Յոհանէս վդ հրամ(ա)նաւ
եւ իշխանութբ իշխանաց իշխանի Վասակա որդո [Դաւթի թո]ռն Կիւ[րիկէ]–
2 ի արքաի եւ սահ(մ)անեցաք զսա ազատ.........

*Ծնթ. 1. Թվագրի առաջին երկու գրերի տեղում քարը ջարդված է, իսկ միավոր Գ-ն կարելի է և Դ կարդալ։*
*2. Առաջին շարքի «Թոռնէ» բառը կարելի է և «ծոռնէ» կարդալ։*
*3. Արձանագրության վերջին մասը խորը փորագրված չլինելու պատճառով չի կարդացվում, սակայն գրերից հետքեր մնացել են։*

№ 19. *Նույն մուտքի ճակատաքարի վրա.*

1 : Ի. Թ: ՈՂՁ: (ի) թագ(աւորութեան) Ռուզուքանա
2 դստեր Թարի ես Վասակ որդի Դաւթի որդո Վաս : ի
3 տանէ Բագրատունի : ի տոհմէ Դաւթա մարգարէի : ի փառս Այ կա–
4 տարեցի զեկեղեցիս զոր շինեցի ի ձեռն ան Յոհ: եւ ըն–
5 ծաեցի զՄաղկնազուզի : քիւր կոպարովն ի վանքս : եւ հաւանութբ եղբ–
6 արցս հաստատեցաւ ինձ պատարագ Յովանուքի եւ Զատիկն յի–
7 մ շինեալ մեծ եկ որպես իմ հաւրն իւր շին փոքր եկեղեցիսն : զոհ–
8 ցաւ եւ կնքեցաւ անուամբն Այ : յաւուր որում Վարագա հայրն Ղուկաս զՄր
9 Նշանն ետ յեկեղ : արդ թէ ոք զմեր տուեալ գեղերս ի մեր եկեղեցեացս հան–
10 ել ջանա եւ զմեր յիշատակն խափանել : թէ քրիստոնիա է ի Քէ յիւր բնտրել–
11 ոցն է նզոված : եւ թէ յայլ ազգէ յԱյ եւ ի դենէ : եւ յառաջնորդաց իւրեանց
12 եւ մեր մեղացն պարտական յաւուրն դատաստանի տեսացեն ամենայն
առ : եղիցի եղից(ի)

*Ծնթ. 1. Այս արձանագրության սկզբի մասը, թվագրից հետո մինչև «ես Վասակ» խոսքերը, Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը «Արցախում» (էջ 337) բաց է թողել։*
*2. Առաջին շարքում հիշված Ռուզուքանը վրաց Ռուսուդան թագուհին է (1222—1245 թ. թ.), որ Թամարա թագուհու թոռն է և ոչ դուստրը։*
*3. Երկրորդ շարքի «Թարի» կրճատ անունը վերծանում ենք «Թամարի», իսկ 12-րդ շարքի վերջում «առ» կրճատումը՝ իբրև «առաւածէ»:*

*№ 20. Եկեղեցու ներսում, հյուսիսային պատի վրա.*

1 Ի ԹՎ ՈՁ ընդ այս աշխարհս յոլովս հարս(ւ) գաւազանաւ ցասմանն Այ
գաւառն Խլաթա ի ձեռն Խորազմին եւ Թաթարին ընդ որս եւ մեծահռչակ սբ
2 ուխտն Վարագ [յիշ]եցեալ մեղաց մերոց յայսմ ամի ես Ղուկաս հայր Վարագա
առեալ զտիեզերահամբաւ սբ Նշանն զշնորհեալն
3 Այ ի փրկութ[եա]ն մարդկան ի ձեռն Գառոնեկեա եւ սբ Հռմսիմեացն եւ
Թողկա գ. Ջ. ամ շրջեցա թափառեալ ի տեղո ի տեղ: ապա
4 ի կամս յառ[աջ]ատ[ն]ես խնամոցն Տն հասի ի Նոր բերդ առ Քասեր իշխանն
Վասակ եւ յածաբնակ Անապատ կոչեցեալ վանքս եւ
5 ազդումն [քնչ եղեւ] առ իս հւսնռանեալ սբ Նշանիս ի տեղոյս նկատեցի եւ
զգեղաղեշ եկեղեցիս արժանի հանգըստեան սորա: եւ մեծարեալ ի բնա–
6 կցս առի զվանքս: եւ էտու զխաչս յեկեղեցիս Այ միջնորդութբ եւ վկաութբ
տն Յոհ. շինաւղի եկեղեցոյս առաջի հրշտակաց եւ մարդկան
7 եւ հաստատեցաւ ինձ ի տաւնի սրբոց առ. Պետ. եւ Պաւղսի: եւ Յոհ: եւ Յակ
զամեն եկ: պատ: արդ էթ(է) ոք հանել ջանա աստի կապանս եւ անէծս
ժառանգեսցէ
8 յոյցի եւ] մարմին անբժշկելի ի սբ Նշանէս եւ *յամենայն կամարարաց*
Այ որչափ այս
եկեղ. չէն է մի ոք իշխեցէ զխաչս հանել կամ զիմ յիշատակս խափանել:
ապա թէ ոչ նախ
9 զփոր(ն) ջնջեալ[ լ]էի ի կենաց գրոյն եւ յիշմանէն: Այ: ասացեն հրշտակ եւ
մարդիկ եղիցի եղիցի:

*ԾՆԹ. 1. 2-րդ և 4-րդ շարքերի անկյունավոր փակագծերի մեջ առնված մասերը վերծանված են ըստ Ջալալյանի։*

*2. 8-րդ շարքից «յամենայն կամարարաց» բառերի ու շղատառ մասի գրերը փորագրված են շարքից վերև և համարյա անեկատելի են։*

* *№ 21. Նախորդ արձանագրության տակ, սասուրհկ հողմահարված մի քարի վրա.*

1 Ի տաւնի ..... Գ: պատար(ագ) յին
2 ի ......... սանին. Բ. պ-
3 ատ[արագ]...ն եւ նոխսա թէ
4 ոք [խափ]անէ դատի յԱյ
5 բ......, ի: Ա. Մխիթարա

* *№ 22. Նախորդի տակ.*

1 Ի տաւնի սբ. Քրիստափոր-
2 ի: Բ: ժամ: Ա: Մխիթարա: եւ
3 : Ա: Գորանղխտո: ով խափ-
4 անէ դատի յԱյ

* *№ 23. № 21-ի շարքում.*

1 Ի Հոգոգալըստ-
2 են: Բ: ժամ: Բ: եղբ-
3 արց խաչատրո
4 եւ Խաչաւուրին
5 որ խ(ա)փանէ դատի
6 Տէ

* *№ 24. Հյուսիսային պատի վրա, խորանի մուտքի մոտ.*

1 Ի տաւնի ս̅բ առաքելոց-
2 ն Պ(ե)տրոսի եւ Պաւղոսի : Ա:
3 պատարագ մատչի ի խոր-
4 անիս յանուն Մխիթարա
5 որ ոք խափանէ դատի ի
6 Տ̅է Թ : ՈՀԹ:

* *№ 25. Աջ դասի խորանի մուտքից վերև, երկրորդ շարքի քարի վրա.*

1 Ի տաւնի ս̅բ առաք-
2 ելոցն Փիլիպպոսի : Բ:
3 ւոր ժամ : Ա : (—)Ածատրո
4 եւ : Ա: Սիսաին անխափ-
5 ան : կատարիչքն ուրենին

* *№ 26. Նույն խորանի մուտքի ճակատաքարի վրայի խաչի չորսը և թևերի մեջ.*

1 Ցոնան — ու եւ Յա-
2 կոբա տաւն—ին : Ա : պատար-
3 ագն Աշո — տոյ առնե-
4 ն անխա — փան

* *№ 27. Ձախ դասի խորանի մուտքից վերև.*

1 Ցանուն Ա̅յ ես տ̅ր Ցոն(-) : ճր-
2 ամանաւ պատրոն Վասակա
3 եւ ամենայն եղբարցս եռու-
4 աք զս̅բ խորանս ս̅բ Գրիգ-
5 որին տաւնին Իվանայ հայ-
6 ջնեցուն մի ոք իշխեց-
7 է խափանել եւ որ անոգնիք-
8 ն տացէ *նմայ* մեղացն եւ
9 անցանացն պատասխանի

* *№ 28. Նույն խորանի մուտքի ճակատաքարի վրայի խաչի կողքերին.*

1 Նոր կիր — ակէին : Ե :
2 պատարա — գն Ջուրչ-
3 ին առնեն ա-ն-խափան

* *№ 29. Նույն խորանի մուտքից վերև, № 27-ի տակ.*

1 Ի տաւնի սրբոյն Գէորգա : Բ : ժամ
2 լինի յանուն Ասլան ափին : եւ Սիմեոա : ան-
3 խափան կատարիչքն ուրենին յԱ̅յ ամէն

* *№ 30. Հարավային պատի վրա, խորանին մոտ.*

1 Սուրբոյ խաչին : Գ : պ-
2 ատարագն Սլքէկին առնեն:
3 եւ : Ա̅ : ւուր խաթունին անխափան:
4 : Բ : ւուր Գրիգորոյ : եւ
5 : Ա : ւուր ճայրերին . անխ-
6 ափան

* № 31. № 30-ից ցած, քիչ դեպի աջ.

1 Ի տաւնի Թիոդոսի քաղ : Ա : աւր
2 ժամ Թոդորին եւ խաթունին ան-
3 խափան

* № 32. Հարավ-արևմտյան վերին խորանի աստիճանների մոտ, խորանի պատին.

1 Ի տաւնի : սբ : Յակոբին
2 : Բ : ժամ : Ա : Հայրապետին
3 : Ա : խաթունին : խափանիչ-
4 ք[ն դատին] յԱյ

* № 33. Հարավ-արևմտյան ցածի խորանի մուտքի ճակատաքարի վրա. կիսաշրջանաձև.

1 Տր Ած ողորմի Արտաճամու ամեն

* № 34. Նույն խորանի մուտքի ճակատաքարի վրա, խաչի վերևը և կողքերին.

1 Արքայն
2 Թորոսի նա : տաւնին : Ա :
3 աւր պատարագ Արտաճամ-
4 ու : խափա — նիչքն
5 դատին — յԱյ

* № 35. Նույն խորանի մուտքից ձախ, աստիճանների տակ.

1 Ի կամս Այ ես Տր : Յոհ : պարոն Վասակա : եղբ-
2 արցս կամ(ա)կցութբ : Գ : աւր պատարագ գրեցաք
3 երկուց ճարազատաց Գրիգորս և միւս Գրիգորս
4 ի տաւնի սբ Աձաձնին : յորմե ճետէ գրեցաք
5 թէ ոք խափանէ դատի ի Տէ : Թ : ՈՀԹ

* № 36. Նույն խորանի մուտքի մոտ, արևմտյան պատի վրա.

1 [Ի տ]աւ[ն]ի Աձաձնի : Ա :
2 ժամ : Բախտիկայ
3 անխ(ա)փան

№ 37. Արևմտյան պատին, նույն կողմի մուտքից աջ.

1 Ի տաւնի սրբոց Հռիփսիմենցն : Ե : աւր
2 ժամ յինի խաթունին Անեցոյ
3 դուեր մեծին Հենուր Վարճամս
4 եւ տիկին Նոր բերդիս որք խափանեն
5 դատին յԱյ

№ 38. № 37-ի տակ.

1 Ի տաւնի սբ Յովաննու ճաւասար-
2 դին : Ա : աւր ժամ Յսկա Անեցո
3 դպրի ռնուցողիս խաթու-
4 նիս որք խափանէն դատին յԱյ

* № 39. *Հյուսիս-արևմտյան ցածր խորանի ճակատաքարի վրա.*

1 ՍԲ ԳԻՈՐԳԱ ՏԱՃԻՆ ՅԱՅ-
2 Ս ԽՈՐԱՆԻՍ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՉԻ
3 ՎԱՉԻՆ ԱՆԽԱՓԱՆ ԵՒ ՈՎ ԽԱՓԱ-
4 ՆԷ ԴԱՏԻ Ի ՏԷ:

* № 40. *Նույն խորանի մուտքի մոտ, աստիճանների տակ.*

1 Ի ՏԱՃԻ ՍԲ ՅԱԿ : Ա : ՏԱՐ ԺԱՄ
2 ՔՈՒՐԱ ՁԷՐԻՆ ԴԱՒԹԻ ՍՆՈՒ-
3 ՑՈՂԻ ՈՐՔ ԽԱՓԱՆԵՆ ԴԱՏԻՆ
4 ՅԱՅ

* № 41. *Հարավ-արևելյան վերին խորանի մուտքի ճակատաքարի վրա.*

1 ԵՐԵՔ-
2 ԵՐԵՒԵԱՆ ԱԾՈՒԹԻ ՅԻՇԵԱ Զ-
3 ՎԱՐԴԱՆ ՈՂՈՐՄՈՒԹՔ
4 Ա : ԺԱՄ : ԵՄԱ Ի ՏԱՃԻ ՎԱՐԴ(ԱՆԱՆՑ)

№ 42. *Ըստ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի (տե՛ս «Արցախ», էջ 336). Աստվածածին կաթուղիկեի հարավային դռան ճակատաքարի վրա եղել է հետևյալ արձանագրությունը.*

«ՇԻՆԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՍ ՁԵՌԱՄԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԱՒ Ե ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ ՎԱՍԱԿԱՅ ՈՐԴՒՈՅ.......»:

*ԾՆԹ. Այս արձանագրության շարունակությունը կասկածելի վերծանության և արտասովոր բովանդակության պատճառով չենք կրկնում.*

№ 43. *Կ. Ղաֆադարյանի հրատարակած արձանագրություններից. մի կոթողի վրա.*

«Ի ԹՎԻՆ ՉԹ ԱԾ ՈՂՈՐՄԻ ՇԱՌԱ ՈՐ ՋՈՒՐ ԲԵՐԵՑ»:

*Առաջին անգամ հրատարակված արձանագրությունները նշված են * աստղանիշով.*

ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ԱԹԱՆԱՍՅԱՆ

# ԻՄ ԱՇԱԿԵՐՏԵԼՍ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔՈՒՄ ԵՎ ՄՈՒՇԻ Ս. ԿԱՐԱՊԵՏՈՒՄ[1]

## Ե. ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔԻՑ ԴԵՊԻ ՄՈՒՇԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԸ

*Վանից դուրս գալիս, ձիերով եկել էին մեզ ճանապարհելու 30—40 երիտասարդներ, որոնց մենք հանդիպեցինք երբ իջնում էինք Վարագա դարիվայրից։ Այդ ձիավորները եկան մեզ հետ մինչև առաջին հանդիպած գյուղը, որը հեռու էր Վանից ոչ ավելի քան 8—10 վերստ տարածության վրա։ Այստեղ էլ մնացինք գիշերելու։ Հաջորդ օրը վաղ առավոտյան դուրս եկանք շարունակելու մեր ճանապարհը դեպի Մուշ։ Հասնելով Ավան գյուղը, մենք իջանք Երեցփոխի տանը։*

*Հաջորդ օրը նախաճաշելուց և մեր հարգելի ծերունի երեցփոխին շնորհակալություն հայտնելուց հետո, առավոտյան ժամը 10-ին ճանապարհ ընկանք դեպի Խոռխոռունյաց պատմական գավառը (այդ Հայկ Նահապետի Թոռ Խոռի կողմից ընտրած վայրն է, որի անունով և կոչվել է Խոռխոռունյաց գավառ)։ Այս գավառը գտնվում էր Վանա կապուտակ լճի արևելյան եզերքի ամբողջ տարածության վրա. սա մի բերրի և արգասավոր հացաբույսերով սիրուն դաշտավայր է։*

*Ահա այս գավառում էր գտնվում Տիրամոր հոյակապ վանքը, որը շինված էր մաքուր սրբատաշ քարից։ Վանքի շրջապատում կային 25—30 հայ բնակչությամբ տներ։ Հայրիկն իր ձիու գլուխը շուռ տվեց դեպի այդ վանքը, ցանկանալով համբուրել մի շիրիմ, որը գտնվում էր այդ վանքի ավագ խորանի կողքին, կրկնակի շինված սյունաձևերով մատուռով։ Սա այն վանքն էր, որը Մեծն Ներսեսը, իր հայրապետության օրով, հատկացրել էր բորոտներին։*

*Հայրիկն այստեղ ծնկաչոք աղոթեց և մի ոսկի գցեց այն պղնձյա գանձանակի մեջ, որը դրված էր սեղանի վրա։*

*Տիրամոր վանքից դուրս գալով, անմիջապես շարունակեցինք մեր ճանապարհը և մինչև երեկո հասանք Ս. Դանիելի վանքը (նույն գավառում)։ Բայց մինչ վանք հասնելը, մեզ ընդառաջ եկան Մուշի գավառի բոլոր մելիքները, տասնապետները և երեցփոխները, նստած իրենց նժույգների վրա. Հայրիկը նրանց սիրալիր ընդունեց։ Ընդառաջ եկողները մոտենալով, ջերմ սիրով և մեծ հարգանքով համբուրեցին Հայրիկի աջը։ Դրանցից շատերը, նույնիսկ ներքին հուզմունքից, արտասվում էին, փառք էին տալիս, որ վերջապես արժանացան Հայրիկին իրենց առաջնորդ տեսնելու բախտին։*

*Գիշերը մնացինք Ս. Դանիելի վանքում, ուր շատ լավ հյուրասիրություն գտանք տեղի վանահոր՝ Հակոբ ծայրագույն վարդապետի կողմից։ Սա բավականին գործունյա և շինարար անձն էր։*

*Ճաշեցինք Մելիք Խաչենի տանը և ճանապարհ ընկանք դեպի Ս. Կարապետի վանքը։ Շատ հանդիսավոր էր այդ գնացքը։ Ինչպես վերևում ակնարկել էի, Խրիմյան Հայրիկը իր փառահեղ մորուքով, իր բարձր հասակով, կապույտ աչքերով, նստած սպիտակ ձիու վրա, նրա հետևից 45 մելիքների, տանուտերերի և երեցփոխների բազմությունը, որոնք նստած էին իրենց երիվարների վրա, արծաթապատ սարք ու զարդով, առաջ էին գնում։ Հայրիկի պատվերով, Սրվանձտյանը, Հաջի Միքայելը և ես սկսեցինք երգել «Թա՜մ, փորոտանոը» և ապա այլ պատշաճ երգեր։ Երգում էինք այնպիսի ներդաշնակությամբ, որ բոլորը կատարելապես հիացմունքի մեջ էին։*

1. Շարունակված ամսագրի 1962 թվականի սեպտեմբեր—հոկտեմբեր համարից։

## 7. ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԵՏ ՄՇՈ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔՈՒՄ

Բուլանխի Մելիք Խաչենի տնից դուրս գալու նույն երեկոյան, մեզ ընդառաջեցին Ս. Կարապետի միաբանության կողմից եկած երեք վարդապետ և երեք քահանա։ Սրանցից մեկը Աշտիշատի քահանան էր, մյուսը՝ Հավկական ինչ որ գյուղից, իսկ երրորդը՝ Խորենք գյուղից էր։

Այդպիսով, մեր գնացքի թափորը քանի գնում, ստվարանում էր։ Վերջապես մոտեցել էինք Ս. Կարապետ վանքին։ Այստեղից սկսվում էր վերելքը։

Ս. Կարապետի միաբանության ուխտը, մինչև 20 սաժեն տարածության վրա, եկեղեցական թափորով, խաչ ու խաչվառներով, շուրջառներով ընդառաջել էին իրենց նոր վանահորը և առաջնորդին։

Հայրիկը տեսնելով եկեղեցական թափորը, ցած իջավ ձիուց։ Ցած իջան և մեզ հետ եկած մելիքները, տանուտերերը, երեցփոխները։ Հայրիկը շուրջառը առավ վրան և երեքգլխյան վիշապի արծաթյա գավազանը վերցնելով ձեռքը, թուրվառակիր երկու սարկավագների խնկարկությամբ, միաբանության առաջափառ Աստուածծ շարականը երգելով, առաջ շարժվեցինք և մտանք վանքի պարսպից ներս Ս. Կարապետի տաճարը։ Այստեղ որոշ աղոթքներ կատարելուց հետո, Հայրիկը դարձավ դեպի հայ մելիքները, տանուտերերը և երեցփոխները, նաև վանքի միաբանությանը և մի շատ ազդու քարոզ խոսեց։ Մենք կարծում էինք, թե հենց այդ քարոզը պատճառ կդառնա, որ վանքի միաբանության միջից վերանան ատելությունն ու չար նախանձը, որոնք վաղուց ի վեր բույն էին դրել այդ ողորմելիների մեջ։

Միաբանները եկեղեցուց եկան առաջնորդարան։ Այնուհետև մելիքները, տանուտերերն ու երեցփոխները, նաև գյուղերից եկած քահանաները, Հայրիկի աջն առնելով, հեռացան շատ գոհ տպավորության տակ։

Մինչև մեր ժամանումը, սկսած Վարդավառից, գրեթե ամեն կիրակի ուխտավորների ստվար բազմություն էր գալիս ուխտի և յուրաքանչյուր ուխտավոր, իր կարողության համեմատ, նվիրաբերում էր իրեն ջերմեռանդ սիրո և բարեպաշտական ազարյասի տուրքը։

Մեր գալուց անցել էր մոտավորապես 8—10 օր։ Հայրիկը վանական կառավարությունից և գանձապահից հաշիվ պահանջեց, բայց տեսավ, որ ամենայն ինչ կատարյալ է... գանձարկղում ոչինչ չկա։ Անհրաժեշտ էր կարգավորել եկամուտները և բաց անել վանական ողորմելի դպրոցը։

Հաջորդ գարնանը բացվեց դպրոցը և մենք սկսեցինք մեր եռանդուն գործունեությանը։ Խրիմյան Հայրիկը, Գարեգին Սրվանձտյանը, Հաջի Միքայելը սկսեցին իրենց մանկավարժական աշխատանքը, իսկ ես կատարում էի վերակացուի պաշտոն։

Աշակերտները շատ գոհ էին, որ վերացվել էին դպրոցից մինչ այդ գոյություն ունեցող ֆալախայի[2] ծեծը և հայհոյանքը։ Սակայն վանքի եկամուտները դեռ շարունակում էին հափշտակվել։ Դրությունը փոքր ինչ կարգավորելու համար, Հայրիկն իր մոտ կանչեց վանքի լուսարար Հարություն վարդապետին, որը 60—65-ամյա ողորմելի մի ծերունի էր և, ինչպես մեզանում են ասում, աշխարհից բեկխաբարս մի անձն։ Հարություն վարդապետին հանձնված էր Ս. Կարապետի վանքի «Մասունք խորանի գերեզմանի խաչահամբույրի ողջ եկամուտը, որն առնվազն տարին մի քանի հազարի էր հասնում։ Հայր սուրբն այդ եկամուտը, առանց հաշվի, գերեզմանի վրա դրած բաց գանձանակից վերցնում և իր անհատակ գրպանն էր լցնում։ Կարիք ունեցողը, լինեի դա միաբանության միջից թե դրսից, կարող էր գալ, հայր սուրբի աջը համբուրել, ձեռքը անարգել մտցնել նրա գրպանը, և հանել այնքան, որքան կարելի էր դուրս բերել՝ սև, արծաթ, նույնիսկ ոսկի դրամ։ Ես այս ասում եմ առանց չափազանցության։

Հայրիկը հանդիմանեց Հարություն վարդապետին այդ դրամների անխորհուրդ և աննպատակ ծախսվելու համար և հանձնարարեց՝ հաշվով վերցնել գանձանակները և արձանագրել մատյանում։

Այդ կարգադրությունից հետո, եկամուտներից զոշափելի մի գումար գոյացավ, որով դպրոցը նորոգվեցավ, շինվեցին նոր լուսամուտներ, նոր դռներ, գնվեց կահ-կարասիք, մահճակալներ, նոր հանդերձանքներ կարվեցին աշակերտների համար։ Մի խոսքով, այդ գանձարկղի դրամներով բավականին զգալի բարեկարգություններ մտցվեցին։

2. «Ֆալախա», «ֆալախկա» կամ «ֆալախա(ն)»— «Թոկ՝ երկու ծայրը մի ձողի վրա ագուցված, որի մեջ մեկի զույգ ոտները կաշկանդելով վեր են բարձրացնում գավազանի հարվածներ տալու համար» (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան», Երևան, 1945 թ.։

## 8. ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՓՈՐՁ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿՅԱՆՔԻ ԴԵՄ

*Մի օր, մենք՝ վարագականներս, գիշերը երկար մնացինք Հայրիկի մոտ և խորհրդակցում էինք՝ թե ի՛նչպես անենք, որ Մուշի հայաշատ նահանգի հայության համար մի լրագիր հրատարակենք։ «Մասունք խորանի» խաչահամբույրի գանձանակը կարող էր լիուլի բավարարություն տալ այդ շահեկան նպատակին։ Որոշումը կայացավ շաբաթաթերթի հրատարակման մասին. որոշեցինք թերթն անվանել «Արծվիկ Տարոնոյ»։ Մտածեցինք դիմել Կոստանդնուպոլիս՝ նոր մամուլ և տառեր բերելու համար. բայց տեսանք, որ դա շատ դրամագլուխ կպահանջեր, ուստի որոշեցինք՝ վանքի պահապաններից մեկին ուղարկել Էրզրում, թուղթ գնելու և ուղարկելու Վան, «Արծվիկ Տարոնոյ» այնտեղ տպագրելու և ապա Ս. Կարապետի վանքը բերելու համար։*

*Եվ մինչդեռ մենք այդ խորհրդակցությամբ էինք զբաղված, մի այլ տեղ, քրդերի հետ միաբանած այլ անձինք, որոնք շահ և օգուտ ունեին վանքի եկամուտներից, խորհուրդ էին կազմել ու որոշել՝ կա՛մ Հայրիկին սպանել և կա՛մ երկյուղ տալ, փախցնել։*

*Մենք հենց նոր էինք խորհրդակցությունից հետո մեր խուցերը քաշվել քնելու, գիշերվա ժամը 2-ի մոտ, մեկ էլ հանկարծ լսվեց հրացանի ձայնի որոտ։ Վանքի շրջապատի ամայությունը, գիշերային լռությունը տասնապատկել էին հրացանի որոտը։ Ձայնը լսվեց կարծես առաջնորդարանի կողմից։*

*Բոլորս շնչասպառ, հուզված, դեպի առաջնորդարան՝ Հայրիկի մոտ վազեցինք։ Հայրիկը մոմակալը վառած, առաջնորդարանին կից ննջասենյակը մտնելու միջոցին, ինչ որ դավադիր իր անգթական ձայնալուռ հրացանը պարպել է նրա՛ վրա, գնդակը վրիպել է և Հայրիկը ազատվել է այդ վերահաս վտանգից։*

*Բոլոր միաբանները առաջնորդարանի մեծ սրահը հավաքվեցին։ Հայրիկը, լուռ ու մունջ, վեհանձն և անվրդով, իր սովորական սառնասրտությամբ և քաղցր ժպիտը երեսին դարձավ դեպի ժողոված միաբանությունը և ասաց.*

*— Այս միաբանության մեջ ողորմելիներ կան, որոնք կկարծեն թե հրացանի գնդակով Վասպուրականի Արծիվ կփախցնեն...։ Թընդանոթ ալ որ պարպեք, Արծիվ թռչող, հեռացող չէ...։ Գացե՛ք, հանգի՛ստ քնացեք...։*

*Ամենքն էլ մնացին զարմացած Հայրիկի այդ մեծահոգության առաջ. եթե Խրիմյան Հայրիկի տեղ մի ուրիշ կոստանդնուպոլսեցի վանահայր լիներ, անմիջապես Մուշի փաշայի մոտ մարդ կուղարկեր, ահագին աղմուկ կհաներ, միաբանությանը իրարանցման մեջ կգցեր, ոմանց կասկածավոր մեղադրանքներով կալանավորման կտար, նույնիսկ աքսորի կդատապարտեր։ Ի դեպ, Մուշի փաշան իմացել էր դեպքը կողմնակի մարդկանց միջոցով, անձամբ եկել էր վանք և ներկայանալով Հայրիկին, զարմացել ու հիացել այդ բարի, պատվական հոգևորականի վեհանձնության և սառնասրտության վրա։*

*Այս անցքից հետո, մենք է՛լ ավելի մեծ եռանդով փարվեցինք մեր գործին։ Դպրոցը շարունակում էր իր կանոնավոր գործունեությունը, իսկ «Արծվիկ Տարոնոյ» այս դեպքից երեք շաբաթ հետո լույս տեսավ և մեծ քաջալերություն գտավ հայ հավատացյալների կողմից. բաժանորդների թիվը մեկ տարում հասավ 1.200-ի, ինչ որ այն ժամանակ բացառիկ մի հանգամանք էր։ Ուրախ էր և գոհ Հայրիկը արդյունքից. ավելի քան խանդավառ էինք մենք։ Լռել էին թշնամիները, հաղթանակել էր Հայրիկի սերը, համբերությունը։ Մուշի Ս. Կարապետը մեր հոգևոր կուլտուրական կենտրոններից մեկը լինելու մեծ հույս էր ներշնչում Խրիմյանի վանահայրության օրով։*

## 9. ԱՆՑՔԵՐ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔՈՒՄ

*Անցան երկրորդ և երրորդ տարիներն էլ. եկավ 1864 թվականի գարունը։ Այդ թվականի մայիսի 24-ը տաճկահայերի Ազգային սահմանադրության տարեդարձի օրն էր։ Հայրիկի նախօրոք պատվերով, պատրաստություն տեսանք այդ օրը մեծաշուք կերպով տոնելու։*

*Վանքի պարսպից դուրս մի քանի սաժեն հեռավորության վրա կար սիրուն մի պարտեզ, որը հայտնի էր «Լուսարարի բաղչա» անունով, չքնաղ աղբյուրով, որի շուրջը տնկված էին ուռենիներ, որոնց ներքև որձաքարից շինված էր մի ավազան. պարտիզում կային պտղատու ծառեր։*

*Նույն 23—24-ի գիշերը, մեզ մոտ էին եկել Նոր-Նախիջևանից, Ղզլարից և Արմավիրից չերքեզահայ ուխտավորներ, հագած լեզգիական շալից կարած չերկեսկաներ, կապած արծաթյա խենչալներ և ատրճանակներ, բո-*

լորն էլ սիրուն և առողջակազմ տղամարդիկ, բայց հայերեն դժվարությամբ էին խոսում։

Հայրիկի կարգադրությամբ պատարագը սկսեց ուշ, ժամը 10-ին։ Պատարագից հետո կազմվեց եկեղեցական թափոր խաչով, խաչվառով։ Հայրիկի պատվերով, ես գնացի կովկասցի մեր հայ հյուրերի մոտ և խնդրեցի ներկա գտնվել հանդեսին։ Նրանք հայերեն լավ չէին հասկանում. ես բացատրեցի նրանց ռուսերեն լեզվով այդ օրվա հանդեսի նշանակությունը։ Օ՜հ, որքա՜ն նրանք ուրախ էին, երբ իրենց համար հասկանալի եղավ այն ամենը, ինչ կատարվելու էր այդ օրը։

Վանական թափորը շարժվեց Հայրիկի գլխավորությամբ դեպի «Լուսարարի բաղչան», ազգային-եկեղեցական երգերով։ Հայրիկը իրեն հատուկ հումորով, համով, հոտով վեր հանեց օրվա պատմական նշանակությունը ազգաշունչ մեծ ճառով։

Այդ տարի Մուշի շրջանում երաշտի պատճառով ստեղծվեց ծանր դրություն։ Սոսկալի երաշտ էր. շատ տնտեսություններ նույնիսկ իրենց ցանած սերմացուն չստացան. 150—200.000 ազգաբնակչությունը կանգնած էր սովի. քաղցի առջև։

Հայրիկը մի առանձին շրջաբերականով, «Արծվիկ Տարոնոյի» միջոցով, հրավեր կարդաց օգնության՝ «Հողևարքի» մեջ գտնված Տարոնի ժողովրդի մասին։ Մուշի շրջանի հայ հավատացյալների մեջ շատ մեծ արձագանք գտավ Հայրիկի շրջաբերականը։ Հայրիկը ուխտավորներից ստացած գումարը, որը մոտավորապես կազմում էր 2.800 ռուբլի ոսկեդրամ, հատկացրեց սովահարներին։ Սակայն սովյալների կարիքը այնքան շատ էր, որ հազիվ թե կիսով չափ բավարարեր այն մեծ պահանջը, որն զգացվում էր։ Ի նկատի առնելով այդ հանգամանքը, Հայրիկը 1864 թվականի հունիսին ճանապարհ ընկավ դեպի Էրզրում (Կարին) և ապա Կոստանդնուպոլիս՝ հանգանակության համար։ Հայրիկի ջանքերը արդյունավետ եղան. նրա հանգանակած գումարներով կարելի էր եղել բավական ալյուր, ցորեն հասցնել Մուշ՝ թե՛ ժողովրդին կերակրելու և թե՛ սերմացու մատակարարելու համար։

«Արծվիկ Տարոնոյի» այն համարը, ուր տպագրված էին Հայրիկի կոչերը ուղղված ընդհանուր հայության, թե «Հողևարք է Տարոնին, այցելություն ըրեք իրենց», արձագանք էին գտնում ամեն տեղ։

## 10. ՄԻՆՉ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁԸ՝ ԷՐԶՐՈՒՄՈՒՄ

Երիմյան Հայրիկը Կոստանդնուպոլսում եղած ժամանակ, Վարդավառին, Երևանից եկած ուխտավորներից ես ստացա նամակ։ Հայրս ի միջի այլոց գրում էր ինձ. «Սիրելի՛ որդեակ իմ Նահապետ, ե՛կ, օգնեա՛ հօր քո ծերացեալ...»։ Ես հիշեցի ծննդավայրս, մերայիններին և բարեկամներիս, և որոշեցի վերադառնալ տուն։

Ես վաղուց էի փափագում գնալ Սասունի սարերի հյուսիսային փեշերում գտնվող Առաքելոց սիրուն, հրաշակերտ վանքը, և մեր քերթողահոր շիրիմը համբուրել։ Հուլիսի վերջերին ճանապարհ ընկա դեպի Առաքելոց վանքը։

Իսկապես, բնության ի՜նչ սքանչելի անկյուն. ի՜նչ աննման և նվիրական վայրում էր շինված Առաքելոց վանքը...։ Մարդ զարմանում է՝ թէ ի՜նչ հիանալի ճաշակ են ունեցել Հայ Եկեղեցու հայրերը, որոնք կարողացել են ընդհանրապես այդպիսի հրաշակերտ վայրեր ընտրել թե՛ իրենց բնակության և թե՛ Աստուծո տաճարի համար։

Ես կատարեցի իմ ուխտը։

Առաքելոց վանքից վերադառնալով, եկա Աշտիշատ։ Գյուղից դուրս, մի քանի քայլ հեռավորության վրա գտնվում էր մի անշուք եկեղեցի. դա մեր գրականության և Եկեղեցու մեծ գործչի և Հայրապետի՝ Ս. Սահակ Պարթևի գերեզմանն էր։ Մտաբերելով երանելի հայրապետի կատարած մեծ դերը մեր ազգի, մեր Հայրենիքի բարօրության վերաբերմամբ, մտքիս և հոգուս խորքից զգացված, ընկա նրա անշուք գերեզմանի վրա և արտասվաթոր աչքերով համբուրեցի նրա նվիրական դամբարանը։

Առաքելոց վանքից և Աշտիշատից վերադառնալով, ես նորից եկա Ս. Կարապետ և Սրվանձտյանի մոտ ծանոթացա Էրզրումցի Նշկյանց Մկրտչի հետ, որը պիտի լիներ իմ ճանապարհի ընկերը դեպի Էրզրում։ Ես, իհարկե, շատ ուրախացա և գոհ էի, որ այդպիսի հարգելի և լավ ընկեր գտնվեց իմ ճանապարհի համար։

Օգոստոսի վերջերին Նշկյանց Մկրտչի հետ ճանապարհ ընկանք դեպի Էրզրում։ Միաբանությունը մեզ ճանապարհ դրեց վանքից բավական տեղ հեռավորությամբ, իսկ Գարեգին Սրվանձտյանը ընկերացավ ավելի քան հինգ վերստ։

Սիրով և արցունքով բաժանվեցինք միմյանցից. նամանավանդ իմ անկեղծ բարեկամ և առավել ես պատվական ուսուցիչ և ընկեր Սրվանձտյանից, որին հավիտյան չեմ կարող մոռանալ...։ Ո՜հ, որքա՜ն ծանրաբարո, որքա՜ն բարի, համեստ ու խելացի էր նա և իզուր չէր, որ հարգ էր բարձրացվել, որ

*Սրվանձտյանը Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ հրավիրվի։*

*Մեր ճանապարհորդությունը եղավ շատ հաճելի։ Մենք խոսում էինք Վարագից, Վանից, Մ. Կարապետից, Խրիմյանից և Սրվանձտյանից։*

*Իսկ երբ Էրզրում հասանք, Նշկյանց Մկրտիչը շատ խնդրեց, որ իր տանը իջնեմ։ Բայց նա, առանց այն էլ ինձ ճանապարհին շատ էր պարտավորեցրել, ուստի չուզեցի նրան նեղություն պատճառել. մյուս կողմից էլ, այդ ժամանակներում Էրզրումում չկային հյուրանոցներ, իսկ իջևանատները կեղտի և ապականության որջեր էին, անհնար էր այնտեղ մնալ։ Ես իջևանեցի իմ ծանոթ Հաջի Նիկոլի տանը։*

*Ես վաղուց էի լսել Էրզրումի հայ կանանց պարկեշտության մասին, իսկ նրանց ֆիզիկական գեղեցկությունը պակաս չէր նրանց բարոյական գեղեցկությունից. նրանք կանացի այնպիսի քնքշությամբ էին խոսում, որ մի րոպե կարծում էիր հելլենական կղզիների չաստվածուհիներ են, որոնք քեզ շրջապատել են։ Էրզրումի հայ կանայք բարձր էին իրենց փոսակցությամբ, արտաքին գեղեցկությամբ, պարկեշտությամբ։*

*Ես լավ հիշատակներով բաժանվեցի Նշկյանց Մկրտչից և նրա ընտանիքից։ Երեկոյան Հաջի Նիկոլը ինձ շատ ավետավոր լուր տվեց. «Այդքը լուրս, պարոն Նահապետ,— ասաց նա,— ցանկալի ճանապարհի նոր ընկեր եմ գտել— Էհրամջյան Գևորգ աղան, մի շատ լավ մարդ, ասող, խոսող, ծիծաղող և ծիծաղեցնող»։*

*Ես շատ ուրախացա, մանավանդ երբ հաստատ իմացա, որ իմ ընկերոջ դարձի հանգամանքները այնպես էին դասավորված, որ նա ամսի 8-ից շուտ չէր կարող ճանապարհ ընկնել։*

*Ամսի 8-ին մենք ճանապարհ ընկանք դեպի Կարս։*

*Էրզրումի վալիի թույլտվությամբ, երկու ձիավորներ ընկերանում էին մեզ պաշտպանության համար։ Առաջին օրը հասանք Սողանլուղի հրաշագեղ անտառը։ Կալվածական իր գյուղերից մեկում մեզ ընդունեց Հասան բեկը, որը տեսնելով Էրզրումի վալիի հրամանագիրը, մեծ հարգանքով համբուրեց այն և հրավիրեց մեզ իր սեփական գյուղը, որտեղ նա մեզ ընդունեց, պատվեց։*

*Հաջորդ օրը նախաճաշիկից հետո ճանապարհ ընկանք դեպի Կարս, ուր և հասանք երեկոյան ժամը 9-ին։ Իջևանեցինք Էհրամջյանի տանը, որը գտնվում էր մեր Աբաս Բագրատունյան թագավորի շինած Առաքելոց վանքի դիմաց։*

*Այդ ժամանակներում Առաքելոց վանքը Օսմանյան պետության ցորենի պահեստն էր։*

*Երկու օր Գևորգ Էհրամջյանի հյուրասիրությունը վայելելուց հետո, ես ուղևորվեցի Գյումրի (Ալեքսանդրապոլ), որտեղ երկու օր անցկացնելուց հետո, ուղևորվեցի իմ հայրենի Երևան, ինձ համար ցանկալի ծննդավայրս և սեպտեմբերի 18-ին արդեն Երևանումն էի, շրջապատված ծնողներով և հերձավորներով։*



# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ԽՆԴՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

(Գեղարվեստական ինքնագործունեության և ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական օլիմպիադան)

*Հնուց ի վեր մեր հայ ժողովուրդը հարուստ է եղել երգերով։ Գողթան գավառի հռչակավոր երգիչները թե միջնադարյան տաղերգուները, շինականը թե գուսանը, հովիվը թե որմնադիրը, սիրել են երգն ու երաժշտությունը, հորինել են երգեր։ Երգն ու երաժշտությունը կազմել են ժողովրդական հավաքույթների և տոնահանդեսների բաղկացուցիչ մասը, զարդարել, շունչ ու կենդանություն են ներշնչել այդ հանդեսներին։ Եկեղեցական տոների ժամանակ, ուխտատեղերում, հնագույն ժամանակներից մինչև այժմ, ժողովուրդը խրախճանքներ է կազմակերպում՝ ցուցադրելով իր ստեղծագործական լավագույն արժեքները։*

*Տարբեր ու բազմապիսի են եղել մեր ժողովրդի երգերը՝ երգեր աշխատանքի, սիրո, Հայրենիքի, ուրախության, կատակ երգեր։ Սակայն այդ երգերը ունեցել են մի բնորոշ գիծ, մի ուրույն երանգավորում, մի ընդհանուր բնույթ։ Դա վիշտն է, թախիծը, դառնությունը։ Այո՛, վշտոտ են եղել մեր երգերը գերազանցապես։ Դրանք իրենց վրա կրել են ժողովրդի դառն, իրավազուրկ, չարքաշ կյանքի խորը կնիքը, այդ պատճառով էլ համակված են եղել մելամաղձոտությամբ ու կսկիծով։*

*Բոլորովին այլ երգեր է հորինել ազատագրված հայ ժողովուրդը իր վերածնության դարաշրջանում։ Դրանք ուրախության, երջանիկ կյանքի երգեր են, երգեր, որոնք գովերգում են համայնական խաղաղ, ստեղծագործ աշխատանքը, փառաբանում Սովետական պանծալի Հայրենիքը, արտահայտում ազատագրված մարդու տենչերն ու զգացմունքները։*

*Իր բազմադարյան գոյության ընթացքում մեր ժողովուրդը երբե՛ք չի ունեցել այնքան շատ երգեր, որքան վերջին երեսնամյակում։ Եվ երբե՛ք նրա երգն ու երաժշտությունը այնքան կենսուրախ, այնքան լիաթոք ու սրտաբուխ չեն հնչել, ինչպես այժմ։ Մեր նորոգ Հայրենիքում ստեղծվել են ազգային վերածնության, ժողովրդի կուլտուրական վերելքի բոլոր պայմանները։ Չտեսնված կերպով հարստացել է մեր ժողովրդի հոգեկան կուլտուրան։ Արվեստը դարձել է ժողովրդական լայն խավերի սեփականություն։ Երգն ու երաժշտությունը խորը կերպով մուտք են գործել ժողովրդական կենցաղի մեջ։ Այժմ Հայաստանի շատ գյուղերի, գործարանների և շրջանային կենտրոնների ակումբներին կից գոյություն ունեն գեղարվեստական ինքնագործունեության տարբեր տեսակի խմբեր՝ երգեցողության, երաժշտական, թատերական, պարերի և այլն։ Այդ խմբերում ըստ իրենց ընդունակությունների և ձիրքերի, ընդգրկված են հազարավոր շնորհալի մարդիկ՝ երգողներ, նվագողներ, պարողներ, արտասանողներ։*

*Մեր երկրում մի գեղեցիկ սովորություն է ստեղծվել՝ ամեն տարի աշնանը անցկացնել գեղարվեստական ինքնագործունեության և ժողովրդական ստեղծագործության ստուգատես—օլիմպիադա։ Այդ ստուգատեսների ժամանակ հանդես են գալիս հարյուրավոր ինքնագործ խմբեր և անհատ կատարողներ, որոնք ցույց են տալիս իրենց շնորհքը, կատարողական վարպետության աճը։ Սկզբում տեղի են ունենում գյուղական և գործարանային ստուգատեսներ, որոնցում աչքի ընկնող խմբերն ու կատարողներն իրավունք են ստանում մասնակցելու շրջանային, ապա և ռեսպուբլիկական ստուգատեսներին։*

*Հաջող էր և հետաքրքիր գեղարվեստական ինքնագործունեության այս տարվա ստուգատեսը։*

*Ստուգատեսը տևեց շուրջ մեկ ամիս. այն սկսվեց հոկտեմբերի վերջերին և ավարտվեց նոյեմբերի 23-ին։ Ստուգատեսի ընթացքում հանդես եկան բազմաթիվ ինքնագործ խմբակներ և անհատ կատարողներ։ Ընդհանուր առմամբ, ստուգատեսին մասնակցողների թիվը հաշվվում է մոտ 10.000 հոգի։*



Գեղարվեստական ինքնագործունեության ռեսպուբլիկական օլիմպիադայի եզրափակիչ համերգի միացյալ երգեցիկ խումբը

*Նոյեմբերի 23-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնում տեղի ունեցավ օլիմպիադայի եզրափակիչ համերգը։ Այդ երեկո Երևանի հասարակության առաջ հանդես եկան ստուգատեսի ընթացքում աչքի ընկած լավագույն խմբերը և անհատ կատարողները։ Թատրոնի դահլիճը լեփ-լեցուն էր արվեստի և գրականության ասպարեզի աշխատողներով, մայրաքաղաքի ինտելիգենցիայի ներկայացուցիչներով։ Ներկա էին Հայաստանի կառավարության անդամները։*

*Երեկոն սկսվեց եզրափակիչ համերգի մասնակիցների միացյալ երգեցիկ խմբի ելույթով, որը, օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ կատարեց երիտասարդ երաժշտագետներ՝ Ստալինյան մրցանակի լաուրեատներ Ա. Հարությունյանի և Ա. Բաբաջանյանի «Առաջնորդին» երգը։*

*Թատրոնի հոյակապ կամարների տակ հնչում են հանդիսավոր երգի խրոխտ ելևէջները՝ 400 հոգուց բաղկացած երգեցիկ խմբի կատարմամբ։ Դա մի սրտաբուխ ձայն էր այն մեծ մարդուն, ուսուցչին և առաջնորդին, որի ցուցումներով և առաջնորդությամբ հայ ժողովուրդն ընթանում է իր երջանիկ կյանքի ճանապարհով, ընթանում դեպի իր պայծառ ապագան։*

*Լսելով այդ հիանալի համերգը, դիտելով նրա մասնակիցների կատարողական բարձր վարպետությունը, չի կարելի սրտանց չուրախանալ ժողովրդի գեղարվեստական ինքնագործունեության բուռն վերելքով, այն արվեստով, որը գալիս է ժողովրդական զանգվածների խորքերից, իր վրա կրում է ժողովրդի շունչը, կատարողական արվեստի ինքնուրույնություն, թարմություն։*

*Բազմազան էր եզրափակիչ համերգի ծրագիրը։ Հասարակության առաջ հանդես եկան Հայաստանի տարբեր ծայրերից եկած բազմամարդ երգեցիկ խմբեր, ժողովրդական գործիքների և սիմֆոնիկ նվագախմբեր, կա-*

տարողական բացառիկ վարպետությամբ օժտված պարային խմբեր, բազմաթիվ հիանալի մենակատարներ։

Ի՞նչ տարածում ուներ անցյալում հայ իրականության մեջ խմբական երգեցողությունը։ Գրեթե ոչ մի՝ եթե չհաշվենք դպրոցական կամ սիրողներից կազմված շատ հազվագյուտ խմբերը։ Այժմ այդպիսի խմբերի կարելի է հանդիպել յուրաքանչյուր գյուղում թե քաղաքում։ Հենց միայն ստուգատեսի ընթացքում հանդես եկան մոտ 100 երգեցիկ խմբեր, որոնցից 14-ը իրավունք ունեցան մասնակցելու եզրափակիչ համերգին։

Այս բոլոր խմբերը կատարում են գլխավորապես ժողովրդական երգեր անցյալ և ժամանակակից հայ նշանավոր երաժշտագետներ՝ Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Ս. Մելիքյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Կ. Զաքարյանի և մյուսների մշակմամբ։

Գեղարվեստական ինքնագործունեության ամենատարածված ձևը մեզանում ժողովրդական երգի և պարի խմբերն են։ Ներկայումս Հայաստանի խոշոր գյուղերից, արդյունաբերական ձեռնարկություններից և շրջանային կենտրոններից շատերն ունեն այդպիսի խմբեր։ Դրանք բաղկացած են երգել, պարել և նվագել իմացող շնորհալի



Սովետաշենի երգեցիկ խումբը

խմբական երգեցողության կուլտուրան արագորեն զարգանում է մեր երկրում, դառնում ժողովրդական խավերի գեղարվեստական ինքնագործունեության սիրված ձևերից մեկը։ Այս մասին էր վկայում ժողովրդական ստեղծագործության անցած ստուգատեսը։ Խմբական քառաձայն երգեցողության հիանալի կոլեկտիվներ պետք է համարել Էջմիածնի, Կիրովականի, Ղափանի, Կոտայքի, Ստեփանավանի կուլտուրայի տների, Երևանի Անասնաբուժական ինստիտուտի ուսանողների և Լենինականի «Պողպատամանելի» տղամարդկանց երգեցիկ խմբերը։

երիտասարդներից և աղջիկներից։ Ազգային գունեղ տարազը, ժողովրդական կենսուրախ երգն ու նվագը, աղջիկների հեզաճկուն և տղաների առնական ռիթմիկ պարերը այդ խմբերին տալիս են ուրույն գրավչություն, դարձնում ամենքի համար սիրելի։ Եվ իզուր չէ, որ երգի ու պարի խմբերը ներկայումս գեղարվեստական ինքնագործունեության ամենատարածված ձևն է Հայաստանում։

Եզրափակիչ համերգին ելույթ ունեցան այդ խմբերից ամենալավերը։ Պետք է նշել Լենինականի Գուլպա-տրիկոտաժ գործարանի, Արտաշատի և Աշտարակի կուլտուրայի

տների երգի-պարի խմբերը։ Չի կարելի առանց հիացմունքի դիտել այդ խմբերի ելույթը։ Բացառիկ հոգատարությամբ և խնամքով է մշակված ամեն ինչը՝ և՛ երգերը, և՛ նվագը, և՛ կատարողների հագուստը։ Ամեն ինչում նկատելի է նուրբ ճաշակ, հոգատար ձեռք, զարմանալի վարպետություն պարերի մեջ։

Ժողովրդական ստեղծագործության սատուգատեսի մյուս բնորոշ գիծը՝ երաժշտական կուլտուրայի խոշոր զարգացումն է մեզանում։ Մեր ժողովրդի մեջ կան հիանալի ինքնուս երաժիշտ կատարողներ, կան վերին աստիճանի վարժ երաժշտախմբեր։ Էջմիածնի, Կիրովականի, Արտաշատի կուլտուրայի տների, Բերիայի շրջանի Միկոյանի անվան արտելի և այլ շրջաններից եկած ժողովրդական գործիքների նվագախմբերին փոխարինեցին Երևանի Պետական համալսարանի, Պոլիտեխնիկական ինստիտուտի, Կիրովականի կուլտուրայի տան ինքնագործ սիմֆոնիկ նվագախմբերը, որոնք մեծ վարպետությամբ կատարեցին հայ և օտար երաժշտագետների ստեղծագործություններից։ Եվ զարմանալի չէ, որ այդ նվագախմբերը արժանացան հասարակության ամենաջերմ ընդունելության։ Արժե հատկապես հիշատակել Երևանի Պետական համալսարանի սիմֆոնիկ նվագախմբի ելույթը, որը երիտասարդ դիրիժոր Ե. Ոսկանյանի ղեկավարությամբ մեծ եռանդով կատարեց հայ նշանավոր երաժշտագետ Արամ Խաչատրյանի «Երգ Ստալինի մասին» և «Սրբերով պարը» «Գայանե» բալետից։

Բայց ահա բեմի վրա է մի ուրույն նվագախումբ՝ բաղկացած 5 հոգուց։ Նրանցից ամենամեծը 50-ը անց, ալեխառն մազերով մի տղամարդ է, իսկ ամենափոքրը՝ հազիվ 6 տարեկան մի աղջիկ։ Դա հայրենադարձ Վահան Կոնթուրջյանն է իր 4 երեխաներով։ Հայրենիք վերադառնալուց հետո նա բնակություն է հաստատել Գորիս քաղաքում, աշխատում է որպես մանկավարժ։ Ամբողջ ընտանիքը ջութակի վրա նվագում է Կոմիտասի «Հաբրբանը», արժանանալով դահլիճի թունդ ծափահարություններին։

Եզրափակիչ համերգում իրենց կատարողական բացառիկ վարպետությունը ցույց տվին ինքնուս դաշնակահար Ա. Կուպալյանը, կոլտնտեսական Ռ. Սարգսյանը (նվագ բաժակների վրա), Կիրովականի Մեխանիկական գործարանի խառատ Հ. Քարաչյանը (երգ), ուսանող Ա. Բաբայանը (ակորդեոն), ուսուցիչ Լ. Բարսեղյանը (սրինգ) Հոկտեմբերյանի Պահածոների գործարանի բանվորուհիներ Վ. Հովհաննիսյանը և Սարգսյան քույրերը, ինչպես նաև ուրիշ շատ մենակատարներ։

Համերգը վերջացած է։ Մի պահ վարագույրը փակվում է։ Եվ երբ կարճատև դադարից հետո այն կրկին բացվում է, գեղեցիկ զարդարված բեմի վրա իրենց տեղերն են գրավել եզրափակիչ համերգի բոլոր մասնակիցները։ Նրանք Թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ կատարում են Սովետական Հայաստանի պետական հիմնը, որի հնչյունները հանդիսավոր կերպով տարածվում են դահլիճի վեհ կամարների տակ։

Գեղարվեստական ինքնագործունեության ռեսպուբլիկական օլիմպիադան ժողովրդական ստեղծագործության իսկական տոն էր, ժողովրդի ճիշտ ու սքանչելի երգերի, արտասովոր երաժշտության, հախուռն և առնական պարերի լայն ցուցադրում, ժողովրդական տաղանդների կատարողական վարպետության ստուգատես, որը մի անգամ ևս ցույց տվեց մեր ժողովրդի հոգեկան կուլտուրայի ողջ հարստությունը, նրա ստեղծագործական անսպառ կարողությունները։

ԹՂԹԱԿԻՑ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ԵՐԵՎԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

## 11. ՆՈՐ-ԿԻԼԻԿԻԱ

*Օրեցօր ընդարձակվում, բարեկարգվում է Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը։ Այստեղ, ոչ միայն կառուցվում և շահագործման են հանձնվում նորանոր գործարաններ, բազմահարկ բնակելի շենքեր և հասարակական սպասարկման ձեռնարկություններ, այլ նաև, կարճ ժամանակամիջոցում գոյանում են մեկը մյուսից գեղատեսիլ, մեկը մյուսից բազմամարդ թաղամասեր, արվարձաններ, ավաններ։*

*Որպես ծագումով հին կիլիկեցու, այդ նորահաստատ ավաններից ինձ առաջին հրապուրողն եղավ Նոր-Կիլիկիան։*

*Կիրակի է։ Քայլում եմ Ստալինյան լայնարձակ պողոտայի վրա, ուր անընդհատ եռուզեռ կա։ Կայտառ, ինքնավստահ, գեղադեմ երիտասարդներ ու երիտասարդուհիներ շրջագայում են մայթերի վրա։ Նրանց խոսակցությունը, համարյա առանց բացառության, վերաբերում է դպրոցին, դասերին, ուսման, հետագայում իրենց ընտրելիք մասնագիտության։*

*Կենտրոնական ծածկած շուկայում, պողոտան եզերող վաճառատներում եռում է կուլտուրական առևտուրը։ Ո՛չ մեկ ժխոր, ո՛չ մեկ անկարգություն, ո՛չ մեկ տարաձայնություն վաճառորդների և գնորդների միջև։*

*Վաճառատների ցուցափեղկերն առատորեն լիքն են հագուստեղեններով, կոշիկներով, անային կահ-կարասիքներով, ուտեստեղեններով, տնտեսագործական և էլեկտրական գործիքներով, ռադիո-ընդունիչներով, նվագարաններով, մանկական խաղալիքներով, անուշահոտության արվակներով։ Ուշագրավ են նաև ծաղկավաճառանոցները, որտեղ որքա՜ն գնորդներին, նույնքան և անցորդներին ժպտում են վարդերի, շահոքրամների, կրիզանթեմների կողքին, մերձարևադարձային ծաղիկներ կամելիան, զափնեվարդը, բեգոնիան, իսպանական խորդենին, կակտուսը և այլն։ Երևանում հազվագյուտ են այն տները, որոնց պատուհանների առաջ չգտնվեն ծաղկաթաղարներ։*

*Անհատական կամ հանրային գործով, այլևայլ թաղամասերում բնակվող ազգականներին ու բարեկամներին այցելելու և դեպի տեսարժան վայրեր էքսկուրսիա կատարելու նպատակով ճամբա ելած ուղևորներով լի տրամվայները, տրոլեյբուսները, ավտոբուսները ու մարդատար տակսիները սուրալով անցնում են պողոտայով։ Բայց ես անչափ սիրում եմ քայլելով իջնել դեպի Հաղթանակի կամուրջը, Կարմիր բանակի փողոցից հետաչում թողած Ս. Սարգսի անվան կանաչագմբեթ եկեղեցին, որտեղ պաշտոնավարում է Հունաստանից հայրենադարձ տեր Հովսեփ քահանա Քյոսեյանը։*

*Մայթի վրա կանգնած, մի րոպե դիտում եմ եկեղեցուց դուրս եկող ժամվորներին։ Եվ ինձ այնպես է թվում, որ յուրաքանչյուր ժամվոր մի շառաչուն ապտակ է Սովետական Հայաստանի զրպարտիչների երեսին, ինչպես շառաչուն հարված է նրանց երեսին մեր երկրում բացված յուրաքանչյուր շրանցք, կառուցված յուրաքանչյուր կոմունալ սպասարկություն, կատարված յուրաքանչյուր գյուտարարություն։*

*Հիմա, կանգնել եմ Հաղթանակի կամրջի վրա, որի միայն երկաթակերտ ամրակուռ բազրիքներով եզերված երկու մայթերը միատեղ ավելի լայն են, քան, օրինակի համար, Բեյրութի Անդր-Նահրի կամուրջը ամբողջությամբ վերցրած։*

*Հաղթանակի կամուրջը սովետահայ ժողո-*

---

1. Շարունակված ամսագրի 1982 թվականի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր-հոկտեմբերի համարներից։

վըրդի շինարարության և հայկական ճարտարապետության հավերժական կոթողներից մեկն է, որի գրանիտե լայնատարած կամարների տակ մեղմանում, հեզանում և հանդարտ սահում են վերից, Միծեռնակաբերդի ժայռոտ կողերից մեծաշառաչ իջնող Հրազդան գետի վարարուն ջրերը։

Այստեղ, Հաղթանակի կամրջի վրա, պարզվում է նոր տեսարան, բոլորովին տարբեր քաղաքամիջի տեսարանից։ Գեղեցիկ է քաղաքամեջը՝ լայնարձակ պողոտաներով ու ծառաշարքերով, արձանազարդ հրապարակներով ու վարդագույն, դեղին, սպիտակ տուֆաքարերով և զմայլելի հայկական ոճով կառուցված բազմահարկ շենքերով, որոնց Ստալինյան պողոտայի վրա կազմած մարգարտանման շարքի վերջնագույնն է Գիրճ Պռոշյանի անվան հոյակապ միջնակարգ դպրոցը։ Գառերի վրա գինու քարաքանդակ տակառներ ունեցող մյուս հսկա շենքը «Արարատ» գինեգործարանի պահեստանոցն է, որն առավել փայլ է տալիս Հաղթանակի կամըրջի վրա պարզվող բնական գեղեցկության։

Այստեղ, Հաղթանակի կամրջի վրա, հորիզոնը չի սահմանափակվում բարձրաբերձ կառույցներով։ Այստեղ երկինքն ավելի լայնատարած է երևում, արևը՝ ավելի լուսառատ, դաշտերն ավելի լայնարձակ և Զանգուն, մանավա՛նդ Զանգուն, ավելի հմայիչ։

Նրանք, ովքեր եղել են Լիբանանի Զահլե քաղաքում և նրա Վադի կոչված հովտում, անպայման պիտի փորձվեն համեմատել նրան Զանգվի հովտի հետ։ Սակայն նման մի փորձ մեղանչում է և՛ չափագիտական, և՛ գեղագիտական՝ էսթետիկական տեսակետով։ Զահլեի Վադին մի հեղեղատ է։ Այնտեղ, ամառ ժամանակ, համարյա ջուր չես գտնի, իսկ կանաչավետ մարզը խիստ սահմանափակ է, հազիվ մի քանի հարյուր մետր երկարություն ունի։ Վերջըրե՛ք էլեկտրական գույնզգույն լամպերը, որոնք արհեստական գեղեցկություն են տալիս, Զահլեի Վադին կդառնա ամուլ ու անհրապույր մի ձորակ։ Մինչդեռ Զանգվի հովիտը, ջրի առատությամբն ու կախարդիչ սահանքովը, երկու եզերքների առատ բուսականությամբը, հոյատեսիլ ապառաժներովն ու դահավեժներովը, բնական գեղեցկությունների մի անհունություն է։ Միայն Հաղթանակի կամրջի աջին ու ձախին գտնվող հովտի պատառիկը անհամեմատելիորեն ավելի գեղեցիկ է քան Զահլեի Վադիի ամբողջ երկարության պարզվող գեղեցկությունները։

Կամրջագլխի ցայտաղբյուրի սառնորակ ջրից անհագորեն խմում են ու զովանում անցորդները, իսկ ես դիտում եմ Զանգվի երկու ափերի վրա բացված ջրանցքները, որոնք կյանք ու առատություն են տանում զռերին։ Նվ միտս է գալիս 1927 թվականը։

Այդ թվին էր, որ Ազգերի լիգայի որոշմամբ և Սովետական Միության համաձայնությամբ Երևան ժամանեց միջազգային մի հանձնախումբ, գլխավորությամբ հայասեր նորվեգիացի Ֆրիդտյոֆ Նանսենի, ուսումնասիրելու համար Սարդարապատի (Արարատյան դաշտի) ոռոգման և առաջին համաշխարհային պատերազմից հետո չորս հովերին տարտըղնված 50.000 տարագիրների այնտեղ փոխադրելու և տեղավորելու կարելիությունները։ Հանձնախումբը, իր տեղեկագրի վերջում, Ազգերի լիգային հանձնարարում էր ջրանցքների բացման, ճահիճների չորացման և տարագիր 4.000 ընտանիքների փոխադրության և տեղավորման համար 9.000.000 ոսկի ռուբլու կամ 1.000.000 ստերլինգի փոխատվություն անել Սովետական Հայաստանի կառավարության, որը խոստացել էր երաշխավորել հիշյալ փոխատվության մարումը 10 տարվա ընթացքում։

Եվ գիտենք ի՛նչ պատահեց — Ազգերի լիգան տանկացավ, արևմտա-եվրոպական պետություններն ու Ամերիկայի Միացյալ Նահանգները ո՛չ միայն չհարգեցին Համաշխարհային առաջին մեծ պատերազմի ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ բարձրաղաղակ իրենց հայտարարած խոստումները, այլև կուլ տվին այն 5.000.000 ոսկի ստերլինգը, որը Թյուրքիան ի պահ էր դրել գերմանական բանկերում, կողոպտելով թյուրքահայերի հարստությունը՝ պատերազմի հենց առաջին տարին։

Եվ սակայն, շնորհիվ Սովետական Միության կառավարության անդուլ հոգատարության, Հայաստանի տերիտորիայում կառուցվեցին ո՛չ թե ոռոգման մի գիծ, այլ ջրանցքների բազմաթիվ ցանցեր, որոնք կյանք ու կենդանություն են բաշխում անցյալում անջըրդի հողերին, խոպան դաշտերին և լերկ բլուրներին։

Այդ տեսակ լերկ մի բլուր է եղել այն բլուրը, որի վրա այժմ հիմնադրվել է Նոր-Կիլիկիա ավանը, Էջմիածնի խճուղու հենց սկզբնակետում։

Նոր-Կիլիկիայի առաջին շենքն է Հայաստանի ամենանշանավոր արդյունաբերություններից եղող Կոնյակի գործարանը, որը, երկնակարկառ կանգնած, հսկում է Հաղթանակի կամրջի հյուսիս-արևմուտքին։ Լայնարձակ սանդուղքներ կամուրջը միացնում են դեղնավուն ընտիր տուֆքարաշեն այս վիթխարի կառույցին՝ Կոնյակի գործարանին, որի ստվերն արտացոլվում է Հրազդանի ջրերի մեջ։ Իսկ ամենավերջին շենքն է վարդագույն ընտիր տուֆքարաշեն Գառերի գործարանը։

*Կոնյակի գործարանի և Գարեջրի գործարանի միջև տարածվող այս բլուրը, որի վրա այժմ, 1.000-ից ավելի հաշվվող հայրենադարձ ընտանիքների քարաշեն և համարյա բոլորն էլ երկհարկանի բնակարաններն են բարձրանում, երբեմն կոչվել է Դալմայի այգեստան։*

*1947 թվականի վերջերին, բայց մանավանդ 1948 թվականին, դեռևս Նոր հայրենադարձների նախաձեռնությամբ կառուցվել են առաջին բնակարանները Նոր-Կիլիկիայի, որը կազմում է Հաղթանակ ավանի առաջին թաղամասը։ Այդտեղ բնակություն են հաստատել, բացի կիլիկեցիներից, Սիրիայից ու Իրաքից, Եգիպտոսից, Ֆրանսիայից, Ամերիկայից, Հունաստանից, Բուլղարիայից ու Ռումինիայից ներգաղթած բազմահարյուր հայ ընտանիքներ։*



Երևանի Կոնյակի գործարանը

*Այնտեղ իրենց սեփական բնակարաններն են կառուցել, ի միջի այլոց, կիլիկեցիներից՝ գրողներ Գրիգոր Քեշիշյանը, Գրիգոր Գյուլյանը, Արամ Արմանը, Հրաչ Բուջիգանյանը, Վրույր Դարբինյանը (այժմ փաստաբան), ուսուցիչ Գեորգ Սարգսի Բալյանը, Հաջի Սարգիս Ղարիբյանը, Սիմոն և Հովհաննես Մանդոյանները, Հալեպում հանրածանոթ աշուղ-գուսան Պարգև Տեր-Պողոսյանը, Փայլակ Իսրայելյանը և Եղիշե Վարդերեսյանը, որը «Էջմիածին» ամսագրի ժրաջան աշխատակիցներից է։ Այնտեղ են բնակվում նաև ծանոթներից Երևանի օտար լեզուների ինստիտուտի դասախոս Գեղամ Շահինյանը և Վարուժան Սարգսյանը։*

*Վարդերեսյանենց պատշգամբից, ես հիացումով դիտեցի Նոր-Կիլիկիայի հարավում տարածվող զմայլելի տեսարանը։ Ջանգուն կարկաչաձայն հոսում, գնում է դեպի Արարատյան դաշտը, որի ծայրագույն սահմանում վեհապանծ կանգնել են սպիտակափառ Մեծ Մասիս և թիկնած Փոքր Մասիս սարերը, իսկ ավելի մոտ, Հաղթանակի կամրջի երկայն կամարների տակից սկսյալ, հետզհետե լայնացող, տարածում դարձող Ջանգվի հովտի համայնապատկերի վրա, հատկանշական գեղեցկությամբ, պատկերագծվել է Երևանի ոսկի աշունը։ Դեղնել են ու թափվել տերևները պտղատու ծառերի և որթատունկերի, որոնք այնքան առատ են Սարդարի այգիներ կոչվող այդ արգավանդ տարածությունների վրա։ Թախրովի անվան ավանն է այդ, որը Երևանին կապվել է մի հին կամրջով, Սարդարի պալատի մնացորդների մոտ։*

*Նոր-Կիլիկիան ունի կուլտուրայի տուն,*

գրադարաններ, գրախանութ, ակումբ և նրան կից ինքնագործ խմբակ, կինո և երեխաների համար քառամյա դպրոց։ Հինգերորդից սկսյալ ավելի բարձր դասարանների աշակերտները հաճախում են Թումանյանի և Պռոշյանի անվան միջնակարգ դպրոցները։ Ներկայումս առժամանակյա շենքերում ամփոփված վերոհիշյալ հիմնարկների համար նախատեսված է կառուցել ամեն տեսակ հարմարություններով օժտված շենքեր։ Էջմիածնի խճուղու աջակողմը, Գարեջրի գործարանի մերձակա թաղատանում, կառուցվելու է տասնամյա միջնակարգ դպրոցը։

Օրեցօր բազմանում են Նոր-Կիլիկիայի բնակելի շենքերը։ Ավանը զարգանում է դեպի Թիկունքի՝ Միծեռնակաբերդի բլուրն երկարաձգվող այգեշատ տարածությունները։ Միայն սովետական երկրի հատուկ շինարարական այսքան արագ և հզոր տեմպով, Նոր-Կիլիկիան, շատ կարճ ժամանակամիջոցում, կդառնա մայրաքաղաք Երևանի ամենագեղեցիկ արվարձաններից մեկը։

— Երջանիկ եմ, շա՜տ երջանիկ,— ասաց տիկին Հեղինեն, ինձ ընդունելով իր քարաշեն բնակարանի մեջ. բաղկացած երեք օդասուն սենյակից և խոհանոցից։ Նորատունկ պտղատու ծառերով զարդարվել սկսած տնամերձ պարտեզով շրջապատված է այդ բնակարանը։

Տիկին Հեղինեն 80 տարեկան թևակոխած մի կին է, որի ամուսինը՝ Սարգիս Բալյանը, 1915 թվականի հունվարին, թուրք ոստիկանների կողմից ձերբակալվեց Չորք-Մարզպանում (Կիլիկիայի Դյորտ-Յոլ ավանում) և մահացավ Ադանայի Կափը-ալթը կոչված բանտում։

— Բազմաթիվ հայրենակիցների հետ միասին ամուսնուս բանտարկելուց հետո, ինչպես հայտնի է, Դյորտ-Յոլի հայությունն էլ տարագրվեց դեպի Սիրիական անապատները,— սկսեց տիկին Հեղինեն թոթվել անցյալը և պատմեց, թե ինչպես ինքն իր որդիների հետ, Եփրատի եզերքում՝ Ռաքքայում ու Մեսքենեում ճաշակել է տարագրության դառնությունները, ենթարկվել հայ ցեղի դահիճների հալածանքին, ականատես եղել Եփրատ գետի պղտոր ջրերի մեջ փրկություն փնտրող հուսահատ հայերի խեղդամահ լինելու սրտակեղեք տեսարաններին, թե ի՜նչ հույսերով է դարձել իր ծննդավայրը՝ Չորք-Մարզպան, թե ի՜նչքան մեծ վշտով է թողել Կիլիկիան՝ հարյուր հազարավոր հայերի հետ, ու տասնյակ տարիներ ապաստանելուց հետո Ալեքսանդրետի սանջակում, սիրիական այդ հողամասի անգլո-ֆրանսիական խարդախ դիվանագիտության կողմից Թյուրքիային զիջվելու հետևանքով, անցել Քեսաբ։ Ու, բազկատարած՝

— Փա՜ռք, հավիտյանս հավիտենից օրհնությո՜ւն Սովետական մեծ Միության և Սովետական Հայաստանի իմաստուն ղեկավարներին, որոնք մեզ փրկեցին թափառական այդ կյանքից, կազմակերպելով հայրենադարձություն և մեզ շնորհելով վերածնված Հայաստանի գրկում անվիշտ ապրելու բախտավորությունը,— աղոթում է տիկին Հեղինեն։

Երեկոն իջել է արդեն Նոր-Կիլիկիայի վրա։

Համար առաջին փողոցի առաջին խաչմերուկում կանգ առած մի ավտոբուս, որի կողերին մակագրվել են «Նոր-Կիլիկիա—շուկա» բառերը, ուրիշ ուղևորների հետ ինձ էլ կփոխադրի քաղաք, մինչ էլեկտրական լույսով ողողված մի սենյակից լսվում է անծանոթ մի հայուհու քաղցրահունչ երգը.

«...Հասակ մը կայ մեր կենաց մէջ.
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարև՝
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արև»։

Եթե այդ երգը դամբանականն է Արևելյան Միջերկրականի հյուսիսում, Ամերիկայի Միացյալ Նահանգների և արևմտա-եվրոպական պետությունների ամարդի շահամոլության զոհ Հայկական Կիլիկիայի, միանգամայն դովերգությունն է Սովետական մեծ Միության անհուն հոգատարությամբ վերածնված Սովետական Հայաստանի մայրագորով ծոցում օրեցօր բարգավաճող Նոր-Կիլիկիայի։

## ՆՈՐՔ—ՆՈՐ-ՄԱՐԱՇ

Երևանի համարյա ամբողջ արևելքն է գրավում Նորքը, իր հինավուրց և նորակառույց թաղամասերով։

Հին Նորքը, Գետառի հովտի ձախում, Երևանի համայնապատկերի վրա կամար կապած Արգեստանի հյուսիսն է գրավել։ Նա պտղատու ծառերի՝ ընկուզենու, սալորենու, տանձենու, դեղձենու, ծիրանու, սերկևիլի, նշենու և ոչ պտղատու ծառերի՝ բարդիների. հացենիների ու թխկիների հոծ ստվերի տակ ծվարած մի հրաշատեսիլ անկյուն է, իսկ նորակառույց Նորքը, համանուն բլրի երևանահայաց կողի վրա, մի ընդարձակ ավան է։ Հազարավոր քարաշեն տներով այս

ավանն է, որ կառուցել են հայրենադարձները 3—4 տարվա կարճ ժամանակամիջոցում, Սովետական կառավարության կողմից տրամադրված դրամական վարկով՝ յուրաքանչյուր տնտեսության 30.000 ռուբլի։

Թեև նորակառույց Նորքի առաջին թաղամասը կոչվում է նաև Նոր-Մարաշ, սակայն այդ թաղամասի, ինչպես մյուս երկու թաղամասերի բնակիչները, զուտ մարաշցիներ չեն. կան նաև Սիրիա—Լիբանանից, Ֆրանսիայից, Ամերիկայից, Եգիպտոսից, Պաղեստինից և արտասահմանի այլ երկրներից 1946 և 1947 թվականներին ներգաղթած հայրենադարձներ։

Բանաստեղծ Սարմենը, «Խաչատուր Աբովյան» վերնագրված իր գովերգությունում, որը կոմպոզիտոր Ա. Մերանգուլյանի կողմից վերածված է ժողովրդական երգի, հիշատակում է Նորքը, որպես «Հայաստանի վերքի երգչին սիրելի մի վայր».

«Դու փրկարար ռուս մեծ ազգին
Փառքի երգեր ձոնեցիր,
Նրա խիզախ, հզոր հոգին
Քո մեծ սրտով սիրեցիր։

Երանի թե մի օր հանկարծ
Քանաքեռից իջնեիր
Եվ քո սիրած Նորքում կանգնած
Երևանին նայեիր»։

Արդարև, մայրաքաղաքի բարձրադիր արվարձաններից ո՛չ մեկը չունի տեսարանի այնքան համայնապատկերություն և հետաքրքիր գեղեցկություն, ինչքան ունի նորակառույց Նորքը։ Ընդարձակ Երևանը, իր հեռավորագույն արվարձաններով, Նորքի բարձունքից մինչև Սովետաշեն, մինչև Թերիա, մինչև Էջմիածին, մի խոսքով Երևանյան դաշտն ամբողջ փռվել է Նորքի առաջ։ Եվ Մասիսները, հայկական լեռնաշխարհի հետ միասին, ավելի ամբողջական, ավելի լրիվ են երևում Նորքի բարձունքից, քան ուրիշ որևիցե վայրից։ Ահա թե ինչո՞ւ մեծ դյուցազներգակ Աբովյանը սիրած է Նորքը։ Ահա, թե ինչո՞ւ բանաստեղծ Սարմենը ցանկանում է, որ Ստալինյան դարաշրջանի բոլոր բարիքներով օժտված և յուրաքանչյուր օր նորանոր գեղեցկություններով բարգավաճող Երևանը, իր փթթումի ամեն մանրամասնությամբ մեջ տեսնել կարողանալու համար, անհայտ կորած, անդամբան, անմահ Աբովյանն» ընտրի Նորքը, ամփիթատրոնաձև Երևանի ամենագրավիչ դիտարան Նորքը։

Հայաստանի վառ արևը ակնախտիղ լույս էր ցնցուղում երկնքից, երբ ես, Աբովյան փողոցի հյուսիսային ծայրամասից, կանաչավետ ու գեղածիծաղ մի բուրաստանի կենտրոնում սլացիկ բարձրացող Աբովյանի արձանի մոտիկ, գլխավոր կանգառից ավտոբուս նստեցի, Նորք բարձրանալու համար։

Հիանալի է այս ուղևորությունը բազմազան ծառերի թանձր ստվերի ներքո ոլորապտույտ դեպի բլրի կողն ի վեր մագլցող խճուղու վրայից, բայց, ափսո՛ս, շատ կարճատև է։ Քառորդ ժամից հետո, ավտոբուսը մեզ՝ ուղևորներիս իջեցնում է ծառաստանից անմիջապես դուրս գտնվող մի կանգառում, ուր իրեն են սպասում քաղաք իջնելու նպատակով հավաքված տարբեր ուղևորներ։

Կանգառից ուղիղ դեպի հյուսիս-արևելք բարձրացող լայն փողոցը Նոր-Մարաշ կոչված թաղամասի մայր երակներից մեկն է, որի վրա ես հանդիպեցի հին ծանոթներիս՝ ընկեր Նազարեթ Աբովյանին (Բեյրութից), դեղագործ Ավետիս Մուրադյանին (Զահլե-Թայակից), Հակոբ Գյոզողլյանյանին (Երուսաղեմից, բնիկ չորք-մարզպանցի), Մերսինի որբուհիներից տիկին Հռիփսիմե Տերտերյանին (Ֆրանսիայի Վալանս քաղաքից), բոլորն էլ երջանիկ, իրենց սեփական բնակարանների մեջ։

Ջերմ արևի դիմաց, իր իսկ ձեռքովը կառուցված քարաշեն բնակարանի շեմքին էր նստել Գյող Իսկենդերը՝ Հալեպից ներգաղթած վաթսունամյա մի հայրենակից։

— Եթե չլիներ Հայաստանի անմահական ջուրն ու հրաշալի օդը, վաղուց ինձ տարած կլիներ այս անպիտան ցավը (դժվարաշնչությունը), որի արմատը շատ հեռուները, այնտե՞ղ, այնտե՞ղ է երկարձգվում,— ասում է նա, աջ ձեռքովը ցույց տալով Արարատից հարավ ընկնող երկիրը...։ Հետո, մի պահ շունչ առնելով, նա շարունակում է.

— Շնորհիվ մեր կառավարության հոգատարության, ժամանակ առ ժամանակ գնում

*եմ հանգստյան, դարմանվելու, կազդուրվելու։ Ո՛չ վաղվա անորոշությունն ունեմ, ո՛չ էլ ավազակների կողմից առևանգվելու մղձավանջը։*

*Այս վերջին խոսքով նա ակնարկում է այն դեպքը, որը պատահեց 1921 թվականին Ջորջ-Մարզպանում, երբ թյուրք ավազակներ առևանգեցին նրան և չազատեցին, մինչև չստացան պահանջված փրկագինը։*

*Նորքում հանդիպեցի նաև Թեյլանում և Աֆրիկում ծանոթ աչագուրկ ջրաղացպան Գևորգ Նարգիզյանին (մարաշցի) և հին աշակերտներիցս՝ Տիգրան Վահրամի Քեչիշյանին։ Նրանք ևս, ինչպես բոլոր հայրենադարձները, գոհ ու երջանիկ էին այն բանի համար, որ միանգամ ընդմիշտ ազատվել էին պանդխտության հյուծիչ տառապանքներից և արտասահմանյան հարուստների անսիրտ շահագործումից։*

*Ամենահուզիչն եղավ այն տեսակցությունը, որն ես ունեցա իմ հարազատ հորեղբորորդու՝ Իսկենդեր Տեր-Ստեփանյանի հետ։*

*Ցոթանասունհինգամյա իմ զարմիկը իր սեփական տան դռան առաջ իր իսկ ձեռքերով տնկված ծաղկաստանի մեջ կանգնել էր իր մի հատիկ թոռնիկի՝ միամյա Հովհաննեսի հետ։ Հեռվից ես լսում էի նրա դողդոջուն, հանպատրաստից հորինած երգը.*

*«Դե՛, իմ բալիկ, շուտ մեծացիր,*
*Դպրոց գնա՛, ուսում սովրիր.*
*Ու մեր սիրուն Հայաստանի*
*Արժանավոր զավակ դարձիր։*

*Դե՜, իմ բալիկ, իմ ջա՜ն բալիկ,*
*Մատաղ լինի քեզ քո պապիկ.*
*Հայաստանի քնքուշ գրկում,*
*Ապրի՛ր ուրախ և երջանիկ»։*

*Սրտագեղ եղավ մեր ողջագուրումը։ Նա պատասխանելով իմ այն խոսքին, թե համեմատած ինձ հետ (ես նրանից շատ փոքր եմ), դեռևս երիտասարդ է թվում, ասաց ժպտելով.*

*— Որովհետև ես քեզանից 6 տարի առաջ եմ եկել Հայաստան և վայելում եմ նրա անմահական ջուրն ու հրաշալի օդը։*

*Իմ զարմիկի առաջին գործն եղավ ինձ ցույց տալ իր տունը, որն ունի երկու լուսավոր և օդասուն սենյակներ, մի նրբանցք և մի լայնանիստ պատշգամբ։ Այս պատշգամբից ես դիտեցի Երևանի հիասքանչ համայնապատկերը։ Հետո, միասին փչանք տնամերձ պարտեզը, ուր հասակ առած տանձենիների, ծիրանենիների և սալորենիների ստվերի տակ ժպտում էին անանուխը, կոտեմը, բողկը, լոլիկը (պոմիդորը), սմբուկը (բադինջանը), կաղամբը, ազատքեղը, լոբին։*

*— Երբ այս ջրանցքը,— ասում է իմ զարմիկը ցույց տալով հողաբաժինն եզերող ջրանցքը,— ունենա նոր ճյուղավորումներ, մեր Նորքը կդառնա մայրաքաղաքի հովոցը, ինչպես է ջրանցքի մյուս կողմում, միջինավոր ծառերի կանաչի մեջ լողացող Այգեստանն իր մանկական բուժարանով, հանգստարանով, վիլլաներով։ Իսկ երբ տրամվայն էլ անցնի— և անպայման պիտի անցնի— մայրաքաղաքացիները պիտի նախանձեն մեզ՝ Նորքի բնակիչներիս վրա։*

*Ես ուրախ էի ի տես իմ զարմիկի երջանկության, մանավանդ գրկած իր մեկ հատիկ որդու՝ Մխիթարի երեխային։*

*Մութը մաղվում էր արևմուտքից, երբ ամենուրեք շողշողացին Երևանի հարյուր հազարավոր էլեկտրական լամպերը։ Պայծառ, փողփողուն, աստղազարդ երկինք է կարծես Հայաստանի մայրաքաղաք Երևանը գիշեր ժամանակ։ Երբ հրաժեշտ առի իմ ծերունի, բայց Հայաստանի մայրական ծոցում դեռևս իրեն երիտասարդ զգացող զարմիկից և իջնում էի Նորքի զառիթափն ի վար, նայելով էլեկտրական լույսերի մեջ շողշողացող մայրաքաղաքին, հոգեկան անխառն հրճվանքով երգում էի Սարմենի բառերը.*

*«Արևազարդ, դրվարթ Նորքից*
*Գայիր մեր մեծ խրնջույքին,*
*Ու քեզ տանջող քո հին վերքից*
*Հավետ բուժվեր քո հոգին։*

*Ժողովրդի զավակն ես դու*
*Կորած անհայտ, անդամբան,*
*Բայց միշտ կապրես դու մեր սրտում,*
*Մեր մեծ, անմահ Աբովյան»։*

(Շարունակելի)

# ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Սովետական Հայաստանի աշխատավորները Հոկտեմբերյան ռևոլյուցիայի տարեդարձը դիմավորեցին աչքի ընկնող նվաճումներով ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Բավական է հիշատակել այն փաստը, որ ռեսպուբլիկայում ավելի քան երեք տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ տարեդարձի նախօրյակին կատարեցին իրենց տարեկան արտադրական ծրագրերը։*

*Տոնի նախօրյակին՝ նոյեմբերի 4—5-ը բոլոր խոշոր հիմնարկներում, գործարաններում, ինչպես նաև գյուղերում և շրջանային կենտրոններում տեղի ունեցան աշխատավորների հանդիսավոր բազմամարդ ժողովներ՝ նվիրված մեծ Հոկտեմբերի տարեդարձին։*

*Տոնական տեսք էր ընդունել ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը։ Փողոցներն ու հրապարակները զարդարված էին դրոշակներով, կարմիր պաստառներով ու գորգերով, Սովետական պետության ղեկավարների նկարներով։*

*Նոյեմբերի 6-ի երեկոյան Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնում տեղի ունեցավ աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը։*

*Հաջորդ օրը, նոյեմբերի 7-ին, տոնական Երևանը զարթնեց առավոտյան շատ վաղ։ Այդ օրը փողոցները ծփում էին հոծ բազմությամբ։ Աշխատավորների տոնական շքերթին մասնակցելու համար փողոց էին ելել բանվորներ, ծառայողներ, ուսանողներ, գիտության, կուլտուրայի, արվեստի աշխատողներ։ Նրանք բոլորն էլ նախօրոք գրավել էին իրենց տեղերը՝ ըստ հիմնարկների և քաղաքի շրջանների։*

*Վեհ և հանդիսավոր տեսք էր ընդունել մայրաքաղաքի կենտրոնը՝ Լենինի հրապարակը։ Շրջապատի շենքերը զարդարված էին ավելի քան երբևէ։*

*Ժամը 10-ին սկսվում է զորահանդեսը։ Կառավարական ամբիոնի մոտով, զինվորական նվագախմբի հնչյունների տակ, համաչափ քայլ շարքերով անցնում են Սովետական փառապանծ Բանակի ռազմիկները։*

*Զորահանդեսից հետո սկսվում է Երևանի աշխատավորների շքերթը։ Նրանք իրենց կուռ շարասյուների առջևից տանում են բազմաթիվ դրոշակներ և ցուցատախտակներ, որոնց վրա գրված է, թե ինչ ցուցանիշների են հասել արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները մեծ տոնի նախօրյակին։*

*Շարասյուները հաջորդում են մեկը մյուսին։ Նրանց մեջ են անվանի գիտնականներ, գրողներ, նկարիչներ, ճարտարապետներ, երաժշտագետներ, դերասաններ։ Բոլորը, բոլորն անխտիր համակված են մի սրբազան վեհ ցանկությամբ՝ իրենց ամբողջ ուժերը, եռանդն ու կորովը, տաղանդն ու կարողություններն ի սպաս դնել սիրելի Հայրենիքին, աշխատել նրա հետագա ծաղկման ու բարգավաճման համար, խաղաղության գործի ամրապնդման համար։*

*Հրապարակով և նրան մերձակա փողոցներով մեկ հնչում են երգը, երաժշտությունը և ծիծաղը։ Ամենուրեք պարող աղամարդկանց ու կանանց խմբեր։ Նոյեմբերյան այդ պայծառ արևոտ օրը համաժողովրդական ցնծությունն ու ուրախությունը կարծես պոռթկացել էր իր սահմաններից, ողողել լուսաշող քաղաքը։*

*Ահա հրապարակ են մտնում դպրոցականների շարասյուները։ Նրանք տանում են թարմ ծաղկեփնջեր։ Որքա՜ն խինդ և ուրախություն կա նրանց շարքերում։ Սովետական ժողովուրդը հպարտանում է իր մատաղ սերունդով և ամենօրյա անսահման հոգատարությամբ է շրջապատել նրան։ Նրա համար բաց են կյանքի բոլոր դռները, հարթված՝ կյանքի բոլոր ուղիները, որոնք տանում են դեպի լուսաշող ապագան։ Ահա թե ինչո՞ւ այնքան կենսուրախ, այնքան կայտառ ու ինքնավստահ են մեր պատանիներն ու աղջիկները։*

*Աշխատավորների շքերթը շարունակվեց մինչև ցերեկվա ժամը 3-ը։ Լենինի հրապարակով անցան ավելի քան 180.000 աշխատավորներ։*

*Երեկոյան, երբ քաղաքը ողողվեց էլեկտրական լույսով, փողոցներն ու հրապարակները կրկին լցվեցին բազմությամբ։ Տասնյակ հազարավոր երևանցիներ դուրս էին եկել դիտելու տոնական հրավառությունը։*

*Իր եղբայրակից 16 մայրաքաղաքների հետ միասին ցնծում էր տոնական Երևանը, ցնծում էր Սովետական Հայաստանի ողջ հայ ժողովուրդը։*

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ.— Սովետական Հայաստանում ամեն տարի մեծ թվով նոր բնակարաններ են կառուցվում աշխատավորության համար։ Պետությունը հսկայական միջոցներ է ծախսում բնակարանային շինարարության վրա։ Բացի այդ, մեծ թվով բնակարաններ են կառուցում անհատ քաղաքացիները՝ պետությունից ստացած վարկերով։*

*Անցյալ 1951 թվականին ռեսպուբլիկայում բնակարանային շինարարության վրա միայն պետական բյուջեի հաշվին ծախսվել է 89.000.000 ռուբլի, չհաշված գերատեսչությունների (խոշոր հիմնարկների և ձեռնարկությունների) և անհատ քաղաքացիների կողմից կառուցված բնակելի շենքերը։ Այդ միջոցներով կառուցվեց և շահագործման հանձնվեց 74.000 քառակուսի մետր բնակելի տարածություն։*

*Ավելի լայն թափ է ստացել բնակարանային շինարարությունը ռեսպուբլիկայում ընթացիկ տարում։ Պետական բյուջեի հաշվին կառուցվելու է 84.000 քառակուսի մետր բնակարան։ Բացի այդ, անհատական շինարարության գծով ավարտվելու է 3.000 բնակելի տների կառուցումը, մոտ 120.000 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ։*

*Ընթացիկ տարում մեծ թվով բնակելի շենքեր են կառուցվել Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Ղափանում և ռեսպուբլիկայի այլ վայրերում, ուր հիմնադրվում են արդյունաբերական նոր խոշոր ձեռնարկություններ։ Միայն Երևանում այս տարի քաղաքային Սովետի և գերատեսչությունների կողմից կառուցվում է 40 խոշոր բնակելի շենք՝ շուրջ 44.000.000 ռուբլու արժողությամբ։ Այդ գումարը 10.000.000 ռուբլով ավելի է անցյալ տարվա հատկացումներից։ Հիշյալ շենքերից 15-ն արդեն բնակեցված են։ Մյուսները շահագործման կհանձնվեն մինչև տարվա վերջը։ Բացի այդ, ընթացիկ տարում ավարտվելու է մոտ 2.500 անհատական բնակելի տների կառուցումը։*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ.— Երևանում, Լենինի հրապարակի վրա կառուցվում է Հայաստանի արհեստակցական միությունների պալատը։ Այդ հոյակապ շենքը, որով է՛լ ավելի գեղեցկանալու է մայրաքաղաքի կենտրոնական հրապարակը, իր արտաքինով նմանվելու է Կառավարական տանը։ Շենքը կունենա մոտ 25.000 խորանարդ մետր ծավալ։ Կառուցման աշխատանքներն սկսվել են այս տարվա գարնանից և առանց ընդմիջումների առաջ են տարվում։ Շենքի մի թևն արդեն բարձրացված է մինչև երկրորդ հարկը և սկսվել է գլխավոր ճակատի երեսպատումը։ Երեսպատման համար գործ է ածվում բաց վարդագույն քար, որը հայտնաբերված է Ալավերդու շրջանում։ Շինարարական աշխատանքները շարունակվելու են ամբողջ ձմեռ։ Շենքի կառուցումն ավարտվելու է 1953 թվականի վերջերը։*

*ՀԱՅՖԻԼՀԱՐՄՈՆԻԱՅԻ ՆՈՐ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԴԱՀԼԻՃԸ.— Արագ թափով շարունակվում է Հայֆիլհարմոնիայի համերգային նոր դահլիճի շինարարությունը։*

*Այդ դահլիճը կազմում է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի շենքի երկրորդ մասը։ Հանդիսասրահը ունենալու է 1.400 տեղ, մոտ 300-ով ավելի քան օպերային թատրոնը։ Էստրադայի (բեմի) մեծությունը հավասար է 250 քառակուսի մետրի։ Ջեռուցման եղանակն ունենալու է այն առավելությունը, որ ձմեռը շենքը տաքացնելուց բացի, ամառը զով օդ է մատակարարելու։ Շենքն ունենալու է երկու փառահեղ ճեմասրահներ (ֆոյե)։*

*Կառուցման աշխատանքները ներկայումս գտնվում են ավարտման փուլի մեջ։ Շենքի գլխավոր ճակատը երեսպատվում է Փամբակի գորշ գրանիտով՝ այնպես ինչպես օպերային թատրոնի ճակատը։ Մոտ 2.000 քառակուսի մետր արդեն երեսպատված է։ Առաջիկա երկու ամսում երեսպատման աշխատանքները լրիվ կավարտվեն։ Ավարտվում են հանդիսասրահի ներքին ձևավորման և հարդարման աշխատանքները։ Սրահը ձևավորվում է շատ շքեղ, հայկական մանրանկարչության ոճով։*

*ՄԵՏԱՂԱՄԱԳՈՐԾՎԱԾՔԱՅԻՆ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ.— Բերիայի ավանում կառուցվող մետաղագործվածքային նոր գործարանի շինարարական աշխատանքները մոտենում են ավարտման։ Այս գործարանը պատերազմից հետո Սովետական Հայաստանի թեթև արդյունաբերության նորակառույց գործարաններից մեկն է, որն արտադրելու է մետաղե ընտիր գործվածքներ։*

*Շենքերի կառուցման աշխատանքներն ավարտելուց հետո, այժմ սկսված է գործող մեքենաների տեղադրումը։ Շինարարները պարտավորվել են մինչև նոյեմբերի 29-ը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 32-րդ տարեդարձի օրը, տեղադրել և գործի գցել 100 դազգահ։ Բացի այդ, նրանք խոսք են տվել ամբողջովին ավարտել ներկման բաժանմունքի կառուցման ներքին աշխատանքները և այդ օրը սկսել ներկող ու հարդարող մեքենաների սարքավորումը։ Առաջիկա ամիսներին կավարտվի գործարանի շոգեկաթսաների տեղադրումը և ջրմուղի ու կոյուղու ցանցի կառուցումը։*

*ԷՋՄԻԱԾՆԻ ՋՐՄՈՒՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ.— Ավարտվեցին Էջմիածնի ջրմուղի վերակառուցման աշխատանքները։*

*Վերջին երկու տարում, բացի Երևանի երկրորդ ջրմուղից, նոր ջրմուղներ են կառուցվել Կիրովականում, Կրասնոսելսկում, Քանաքեռում։ Ավարտվում է Իջևանի ջրմուղի կառուցումը։ Մինչև ընթացիկ հնգամյակի վերջը (1955 թ.) Սովետական Հայաստանի բոլոր շրջանային կենտրոնները կունենան նոր, կատարելագործված ջրմուղներ։*

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ.— *Սույն թվականի հոկտեմբերին Երևանում տեղի ունեցավ անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաների բարձրագույն տեխնիկական հաստատությունների պրոֆեսորա-դասախոսական կազմի գիտական երրորդ կոնֆերենցիան։ Կոնֆերենցիային մասնակցելու համար Երևան էին ժամանել Թբիլիսիի և Բաքվի ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները։ Կոնֆերենցիան բացեց Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի դիրեկտոր Գ. Մելքոնյանը, որն ասաց.*

*— Մեր կոնֆերենցիան խոշոր նշանակություն ունի անդրկովկասյան երեք եղբայրական ռեսպուբլիկաների գիտական աշխատողների փոխադարձ կապի և սերտ համագործակցության համար։ Այն կօգնի մեր ռեսպուբլիկաների բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատությունների աշխատողներին լուծելու գիտական և գործնական նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ։*

*Այնուհետև կոնֆերենցիան ողջունեցին Բաքվի Ինդուստրիալ ինստիտուտի կողմից դոցենտ Մ. Գյուլիզադեն, Թբիլիսիի Պոլիտեխնիկական ինստիտուտի կողմից՝ պրոֆեսոր Ա. Դուլիաշվիլին, Ադրբեջանի Պոլիտեխնիկական ինստիտուտի կողմից՝ դոցենտ Ի. Քյազիմովը։*

*Կոնֆերենցիան տևեց հինգ օր։ Լսվեցին 60-ից ավելի զեկուցումներ շինարարության մեխանիկայի, շինարարության ճարտարապետության, երկրաբանության, հիդրոտեխնիկայի, էլեկտրատեխնիկայի և տեխնիկական գիտությունների այլ ճյուղերի մի շարք գործնական խնդիրների վերաբերյալ։*

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ.— *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտը բեղմնավոր աշխատանք է կատարում հայոց լեզվի զարգացման և կատարելագործման ուղղությամբ։ Ինստիտուտն իր գործունեության հիմքում դրել է մեծահանճար Ի. Վ. Ստալինի հռչակավոր աշխատությունը լեզվաբանության վերաբերյալ։ Ներկայումս այդ աշխատության լույսի տակ մեր գիտնականներից շատերը զբաղված են հայոց լեզվի տարբեր հարցերի մշակությամբ։*

*Ինստիտուտի մի խումբ գիտական աշխատողներ Աշտարակի, Էջմիածնի և Կոտայքի շրջաններում ուսումնասիրում են տեղական բարբառները և խոսվածքները։ Արշավախումբը հավաքել է հարուստ նյութեր, որոնք վերաբերում են բարբառագիտությանը։ Այդ նյութերը խոշոր չափով կնպաստեն Արարատյան բարբառի բազմակողմանի ուսումնասիրությանը, մի բարբառ, որն արդի հայերենի հիմքն է հանդիսանում։*

ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ.— *Լույս տեսավ «Սովետական մանկավարժ» նոր ամսագրի առաջին համարը։ Այս ամսագիրը, որը հանդիսանում է Հայաստանի Լուսավորության մինիստրության օրգանը, նպատակ ունի լուսաբանելու մանկավարժության և ժողովրդական կրթության հարցերը։ Առաջին համարում զետեղված են պրոֆեսոր Մ. Սանթրոսյանի «Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը աճող սերունդների կոմունիստական դաստիարակության մասին», դոցենտ Ա. Գրիգորյանի «Հայոց լեզվի դասավանդման մասին» և մի շարք այլ հոդվածներ։*

ՆՈՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ.— *Մեր ռեսպուբլիկայում երաժշտական կուլտուրան զարգանում է լայնենըված կերպով։ Այդ մասին են վկայում ոչ միայն ժողովրդական ինքնագործունեության բուռն զարգացումը մեր գյուղերում և քաղաքներում, այլև այն բազմաթիվ երաժշտական հաստատությունները, որոնք հիմնվել և պահվում են պետության հաշվին։*

*Սույն թվականի հոկտեմբերից ռեսպուբլիկայում գործող երաժշտական դպրոցների թիվն ավելացավ երեքով։ Նրանցից մեկը բացվեց Երևանի Միկոյանի շրջանում, իսկ մյուս երկուսը՝ Ղափանում և Սպիտակում։*

*Ներկայումս Հայաստանում գոյություն ունի երաժշտական 17 դպրոց, որոնցից 5-ը (չհաշված Պետական կոնսերվատորիան) Երևանում։ Նրանցում սովորողների թիվը հասնում է 3.000-ի։ Պատերազմից հետո այդ դպրոցների թիվը կրկնապատկվել է, իսկ սովորողների թիվը գրեթե եռապատկվել։ Երաժշտական դպրոցներ կան Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Էջմիածնում, Գորիսում, Դիլիջանում, Նոր-Բայազետում, Ստեփանավանում, Աշտարակում և այլն։ Շրջաններում եղած բոլոր դպրոցներն էլ ունեն դաշնամուրի, ջութակի և թավջութակի դասարաններ։*

## ՋԱՆԱԶԱՆ

ՏՈՒՖԻ ՆՈՐ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ.— *Սովետական Հայաստանը հարուստ է շինարարական բազմատեսակ քարերով, որոնցից ամենատարածվածը տուֆն է։ Տուֆ քարի հսկայական պաշարներ կան Արթիկում, որտեղ գտնվում են ռեսպուբլիկայի ամենախոշոր քարհանքերը։ Միայն ընթացիկ տարում ռեսպուբլիկայի շինարարական կարիքների համար արդյունահանվել է ավելի քան կես միլիոն խորանարդ մետր քար։ Հայաստանի շինարարական քարերն արտահանվում են նաև Սովետական Միության այլ վայրերը և առաջին հերթին Վրաստան ու Ադրբեջան։*

*Գոյություն ունեցող քարհանքերը տարեցտարի ընդարձակվում են, արդյունահանման աշխատանքները մեքենայացվում, արտադրվող քարի քանակը ավելացվում։ Ընթացիկ տարում զգալի աշխատանքներ են կատարվել շինարարական քարի նոր հանքեր հայտնաբերելու և շահագործելու ուղղությամբ։ Հոկտեմբերյանի և Բերիայի շրջաններում հայտնաբերվել են տուֆի նոր հանքեր, հսկայական պաշարներով։ Նոր հայտնաբերված այդ տուֆերն աչքի են ընկնում իրենց երանգավորումով և կարծրությամբ։*

Նոր տեսակի բարձրորակ շինարարական քարերի խոշոր պաշարներ են հայտնաբերված Նոյեմբերյանի, Ալավերդու և Կալինինոյի շրջաններում։ Այդտեղ եղած քարհանքերն այս տարի բարեկարգվել են, ընդարձակվել և արդյունահանումը զգալի չափով ավելացել է։

ՔԱՐ ՀՂԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ.— Շինարարական գործի բուռն զարգացման հետ միասին մեր ռեսպուբլիկայում զարգանում է նաև շինարարական տեխնիկան։ Շինարարության մեջ քարի տաշումը և հղկումը ամենադժվար աշխատանքներից մեկն է։

Սովետական Հայաստանի մի խումբ շինարար ինժեներներ, քարտաշ վարպետների հետ համատեղ, հորինել են քար տաշող և հղկող մեքենա։ Այդ մեքենան, որն աշխատում է էլեկտրականությամբ, դյուրին կերպով, պահանջված չափի սղոցում է տուֆ քարը, այնուհետև հղկում և հարդարում է այն։

Լենինականի մեխանիկական գործարանն այս տարի արտադրել է 50 հատ այդպիսի մեքենա։ Դրանց բոլորն էլ բաշխված են ռեսպուբլիկայի նորակառույցներին և անխափան աշխատում են։

ԽԱՂՈՂԻ ԱՌԱՏ ԲԵՐՔ.— Այս տարի Հայաստանում խաղողի առատ բերք է ստացվել։ Աշխատավոր գյուղացիությունը ջանք չխնայեց հանրային այգիները խնամքով մշակելու, որը առատ բերքի կարևոր և հիմնական պայմանն է հանդիսացել։ Արտաշատի, Ազիզբեկովի, Հոկտեմբերյանի, Զանգիբասարի, Կոտայքի, Էջմիածնի շրջանների կոլեկտիվ տնտեսությունների մեծ մասը ստացավ մեկ և կես անգամ ավելի բերք քան նախատեսված էր։ Ռեսպուբլիկայի գինեգործարանները վերամշակման համար ընդունել են նախատեսված քանակությունից շատ ավելի խաղող։ Կոլեկտիվ տնտեսությունները պետությանը հանձնած խաղողի դիմաց ստացել են անհամեմատ ավելի եկամուտ քան անցյալ տարի։

ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՆՏԱՌՆԵՐ.— Սովետական Հայաստանի շրջաններում սկսվել է աշնանային ծառատընկումը։ Ըստ նախատեսված ծրագրի, Անտառային տնտեսության մինիստրության տեղական բաժինները և կոլեկտիվ տնտեսությունները տնկելու են մեծ թվով ծառեր անտառային բացատներում և դաշտերը քամիներից պաշտպանող անտառաշերտերում։

Տարեցտարի փոխվում է մեր ռեսպուբլիկայի պատկերը, նա դառնում է բուսականությամբ ավելի հարուստ։ Հոկտեմբերյանի, Կոտայքի, Նոյեմբերյանի, Էջմիածնի, Ախտայի և այլ շրջաններում խոշոր տարածությունների վրա գցվել են նոր անտառներ։ Ավելի քան 1.000 հեկտար տարածության վրա անտառ է գցված Սևանի ափերին, ջրերից ազատված հողերի վրա։ Վերջին չորս տարում Սովետական Հայաստանում տնկված է 11.000 հեկտար նոր անտառ։

Առաջիկա տարիներին անտառատնկման աշխատանքներն առաջ կտարվեն ավելի լայն չափերով։ Նախատեսվում է անտառապատել Սևանի ափերը, մի քանի տասնյակ հազար հեկտար տարածության վրա։ Խոշոր չափերով կընդարձակվի Երևանը շրջապատող մատաղ անտառների տարածությունը։ Նոր անտառներ կգցվեն աշխատավորների բուժման ու կազդուրման համար կլիմայական տեսակետից հարմար վայրերում։

# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵՋ

**Երուսաղեմ, 2 սեպտեմբեր 1952.—** *Ս. Աստվածածնի Վերափոխման տոնախմբությունը այս տարի ալ բացառիկ շուքով կատարվեցավ Ս. Երուսաղեմի մեջ ըստ հին տոմարի, 31 օգոստոս կիրակի օր։*

*Ս. քաղաքի սովորության համաձայն, Ս. Աստվածածնի Վերափոխումեն 15 օրեր առաջ, ամեն օր հանդիսավոր սուրբ պատարագ կմատուցվի Ս. Կույսի գերեզմանին վրա։ Թեև տարվույն մեջ ամեն օր անխափան սուրբ պատարագ տեղի կունենա հիշյալ սրբավայրին մեջ, բայց այս 15-օրյա պատարագները կըլլան հանդիսավոր ու բոլոր միաբանության մասնակցությամբ։*

*Ըստ ընկալյալ սովորության, առաջին ագամ պատարագ կմատուցանե Հույն Եկեղեցին Ս. Կույսի գերեզմանին վրա, և որոշյալ ժամուն սրբավայրը կհանձնե Հայ Եկեղեցվու։ Մենք մեր հետ ունենալով Ղպտի և Ասորի համայնքները, որոնք մեր հետևորդներն են բոլոր սրբավայրերուն մեջ, կսկսինք սուրբ պատարագի։ Ղպտիք և Ասորիք իրավունք չունին Ս. Կույսի գերեզմանին մեջ պատարագելու, միայն Հույն և Հայ Եկեղեցիներու վերապահված է այդ. մեր հետևորդ ազգերը կպատարագեն մասնավոր սեղաններու վրա նույն տաճարին մեջ, որոնք Հայ Եկեղեցվո սեփականություններ են։*

*Ղպտիներու և Ասորիներու պատարագի սկզբնավորությունը և վերջավորությունը կախում ունի Հայ Եկեղեցվույն պատարագի տևողութենեն, այսինքն մինչև որ Հայ Եկեղեցին չսկսի պատարագի, հիշյալ համայնքները չեն կրնար սկսիլ իրենց պատարագները, և երբ Հայ Եկեղեցին կվերջացնե իր պատարագը, անոնք ալ ստիպված են ուր որ ալ ըլլան ընդհատելու իրենց ժամերգությունը։*

*Երկրորդ պարագա մը ևս. մեր հետևորդները պարտավոր են լռելու այն պահուն, երբ հայ վարդապետը կքարոզե։*

*Ս. Կույսի գերեզմանը կգտնվի Երուսաղեմի արևելյան կողմը, պարիսպեն դուրս, Ձիթենյաց լեռան ստորոտը և Գեթսեմանիի պարտեզին մեջ։*

*Ս. Կույսի գերեզմանի եկեղեցին բավական ընդարձակ և գետնափոր է։ Բազմաթիվ քարե սանդուխներով կարելի է իջնել տաճարին մեջ, որուն արևելյան կողմը կգտնվի Ս. Կույսի գերեզմանը։*

*Այս սրբավայրը կպատկանի միայն Հույն և Հայաստանյայց Եկեղեցիներու, բոլոր ծախսերը և նորոգությունները այս երկու եկեղեցիները կհոգան։ Ղպտիք և Ասորիք թեև իրենց հատկացված սեղաններու վրա կպատարագեն շաբաթվա ընթացքին որոշված օրերու, բայց որևէ կերպով նորոգություն կամ պզտիկ կարգադրություն մը ընելու իրավունք չունին։*

*Լատին Եկեղեցին բնավ իրավունք չունի այս սրբավայրին մեջ, թեև ժամանակին ունեցած են. միայն իրենք Վերափոխման օրը պարզ ուխտի կիջնեն Ս. Կույսի գերեզմանին։*

*Տաճարին շրջակայքը ամբողջ պարտեզներ են և ձիթենիներու ծառերով լեցուն։ Եկեղեցվո արևմտյան կողմը և ամենեն արժեքավոր հողամասին վրա կգտնվի հայոց ընդարձակ պարտեզը։ Այս եկեղեցիին պարտեզը միշտ բաց է հայ ժողովուրդին առջև, որոնք հոն կգտնեն իրենց հանգիստը երբ կայցելեն Ս. Կույսի գերեզմանին։*

*Վերափոխման տոնին շաբաթը այս պարտեզին մեջ կդրվի հսկա վրան մը, որուն մեջ միաբանությունը կհանգչի իր պարապո ժամերուն։*

**Երուսաղեմ, 2 սեպտեմբեր 1952.—** *Ս. գերեզմանի առջև կատարվելե վերջ Տաճարի «Ուրախ եղէ ես» սաղմոսերգությունը, կպաշտվի երեկոյան ժամերգությունը։ Սուրեն սրբազան իր հուզիչ ձայնով կերգե «Լույս Զվարթը», և ապա տեղի կունենա վաղվան տոնին մեծահանդես Նախատոնա-*

կը։ Հետ Նախատոնակի փոքր հանդիստե և երեկոյան ընթրիքեն հետո ժամը 7-ին, գիշերախառն և խորհրդավոր ստվերներուն տակ տեղի կունենա Ծկեսցե և հսկում, ապա առավոտյան ժամերգություն։ Սույն արարողությունները տևեցին մինչև գիշերային ժամը 11-ը, որմե ետք միաբանություն և ժողովուրդ վառյալ ջահերով և հանդիսավոր գնացքով վերադարձան մայրավանք։

31 օգոստոս, կիրակի.— *Վերափոխումն Ս. Աստվածածնի.*— Այսօր շատ քիչ անգամ տեսնված եռուզեռ մը կտիրե Սրբոց Հակոբյանց հարկին մեջ։ Ժողովուրդը ամբողջ, վանքեն մինչև Գեթսեմանիի պարտեզը, խումբ-խումբ կհառաջանան, առավոտյան ժամը 7-ին, Նախագահությամբ գերաշնորհ տեր Սուրեն եպիսկոպոսի։ Գերաշնորհ եպիսկոպոս, հոգեշնորհ վարդապետներ և ուսանողություն կիջնեն Ս. Աստվածածնի տաճարը մուտքի հանդիսավոր հրաշափառեն ետք։

Կսկսի եպիսկոպոսական սուրբ պատարագը Ս. Կույսի գերեզմանին վրա։ Օրվան ժամարարն է գերաշնորհ տեր Սուրեն սրբազան, որուն կսպասարկեն բարեշնորհ Սիմոն, Վահան, Գեորգ ավագ սարկավագները։ Իսկ հոգեշնորհ տեր Հայկազուն վարդապետ կանոնավոր կերպով կղեկավարե սուրբ պատարագի երգեցողությունները։

Ճաշու գիրքեն վերջ Սուրեն սրբազան կքարոզե Ս. Կույսի մաքրության և խոնարհության մասին, ծանրանալով մայրական պարտականությանց վրա, թելադրելով քրիստոնյա մայրերու թե պետք է իրենց ուղղեցույց ընտրեն Ս. Կույս Մարիամը։

Հետ սուրբ պատարագի կատարվեցավ Անդաստան Նախագահությամբ պատարագիչ սրբազանին։

Արարողության ավարտումեն վերջ, միաբանությունը ելավ վանքին պարտեզը։ Հոն քիչ մը հանդիստե վերջ նույն գնացքով ուղղվեցավ դեպի վանք։

Իսկ ժողովուրդը մինչև ուշ ատեն լավ պահեր անցուց հայոց պարտեզին մեջ։

Սրբոց Հակոբյանց գինվորյալ միաբանությունը սա անստույգ օրերուն իսկ, մեկդի թողլով բոլոր դժվարությունները և ահագին թե՛ նյութական և թե՛ բարոյական զոհողություններ հանձն կառնե և միշտ կաշխատի վառ և պայծառ պահել բոլոր սրբավայրերը, որոնք Հայ Եկեղեցվո և ժողովուրդին արյան և դարավոր աշխատանքի ու հավատքի արդյունքներն են։

Ս. Երուսաղեմի սրբատեղյաց մատակարարությունը կարելի է ամենեն դժվար մեկ գործը նկատել Երուսաղեմի Պատրիարքության, որովհետև ինչ որ մեր ձեռքն է մեր իրավունքն է. անգին գանձեր են, հետևաբար պարտավոր ենք զանոնք պահել իրենց մեծության և շքեղության մեջ, և այս բոլորը կըլլան նյութական հսկայական զոհողություններով։ Այսօր վանքը չունի կամ հազիվ ունի այս նյութականը, բայց ունի բարոյական առաքինությունը և զոհողության անձնվաճ ոգին. այս վերջինը անշուշտ ավելի կարևոր քան առաջինը, հետևաբար գովելի է Սրբոց Հակոբյանց միաբանությունը սկսյալ իր սրբազան Տեղապահեն մինչև իր հետին միաբանը, որ այս դժնդակ օրերուն մեջ կվարեն այսպիսի ծանր բայց քաղցր բեռ մը։

«Նոր յուր», 13 և 16 սեպտեմբերի 1952 թ.



# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՊՐՈՖ.—ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ[1]

### ԺԳ. ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳԻ ԹԷ ՅԵԿԵՂԵՑԻ ՄՏԱՆԻՑԷ

*Այլազգին թէ յեկեղեցի մտանիցէ առանց բռնութեան, ջուր ցանեալ աւել
ածցեն ուր հասեալ իցէ ոտն կամ ձեռն նորա եւ ի պղծեալ տաճարին մարգա-
րէական եւ առաքելական եւ աւետարան կարդասցեն եւ աղաւթք մի զկնի։ Թէ
յետ ժամուն մտանիցեն, նոյնպէս արասցեն։ Իսկ եթէ ի բռնէ եկանիցէ բռնու-
թեամբ եւ ի ներքս մտանիցէ արհամարհանաւք, զկարգն նոյնպէս կատարես-
188բ ցեն, բայց յաւրն պատարագ մի՛ մատուսցեն։ // Իսկ եթէ ի սուրբ խորհրդոյն
յամանոն մերձեցաւ ձեռաւք շաշափեալ ներքոյ եւ արտաքոյ, եթէ ի պատուա-
կան անաւթոց իցէ, լուասցեն եւ վերստին աւծիցեն իւղովն սրբութեան եւ այ-
նուհետեւ տացեն ի պէտս խորհրդոյն, ապա թէ ի դոյզն եւ չնչին անաւթոց իցէ.
մի՛ տացեն ի պէտս խորհրդոյն, եւ փոխան նորա այլ դիցեն ի պէտս։ Եւ թէ
յայլ սրբութեան զգեստն մերձեսցի, անխոտելի է։ Նոյնպէս թէ յայլ կենդանեաց,
ի սրբոց եւ յանսրբոց, մտանիցէ յեկեղեցի, թէ ի ժամ գիշերոյն իցէ, նոյն
աւրինակ կատարել զկարգն, յաւրն զպատարագն մի՛ խափանեսցեն։ Ապա թէ
ի ժամ պատարագին մտցէ, խափանեն։ Իսկ եթէ ի ժամանոց կամ ի կուժն
մերձեսցի, անխոտելի են, բայց թէ ի տաշտ նշխարին մերձ[եսց]ի, քերեսցեն։
Ապա թէ ի ներքս աւթեւանս առնիցեն, վերստին աւրհնեսցեն։ Իսկ եթէ զան-
դանն շարժեալ ի խոնարհ արկանիցեն, զշարժեալ սեղանոյն կարգն կատա-
րեսցեն եւ վերստին կանգնեսցեն՝ ո՛չ առանց եպիսկոպոսի։*

189ա // ԺԴ. ՎԱՍՆ ՄԿԱՆ ՈՐ Ի ՄԵՂՈՒԱՆՈՑ ԱՆԿԱՆԻՑԻ

*Դարձեալ վասն մկան՝ թէ ի կենդանի մեղուանոց անկանի, անվնաս է. ապա թէ ի ճանճհանած զնստուցաւն լինիցի, անհպելի ի մաղսն, զծայրս մաղոցն հատցեն, եւ զայլն անխտիր կերիցեն։ Իսկ թէ ի հպելն ծայրս մաղոցն, զայնոսիկ ողջոյն ի բաց հանցէ։ Նոյնպէս որ ի մէջն զընդեմակ զերկոսեան մաղսն եւ զայլն կերիցեն, բայց յեկեղեցականացն։ Ապա թէ արտաքոյ ի վերայն սատակեսցի, անխոտելի է ամենեցուն։*

257—258. A *իսկ...արկանիցեն չիք*

1. *Շարունակված ամսագրի 1952 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր համարից։*

## ԺԵ. ՎԱՍՆ ԿԱՐԱՍԻ ՋՈՒՐ ՄՏԵԼՈՅ

*Եթէ ի կարաս գինով ջուր անցանիցէ՝ եթէ յառոյ է, որ ի փողոցն գայցէ յերեսաց ի ներքս մտցէ, ի պէտս հասարակացն վարեսցի, բայց ի սուրբ խորհրդոյ եւ ի խորհրդականաց։*

## ԺԶ. ՎԱՍՆ ՀԱՅ ԿՆՈՋՆ, ՈՐ ԼԻՆԻ ԱՌ ՔՈՒՐԴԻ ՊԱՏՃԱՌՍ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

*Հայ կին թէ լինիցի առ քուրդի, գոլով քրիստոնեայ եւ ո՛չ մեկնեսցի ի*
189բ *նմանէ ի պատճառս քրիստոնէութեան, մի՛ ոք հաղորդեսցի // նմա ի քահանա-*
*յից կամ յաշխարհականաց, ի քահանայից մի՛ առցէ զխոստովանութիւն նորա*
*եւ մի՛ զմանկունս նորա ի մկրտութիւն եւ մի՛ հաղորդեսցէ ի ժամ մահուան*
*նորա եւ մի՛ մատուսցէ պատարագ յետ մահուան և մի՛ առցէ տուրս ընծայից*
*նորա։ Ապա թէ յանդգնեալ ոք եւ զկանոնաց բանս խափանէ ի պատճառս*
*ագահութեան կամ երկիւղի, նզովեալ և ի կարգէն լուծցի։ Բայց յետ դարձի*
*եւ ապաշխարութեան ընդունել պարտ է յեկեղեցի, նովաւ հանդերձ զնորայն*
*ամենայն եւ այնուհետեւ հաղորդել ընդ նմա ամենեցուն անխտիր։*

## ԺԷ. ՎԱՍՆ ԿՆՈՋ, ՈՐ ԱՌ ՔՈՒՐԴԻ ՆՍՏԻ

*Վասն կնոջ, որ առ քուրդի կացեալ, եթէ մահուամբ եթէ կենաւք զղջացեալ*
*ի բաց կայցէ եւ հայի կին լինիցի, թէ յառաջագոյն ուրենաւորի ուրումն չէր*
*կացեալ կին, եւ եթէ միում փացեալ էր, եւ յետ այնորիկ առ քուրդի նստաւ,*
*առանց աւրինաց ունի, այն պոռնկութիւն է համարեալ։ Յետ այնորիկ եթէ*
190ա *վար//ուքն սրբիցէ եւ ի սրբութիւն փութասցէ, արժան է զնա կին առնել եւ մի՛*
*խոտեսցեն վասն առաջին անսուրբ կենացն, որով վարեցաւ առ այլազգիսն։*

## ԺԸ. ԿԻՆ, ՈՐ ՇՆԱՑ ԸՆԴ ՔՈՒՐԴԻ

*Ընդ քուրդի շնայ կին, սոդոմականաւն հանդերձ, թէ յօժարութեամբ՝ կրկին ապաշխարեսցէ զշնութիւնն զսոդոմականն, ապա թէ անայցելու գտեալ եւ երկոքումբք շարիւքն բռնադատեալ, կամ աղախին ի տեառնէ իւրմէ նոյն եւ ծառայ, անպարտական են։ Բայց վասն սրբութեան երեք ամ ապաշխարեսցեն։ Բայց առն աւելի տեսանի, քան կնոջ, զի սոցա հնար տեսանի զերծանելոյ։*

## ԺԹ. ՎԱՍՆ ՈՐՔ ԿԱՄԱՒ ԶԴՍՏԵՐՍ ԱՅԼԱԶԳԻՍՆ ՏԱՆ

*Այլ են ի քրիստոնէից, որք կամաւ զդստերս իւրեանց կին տան այլ-*
*ազգեաց վասն մարմնաւոր կենաց։ Նոյնպէս եւ զմանկունս իւրեանց ծախեն*
*յանհաւատութեանն եւ յապականութեան։ Այնպիսիքն նզովեալ եղիցին ի*
190բ *կեանս եւ ի մահ եւ յետին // թոշակին մի՛ եղիցին արժանի։*

## Ի. ՎԱՍՆ ՈՐՔ ԶՄԱՆԿՈՒՆՍ ԱՅԼԱԶԳԵԱՑ Ի ՍՏԵԱՆՑ ԿԵՐԱԿՐԵՆ

*Այլ քրիստոնեա[յ] վասն կնոջ չէ պարտ քուրդի տղայի ստեանց իւրեանց կերակրել, քանզի մաքուր է կաթն այն աւազանաւն։ Եւ աւազանածոց, վերստին ծնելոց, եւ ի Քրիստոս միացելոց, տղայացելոց մանկանց նոցա պարտ է ար-*

րուցանել։ Ապա թէ ոք մի անգամ եւ երկիցս արարեալ է յանգէտս եւ զըղ-
ջացեալ, ամ մի ապաշխարեսցէ, իսկ եթէ սովորութեամբ անհոգացեալ եւ ան-
զեղջ. զնոյն առնիցէ, նզովեալ եւ որոշեալ է ամենայն եկեղեցւոյ։

## ԻԱ. ՎԱՍՆ ՈՐՔ ԶԱՅԼԱԶԳԵԱՑ ԾՆՈՒՆԴ Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԱՌՆՈՒՆ.

Դարձեալ սովորութիւն է քահանայից, որ զայլազգեաց ծնունդս ի մկըր-
տութիւն առնուն, այնպիսիքն անծանօթ են խորհրդոցն Աստուծոյ. ո՛չ գիտեն
թէ մեք ի մահն Քրիստոսի մկրտեցաք եւ թաղիմք ընդ նմա մկրտութեամբ։ Այլ
191ա նոքա որ ի մէնջ // մկրտին յայս խորհուրդ փրկական իբրեւ զմեզ, ոչ մկրտին
խոստովանութեամբ, այլ հմայութիւն իմն դիւական ի պահպանութիւն անձանց
իւրեանց որպէս կարծեն մկրտին։ Վասն անյորիկ չէ՛ պարտ զանձառ խոր-
հուրդ բանին առաջի արկանել, որ երգիծուցանիցեն զմեզ փրկական խորհըր-
դովն, այլ ոմանք հնարին թերակատար իմն, միայն ջուր ցանել ի վերայ մարմ-
նոց նոցա, պատճառն այս է, որ ի բարձրագոյն եւ մեծ պատուհասէն զեր-
ծանիցին։ Բայց համարձակութեամբ մեր է պատուիրանս, առաջի հեթանոսաց
խոստովանել։ Արդ, մի՛ ոք առնիցէ զայս, զի խաբէութիւն է։ Այլ բոլորովին
ոք զկարգ մկրտութեան կատարէ ի վերայ նոցա ըստ մեզ, լուծցի ի քահա-
նայութեան կարգէն եւ մի՛ պատարագեսցէ զՔրիստոս։ Եւ թէ մի անգամ ոք
արարեալ, Ե (5) ամ արտաքոյ կացցէ եւ երկոտ՛ ի ներքս եւ ապա հաղորդես-
191բ ցի // աւրինացն, այլ ոչ պատարագիցէ։ Ապա եթէ անհոգաբար արարեալ ի նոյն,
մինչեւ զմահ ապաշխարեսցէ եւ հաղորդեսցի աւրինացն։ Այլ ի ժամ մերոյ
մկրտութեան ի բաց կայցեն կանայք ի սուրբ աւազանէն, որպէս ի սուրբ խոր-
հրդոյն։ Նոյն եւ զապաշխարողսն արտաքոյ կացուցանել պարտ է իբրեւ զայլ-
ազգի, զի մի՛ տեսցեն աչաւք եւ ականջաւք լուիցեն զսուրբ խորհրդոյն զձայնն։
Եւ մի՛ ոք եղիցի կնքահայր յապաշխարողաց, մանաւանդ ի կանանց, այլ յա-
րանց եւ ի սրբոց եղիցին կնքահայր, վասն սուրբ խորհրդոյն որ արժանն է։
Բայց ամենեւին ամենայն խորհրդով պարտ է հրաժարել ի կնքահայրութենէ
այլազգեաց։ Զի զինչ բաժին է հաւատացելոյն ընդ անհաւատին եւ կամ Քրիս-
տոսի ընդ Բելիարայ։ Եւ թէ մի անգամ արարեալ ոք տգիտութեամբ, մեծաջան
192ա ապաշխարեսցէ, որպէս կամի քահանայն ողորմու//թիւն արասցէ։ Ապա եթէ
արհամարհէ եւ անփոյթ առնէ զայս, [նզովի ի կեանս եւ ի մահ]։ Եւ քահա-
նայն որ մկրտէ այլազգոյն մերձ կալով կնքահայրութեամբ, լուծցի ի կարգէն
եւ մի՛ պատարագեսցէ զՔրիստոս։ Ապա թէ մի անգամ արար եւ յետոյ զըղ-
ջացաւ, եւ ջատագով եղեւ կարգին եւ աւրինաց, մի ամ ապաշխարեսցէ, եւ
տեսցեն գիտնականք՝ եւ որպէս արժանն է՝ արասցեն։

## ԻԲ. ՎԱՍՆ ԿՐԱՒՆԱՒՈՐԱՑ, ՈՐ ԼԻՆԻՆ ՍՆԴԻԿՆՈՍՔ

Այլ ի կրաւնաւորաց, բարեկամաց եւ սիրելեաց մի՛ ոք իշխեսցէ որդեգիր լինել մաւրն եւ կնքահայր մանկանն։

## ԻԳ. ՎԱՍՆ [ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԱՒԱԶԱՆԻՆ]

Այլ քրիստոնեայ անուն եւ հաւատացեալ ի Քրիստոս, յաւուր լուսաւո-
րութեան զմանկունս, նոյնպէս ի տան հարսանեաց պսակաւորաց ի Քրիս-
տոս, մեծ խորհրդոյս այսորիկ, մի՛ ոք իշ[խ]եսցէ կաքաւել կամ պարել՝ ըստ

ազգի ազգի հեթանոսաց խաղուց եւ փոխանակ Քրիստոսի եւ Հր[եշ]տակաց
192բ // գիւղաց լինի բնակութիւն, զի տուն աղօթից զերկնից բերէ կնմանութիւն եւ
փեսայն՝ զՔրիստոսի եւ հայր փեսին՝ զհայրն երկնաւորին եւ զհարսն եկեղեցւոյ,
Իսկ հայր հարսին՝ զառաքելոց եւ զմարգարէից եւ ամենայն բազմութիւն հրեշ-
տակաց սրբոց։ Արդ, ոչ է պարտ զերկրաւոր եւ զգիւական խաղս ընդ երկնա-
յին եւ աստուածա[յ]ին եւ անճառ խորհուրդս խառնել։ Այլ փոխանակ դիւա-
կան խաղուցն զհր[ե]շտակականն զերգս երգել եւ փոխանակ հեթանոսական
ամաւթալից զրուցատրութեանց, զսրբոց մարտիրոսաց նահատակութիւնս ճա-
ռել։ Արդ, որ ի քահանայից ոք մտանէ անդ, ուր այսպիսի սատանական կա-
տարի խորհուրդ, այնպէս, եթէ ի մեհեան դիւաց եւ ի տուն կռոց մտանեն եւ
ի զոհից անտի ուտիցեն։ Եւ զայս ո՛չ յինէն ասեմ, այլ ի կարգեալ կանոնաց
սրբոց վարդապետաց։ Արդ, ծանուցի զվնասն եւ զգուշացուցի պատուիրա-
նաւ, զի պահեսջիք զնա եւ մի՛ ջնջեսջիք ի դպրութենէն կենաց, վասն որոյ
անպարտ եմ յարենէ ձերմէ, ահա ասացի ձեզ։

## 193ա //ԻԴ. ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴՈՅՆ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Եթէ մկնանկ գինով կամ նշխարով յանգէտս ոք պատալազ մատուցանէ,
ամենայն ամանքն սրբութեան, յոր հասաւ պղծութիւն հանդերձ սկէծածկու-
թիւն, ի բաց խոտեսցեն, բայց ի հանդերձից սեղանոյն, եւ քահանայքն երեք
շաբաթս պահաւք ապաշխարեսցեն՝ երկու արտաքոյ կալով եւ մի ի ներքս եւ
ապա հաղորդեսցին սրբութեան։ Իսկ եթէ գիտութեամբ ոք մատուցանէ, առ
ատն հարկանելով զանճառ խորհուրդն, ի կարգէն լուծցի։ Բայց վարդապետն
իշխան է՝ որպէս կամի, արասցէ ըստ ապաշխարութեանն նոցա, որ է Գ (3)
ամս սրբապահութեամբ արտաքոյ եւ երկու շաբաթապահութեամբ ի ներքս եւ
ապա հաղորդեսցին՝ ի գիտութեան վարդապետին թողեալ։ Իսկ ի գնել սպա-
սուցն արածեսցի մուկն ի նշխարոյն եւ ո՛չ գիտացեալ քահանայն, մինչեւ
ցայն, որ առնու զհացն եւ զբաժակն եւ աւրհնէ, փոխեսցէ զնշխարն եւ այլ
193բ դիցէ, եւ յառաջն սկսեալ կատարեսցէ զպատարագն, // իսկ յետ աւրհնելոյն
մինչ ի բաշխելն գիտասցէ, խափանեսցէ զպատարագն։ Թէ այլ ոք լիցի, ճա-
շակեսցէ զանկատար խորհուրդն, ապա թէ ինքն միայն իցէ, [կերիցէ] եւ մի՛
թողցէ եւ ութ աւր արտաքոյ կալցէ սրբութեանն։ Իսկ եթէ ի մկրտելն եւ ի մաս-
նաւորելն գիտաց, արասցէ զխորհուրդն եւ երիս շաբաթս արտաքոյ կացցէ
սրբութեան եւ ապա հաղորդեսցի, [իսկ ամանքն մի՛ խոտակեսցին]։ Ապա թէ
գիտութեամբ ծուլացեալ եւ արհամարհանաւք անհոգացեալ մատուցանէ
զպատարագն, ջերմեռանդն եւ սուրբ ապաշխարութեամբ, [ամ] մի արտաքոյ
կալցէ եւ ապա մտեալ հաղորդեսցի։ Իսկ եթէ քացախով առնիցէ յանգէտս,
կրկին ապաշխարութեամբ Գ (3) շաբաթ արտաքոյ կացցէ, ապա թէ գիտու-
թեամբ՝ ամ մի։ Այլ թէ ջրախառն մատուցանէ յանգէտս, մինչեւ ցբաշխումն,
ուր եւ գիտասցէ, ի բաց թողեալ եւ այլ մի՛ մատուսցէ։ Ապա թէ ի բաշխելն
194ա ծանիցի, կատարեսցէ զպատարագն // եւ ինքն մի ամ արտաքոյ կացցէ սըր-
բութեան անխափան նովին կարգով։ Ապա թէ գիտութեամբ մատոյց, ի
կարգէն լուծցի եւ ապաշխարեսցէ այնու կարգաւ, որպէս կանոնք հրամայեն։
Այլ թէ երկուացեալ նշխարաւ ոք մատոյց յանգէտս, Գ (3) շաբաթ արտաքոյ
կացցէ նովին կարգաւ։ Այլ թէ գիտութեամբ ոք մատոյց ծուլացեալ, երեք
քառասունս արտաքոյ կացցէ հաղորդութեանն եւ զմինն ի ներքս։ Եւ ի կա-
տարել թուոցն Ճ եւ քսանիցն (120) մտեալ հաղորդեսցի։ Իսկ եթէ աւթեկ ջրով
ի պատճառս ծուլութեան կազմէ զնշխարն, Ը (8) աւր արտաքոյ կացցէ հա-

ղորդութեան։ Ապա եթէ հարկաւ հանդիպի հեռագոյն գոլով որպէս ի ձմերանի կամ յերկիւղէ աւազակաց, մի՛ խափանեսցէ զպատարագն։ Նոյնպէս թէ ձեռամբ պատահեսցի, առցեն ի սուրբ տեղեաց, անսխալ է՝ թէ Աստուած կամի։
194բ // Այլ թէ մասն անգցի ի սուրբ սեղանն, երիս աւուրս կարգաւք ապաշխարեսցէ՝ մի աւր արտաքոյ, երկու ներքս եւ հաղորդեսցի։ Իսկ եթէ իսկոյն ծածկոցն անկանիցի, անվնաս է։ Ապա թէ առ ոտս սեղանոյն անգանիցի, ութ աւր արտաքոյ եւ երկու ի ներքս եւ ապա հաղ[որդեսցի]։ Ապա թէ ի ներքոյ բեմին անգ[անիցի], երկու ութեակս պահեսցէ։ Եթէ ի գինոյն հեղու ի սեղանն՝ ութ աւր, իսկ եթէ ի խոնարհ՝ խ (40) աւր՝ զերիս տասնն արտաքոյ եւ մինն ի ներքս եւ ապա հաղ[որդեսց]ի։ Իսկ եթէ ներքոյ բեմին հեղաւ, երկու կ (60) աւր ապաշխարեսցէ։

## ԻԵ. ՎԱՍՆ ՀԱՂՈՐԴ ՏԱԼՈՅ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ

Այլ վասն հաղորդելոյ հարցման, այս է։ Քահանայ թէ ամուսնացեալ լինի, եւ առ աւրն հարկ հասանէ նմա այլ ոք ոչ գոլով որ փոխան նմա հաղորդ տացէ, անվնաս է, բայց վասն խղճի մտացն՝ երիս կանոնաւ ծնրադրութեամբ առանց արտաքոյ արկեսցէ զանձն իւր, և ապա
195ա // հաղորդի։ Այլ թէ յանարժանից ոք իցէ, այլ ոչ գոյ ի սուրբ քահանայից, արժան է հաղորդել վասն կարգին, որ ունի։ Այլ թէ հիւանդ խափկաբեր անընդմիջելի կամ ործասցի, մի՛ տացեն հաղորդ, մինչեւ դադարեսցի։ Ապա թէ առեալ ի վեր բերիցէ, յաման առեալ արտաքոյ եկեղեցւոյն առ հիմամբն, խոր թաղեսցեն եւ զցայտս անգեալ ի վերայ ձորձոյ, լուասցեն ի սուրբ տեղւոջ։ Եւ թէ այսօրիկ ոչ զգուշացաւ քահանայն կամ պատուրեաց, խիստ կրեսցէ զկարգն և հիւանդն անպարտ է։

## ԻԶ. ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ, ՈՐ Ի ԾՆՈՒՆԴՍ ՄԵՌԱՆԻՆ

Ապա թէ կին ի ծնունդս մեռանի, ըստ խոստովանութեան նորա, տացեն՝ նմա զսուրբ խորհուրդն։ Ապա թէ ի ժամու ծննդեան հանդիպի, քանզի պատուական է ամուսնութիւն եւ սուրբ անկողինք նորա, եթէ յապահարս իցէ կամ ի տեռատեսութեան ցաւս եւ մահու դիպի, մի՛ զրկեսցեն յետին թոշակէն, զի այս գործ բնութեան է եւ ոչ մեղաց եւ կամաց։

195բ

## // ԻԷ. ՎԱՍՆ ԿՆՔՈՅ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ԱՅՍ Է

Նոյնպէս եւ վասն կնքոյն եղիցի բան, որպէս վասն հաղորդ տալոյն։ Այլ թէ յառաջ քան զպատարագելն մկրտեսցէ, մի՛ պատարագեսցէ, եւ եթէ պատարագէ ըստ հարկին եւ յետ այնորիկ մկրտեսցէ, այսպէս արասցէ եւ վասն հաղորդ տալոյն։ Այլ անպատրաստ եւ անարժան ոք է, զի այս առանց հարկի տեսանի, մի՛ պսակեսցէ։ Եւ եթէ նախ պսակեաց եւ այլ ոք ոչ իցէ, մի՛ պատարագեսցէ։ Եւ եթէ պատարագեաց եւ այլ ոք ոչ իցէ, ընդ երեկս պսակեսցէ։ Նոյնպէս թէ անպատրաստ լինիցի յաւուրն յամուսնոյն կամ ի փորձանաց երազոյ պատճառէ, ընդ երեկս պսակեսցէ, բայց զկարգն երեկին հատուսցէ։

## ԻԸ. ԱՅԼ ԹԷ ԱՆԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ԻՇԱՑԱՒ ՈՔ ՅԵԿԵՂԵՑՒՈՋՆ

*Այլ թէ ոք իշացաւ յեկեղեցւոյն, թէ ակամայ՝ Ը (8) աւր արտաքոյ, ապա
196ա թէ կամաւ անհոգացեալ՝ ամ մի։ Բայց // վարդապետն իշխան է ըստ ապաշ-
խարութեան կարճել զժամանակն։ Սոյնպէս եւ ի պատա[ր]ագին, եթէ ակա-
մայ՝ երկու ութեակս արտաքոյ կացցէ։ Թէ կամաւ՝ այլազգաբար յարհամար-
հանս եկեալ սուրբ խորհրդոյն, ի բաց կացցէ ի քահանայութենէն, զոր ու-
նի։ Բայց ի ջերմեռանդն ապաշխարութիւն նորա հայեցեալ վարդապետն, իշ-
խան է որպէս կամի։ Այլ եթէ զկարգ մի գոլով պատարագեաց յանգէտս,
շաբաթ մի արտաքոյ կացցէ։ Ապա թէ գիտացեալ եւ պատարագեաց յաղագս
պատուաւորաց եկելոց փառասիրել կամ յաղագս ընծայից բերելոց հարկեցաւ
եւ զփառսն, որ յԱստուծոյ անարգեաց, այնպիսին ընդ անիծիւք է։ Եթէ սովո-
րութեամբ առնիցէ զայս, ամենեւին ի բաց կացցէ ի սուրբ խորհրդոյն ի
կեանս իւր։ Ապա թէ մի անգամ կամ երկիցս ըստ հարկի արար եւ յետոյ
196բ զղջացաւ՝ Խ (40) աւր արտաքոյ կացցէ // սրբութեան ջերմեռանդն ապաշ-
խարութեամբ, ապա հաղորդեսցի։ Այլ աւուրք ապաշխարութեան արտաքոյ
եկեղեցւոյ որ լինի ըստ հարկի մեծի, որ գայ ի վերայ, իշխան է վարդապետն
արգիլուլ եւ կարճել, այսինքն ի Ե.էն՝ Ա, ի Ժ.էն՝ Բ, ի Ի.էն՝ Դ, ի Լ.էն՝ Զ, ի
Խ.էն՝ Ը, ի Ծ.էն՝ Ժ, ի Ճ.էն՝ Ի։ Եւ այսպիսի ընտրութիւն ի հարկաւոր ժամա-
նակի զջերմ ապաշխարութիւն քահանային տեսեալ, թէ այնպէս հանդիպի,
բարիոք է թողացուցանել պատարագ մատուցանել։*

## ԻԹ. ՎԱՍՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ

*Այլ քահանայ թէ ի պատճառս դեղոյ վերաբերութիւն առնէ, կամ ըստ
խստութեան ցաւոց որ ըմբռնեալ վերաբերեն, անմեղ է։ Ապա թէ ի պատ-
ճառս կերակրոյ կամ ըմպելեաց լինիցի, Ը (8) աւր արտաքոյ կացցէ ի սուրբ
խորհրդոյն եւ Է (7) աւր աւետարան մի՝ կարդասցէ։ Բայց թէ հարկ լինիցի,
հինգերորդ աւրին կարդա։ Ապա թէ յարբեցութենէ լինի, Լ (30) աւր արտա-
197ա քոյ կացցէ սրբութեանն։ Իսկ եթէ սովորութեամբ արասցէ զայս, զժամն // ամե-
նեւին ի բաց թողցէ մինչեւ ապաշխարեալ զղջասցի։ Այլ տեսցեն գիտնականք
եւ արասցեն որպէս կամին։ Ապա թէ պատարագեալ ի բռնութենէ ցաւոց վե-
րայ ձգի, ԺԷ (15) աւր արտաքոյ կացցէ եւ Ի.ին (20) հաղորդեսցի։ [Ապա
թէ կերակրոց իցէ եւ ի հաւասար ըմպելեաց՝ Լ (30) աւր արտաքոյ եւ Ժ (10) ի
ներքս, եւ ապա հաղորդեսցի]։ Իսկ եթէ յարբեցութենէ լինիցի՝ երեք քառա-
սունք արտաքոյ կացցէ, եւ յապաշխարութիւն նայեցեալ գիտնականաց, կար-
ճեսցեն զժամանակն, որպէս եւ կամին։ Ապա թէ երկուս կամ երիս աներկիւղ
սովորութեամբ ժայթքեալ, ի բաց կացցէ ի պատարագելոյ զՔրիստոս, զի
արբեցողն ընդ գազանս է համարեալ։*

## Լ. ՎԱՍՆ ՈՐՔ ԶԱՆՁԻՆՍ ԻՒՐԵԱՆՑ ՄԱՐԴԱՀԱՃՈՒԹԵԱՄԲ ԹԱՔՈՒՑԱՆԵՆ Ի ՆԵՐՔՍ

*Այլ են ոմանք որ մարդահաճութեամբ առ ամօթոյ անպատրաստ գո-
լով, սպրդեալ ի ներքս մտանեն, զանձինս կարծեցուցանեն թէ ի հաղորդե-
լոցն իցեն. թաքստեամբ ի ներքս կան ունայն, այնպիսիքն մի՝ իշխեսցեն առ-
197բ նել զայդ, զի ո՛չ սիրէ ճշմարտութիւնն զառաչայսն առնել, // զի պիղծ է
մարդահաճոյն առաջի Տեառն։ Արդ, դու մարդ ես ընդ կարիւք անգեալ. ցոյց*

զանձն քո որպէս ոմնիս եւ մի՛ կերպարանէր. զոր ո՞չ ունիս։ Ընդէ՞ր զանձն
անպարտ գոլով ընդ պար[տ]իւք արկանես. ուստի խստագոյն պահանջիս
յԱստուծոյ։

## ԼԱ. ՎԱՍՆ ԵՐԱԶԱՓՈՐՁՈՒԹԵԱՆ

Երազափորձութիւն բազում ազգիւ տեսանի՝ է որ ի լնուլ ժամանակի
առաւելեալն արտաքս հոսի, եւ է որ ի լոգութենէ մարմնոյ, է որ յաշխատու-
թենէ եւ ի հիւանդութենէ լինի, այսոքիկ անվնասք են։ Եթէ յառաջ քան զգի-
շերոյն պաշտաման լինի, զաւրն արտաքոյ կացցէ եւ վաղիւն պատարագես-
ցէ։ Իսկ եթէ յետ ժամու՝ յետ երկու աւուրն պատարագէ։ Բայց թէ հարկ լինի.
վաղիւն հաղորդի։ Այլ թէ տեսութեամբ լինի ամուսնոյ իւրոյ, աւրին արտաքոյ
կացցէ երկու կարգաւք եւ վաղիւն հաղորդեսցի։ Իսկ թէ յաւտարի տեսութեամբ,
198ա նոյն երկու կարգաւք՝ յաւրին արտաքոյ կացցէ եւ վաղիւն // ի ներքս մտեալ, ի
միւս վաղիւն հաղորդեսցի։ Իսկ եթէ յետ արձակման ժամու գիշերոյն լինիցի
տեսութեամբն ամուսնոյն իւր կամ աւտարաւ, յերրորդ աւուր հաղորդեսցի։
Եթէ քահանայի ամուսնով կամ անասնական փորձութեամբն սատանայէ՝
երկու աւր արտաքոյ կացցէ եւ մի աւր ի ներքս, եւ չորրորդին հաղ[որդեսցի]։
Ապա թէ ի վերայ գրաստու տեսանէ կամ խառնակումն անասնոց՝ յերրորդ
աւուրն հաղո[րդեսցի]։ Ապա թէ յետ պատարագին փորձի ամուսնովն իւրով
Ե (5) աւր արտաքոյ կացցէ եւ ի Զ.ին (6) հաղորդեսցի։ Ապա թէ յղփու-
թենէ կերակրոց լինիցի՝ երեք աւր արտաքոյ եւ մի ի ներքս եւ հինգերորդ
աւրն հաղորդի։ Ապա թէ տունջեան տեսեալ կին աւտար եւ ցանկացեալ եւ
մտաւքն զկնի նորա ձգեալ եւ ի գիշերի փորձեալ նովաւ ի սատանայէ.
ի շնութեան սահմանի է, զի շնացաւ անդէն ի սրտի իւրում։ Բայց որ Ե
198բ ձուն եղեւ փորձանք նորա՝ երկու շաբաթ կացցէ կր//կին կարգաւորութեամբ եւ
մի շաբաթ ի ներքս։ Եւ եթէ մի անգամ եւ երկիցս լինիցի այսպիսի սահմա-
նաւ, հաղորդեսցի։ Իսկ եթէ բազում անգամ հանդիպի սովորեալ անհոգու-
թեամբ եւ յամառութեամբ կենօքն իւրոյ կամ ի հայեցուածս բազմաց ձգե-
ցաւ մտաւք եւ յայն հանապազ աղտեղեալ միտք նորա եւ ախտացեալ մար-
մինն, ի բաց կացցէ ի սուրբ խորհրդոյն հանապազ։

## ԼԲ. ՎԱՍՆ ՆՈՒԻՐԵԼՈՑ Ի ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Այլ կոչեցեալքն ի քահանայութիւն, ամենեւին սուրբ լիցին՝ հոգով եւ մարմ-
նով։ Զի թէ առ հնովն եւ աւրինականն այսպէս ասէր վասն անբան պատա-
րագացն, եւ զամենեւին առանց պակասութեանն մատուցանել ի սեղանն,
ապա այս սեղան, որ վերընկալ է տէրունեան մարմնոյն, ոչ կամի զարա-
տաւորն մատուցանել յանձնառ խորհրդոյն։ Արդ, է պատահումն ի մարմնի որ
199ա խոտի, եւ է որ՝ ոչ։ Զի եթէ ի մատանց ձեռաց եւ ոտից // սխալեալ իցէ կամ
բլթակ ունկանն հատեալ, կամ խեթ աչաւք կամ ծուռ ակնն, այսպիսիքս
անխոտելիք են ի քահանայութենէ։ Իսկ ոտնատ կամ ձեռնատ, խուլ կամ կոյր,
պնչատ կամ շրթնատ, կամ պիսակոտ կամ ուրուկ, այսպիսիքս խոտելիք են
ի քահանայութեան կարգս գալոյ։ Իսկ բժշկութիւն հոգւոյ այս է նուիրե-
լոցն ի քահանայութիւն։ Եթէ ի տղայութեանն ըմբռնեալ ուրուք գործովք ի
չարութեան, խոտելի է։ Իսկ եթէ ոչ պատահեալ գործք, այլ ի վերայ հեղեալ
արտաքուստ չարակամին ախտ, ոչ է խոտելի։ Եթէ երկու կատարեալք առ
միմեանս զայս առնիցեն, ի վերայն հեղումն առանց գործոց, անարգեսցի[ն] ի
ծխանէ-այսոքիկք։ Ապա թէ միւսոյն հեղեալ, խոտեսցի նա։ Եւ միւսն, որ ոչ

վնասել ըստ շնորհին Աստուծոյ սա կոչեսցի, որպէս կամին գիտնականքն
արա[սցեն]։ Իսկ համբոյր միմեանց կամ կնոջ, կամ ձեռնարկութիւն ի ներքս.
199բ եւ հոսել // կամ կանանց եւ միմեանց ի տեղի գործոյ երթեալ, եւ ոչ գործեալ,
եւ ոչ հեղեալ, նոքա ապաշխարութեամբ կոչեսցին։ Ապա թէ ձեռաւք ի մի-
մեանց մարմին բմբռնեալ մի անգամ կամ երկիցս եւ հոսեալ, ոչ գիտելով
զվնասն եւ ոչ ուրուք զգուշացեալ զերկիւղն, ծանր ապաշխարութեամբ Դ (4)
ամաւք ըստ յաջողութեան նորա որ ունի շնորհս յԱստուծոյ կոչեսցի քահա-
նայութիւն։ Իսկ եթէ բազում անգամ սովորեալ յայն, յերկարեսցի եւ յետ
պատուիրելոյն մի անգամ լինիցի հաւասարայէս, սոքա խոտեսցին եւ մի՛
ընտրեսցին։ Քահանայ եթէ ունիցի զայն, ի բաց կացցէ ի քահանայութենէ։
Ապա թէ յառաջագոյն ունէին եւ ծածկեցին եւ յետոյ յայտնեցաւ, ի բաց կաց-
ցեն ի պատարագելոյ եւ մի՛ իշխեսցեն հպել ի գործ պաշտամանս այսորիկ։
200ա Այլ թէ մանկունք ի միմեանց բերան ածիցեն առանց ախտի, կոչեսցին // նո-
քա, իսկ եթէ ախտիւ՝ մի՛ կոչեսցին քահանայութեան. այլ ըստ հասակին եւ
ըստ ապաշխարութեան հաղորդեսցին ի մէջ ժամանակի, կենաց թաւշակին
արժանասցին։

## ԼԳ. ՎԱՍՆ ՈՐ ԳՐԱՍՏ ՆՍՏԻՆ ԵՒ ԹԱՑԱՆԱՆ

Այլ թէ ի վերայ գրաստու թացութիւն լինի, առանց խորհրդոյ, երեք աւր
արտաքոյ կացցէ։ Իսկ եթէ հոսումն միայն յերկիւղէ, առանց խորհրդոց՝ շա-
բաթ մի արտաքոյ։ Ապա թէ խորհրդով խառնաւ ընութիւնն՝ Ժ (10) աւր ար-
տաքոյ եւ Բ (2) ի ներքս, ապա հաղ[որդեսցի]։ Իսկ եթէ հոսումն ի խորհրդոց
լինիցի, Լ (30) աւր արտաքոյ կացցէ եւ Խ (40) հաղորդ[եսց]ի։ Եթէ մերկ ի
գրաստու նստի եւ ի խորհրդոց թացութիւն լինի, մարմնաշարժութեամբ, երեք
շաբաթս արտաքոյ կացցէ սրբութենէ, եւ հինգ աւր ի ներքս եւ [ապա] հա-
ղորդեսցի։ Ապա թէ հեղումն լինիցի՝ երեք քառասուն կարգածութեամբ կրր-
կին, եւ պահաւք, եւ ապա՝ հաղորդ[եսցի]։ Եթէ արթնութեամբ յանկարծ թա-
200բ ցութիւն լինի, առանց խորհրդոյ՝ մի աւր։ // Եթէ հոսումն առանց պատճառի՝
Բ (2) աւր եւ յերեքին հաղոր[դեսցի]։ [Իսկ սերմնակաթնն զաւր հանապազ
արտաքոյ կացցէ, մինչեւ սրբեսցի]։ Ապա թէ ոք, ի մոլեգնեցանելոյ զախտն
անիծեալ, ելանէ յերիվարս եւ յերասանակս կացցէ ի յարշաւանս թողլ տալ
կ հոսեցուցանել հեշտութեամբ զախտն յանձնէ՝ եթէ քահանայ է, ի պատա-
րագէն ամենեւին ի բաց կացցէ։ Այլ թէ մի անգամ զայս արարեալ, երեք ամ
ապաշխարեսցէ. ապա թէ սովորութեամբ ի նոյն յերկարեալ, գիտնականք
որպէս կամին արասցեն երկոցունց։ Այլ թէ ի նուիրելոց ոք ի քահանայութիւն
առնիցէ զայս մի անգամ, իշխանք են վարդապետք Գ (3) ամ ապաշխարու-
թեամբ որպէս կամին արասցեն։ Իսկ զերկարեալն ի նոյն գործ՝ մի՛ իշխես-
ցեն կոչել ի քահանայութիւն։ Այլ թէ ի նստածէ մարդոյ կամ յայլ կենդան-
եաց, կամ ի նոցունց միզէ ընդ խաղ արկանիցեն մանկունք ի բերան ման-
201ա կան, որ նուիրեալ իցէ ի քահանայութիւն. կամ ի պատճառս դեղոց, // կոչես-
ցին նոքա ի քահանայութիւն։ Ապա թէ քահանայի հանդիպի վա[ս]ն դեղոց
նստած մարդոյ կամ զանսուրբ անասնոյ՝ մի՛ առցէ։ Եթէ ի պատուհասի պատ-
ճառս յաւաղագ կրէ ոք զայս կամ նախատանաւք յայլազգեաց, զատուսցեն զնա
ի պատարագէն, բայց զայլ կարգն պաշտեսցէ։ Իսկ ի սուրբ կենդանեաց միզէ
կամ ի կտոէ ի պատճառս դեղոյ առնու քահանայ, երիցս քառասուն կարգա-
ծութեամբ հաղորդի։ Այլ թէ աշխարհականի հանդիպի, այս է ի յերիցն միով
մասամբ՝ պակաս ի քահանայիցն ապաշխարեսցեն

523. Այստեղ և այլուր՝ անկամ փոխ. անգամ։

## ԼԴ. ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ, ՈՐ ՊԱՏԱՐԱԳԻՆ ՀԱՐԿԻՒ ՁԱՅՆԵՆ ԱՌ ՆԱ ՎԱՍՆ ԿՆՔՈՅ ԵՒ ՀԱՂՈՐԴԵԼՈՅ ՀԻՒԱՆ[Դ]ԻՆ

*Այլ յորժամ քահանայն ի սուրբ խորհրդին իցէ եւ ըստ հարկի ձայնեն
առ նա յաղագս կնքոյ եւ հաղորդի, մի՛ խղճեալ յապաղեսցէ եւ անփոյթ
201ա արասցէ, այլ կնքեսցէ զբանն // որում անդոյշ էր ի պատարագին եւ ծածկեսցէ
պատրաստութեամբ եւ երթեալ տացէ կնիք երեխային եւ հաղորդ մերձ ի
մահին եւ եկեալ առցէ զբանն ուր եթող եւ կատարեսցէ զխորհուրդն։ Իսկ
եթէ հաղորդ ոչ լինի, մատուսցէ զպատարագն մինչեւ ի սահման բաշխմանն
եւ նախ քան զճաշելն իւր առցէ ի սուրբ խորհրդոյն եւ երթեալ տացէ նմա
զկենաց թաւշակն եւ ապա եկեալ կատարեսցէ զսուրբ խորհուրդն։ Բայց թէ
չնչոյ քահանայն ոչ հասաւ հիւանդին, անպարտ է։ Այլ թէ ի տգիտութենէ
զարհուրեալ ի սուրբ խորհրդոյն անփոյթ արասցէ, փոքր կարծելով զայսգա-
նէ Դ (4) շաբաթ արտաքոյ կացցէ սրբութեանն եւ ապաշխարել վասն ան-
գիտութեան՝ Լ (30) հաղորդեսցի։ Ապա թէ գիտում էր եւ ի ծուլութենէ կամ
յոխ պահելոյ անփոյթ արար կամ արտաքոյ կամ ի պատարագին, զայսգանէ
202ա որ գրե//ցաւ, լուծցի ի կարգէ քահանայութեան։*

## ԼԵ. ՈՐՔ ԶՄԱՆԿՈՒՆՍ ՎԱՐՁՈՒ ԿԱՄ ՀԻՒԱՆԴԻ ԱՒԵՏԱՐԱՆ [ԿԱՐԴԱՆ]

*Այլ քահանայ, վանական կամ աշխարհական, որք զմանկունս վարձու առ-
նում յուսումն, վաճառ եւ դին զենն Աստուծոյ շնորհացն, կամ վարձու թա-
ղեն զմեռեալս կամ ժամ մի թողացուցանեն՝ զմեռեալ ոչ թաղել, ասելով՝ թէ
ոչ տայք զվարձն իմ, չթաղեմ, այնպիսի քահանայքն, որ անարգեցին զխոր-
հուրդն Աստուծոյ եւ արհամարհեցին զհրաման նորա՝ թէ Զրի առէք և ձրի
տուք, լուծցին ի կարգէն եւ նզովեսցին ի մահ եւ ի կեանս։ Բայց թէ կա-
մաւ իւրեանց, պահանջելոյ մեր տան զպէտս, զի արժան է մշակն վարձոյ,
այսինքն՝ վերակրոցն եւ ըմպելեաց, որպէս Պաւղոս գրէ, հաղորդութիւն արաս-
ցէ աշակերտն վ[արդապետին յամենայն բարութիւնս]։ Արդ, թէ տացեն նո-
քա ամենայն յաւժարութեամբ, անվեհեր զհոգեւորսն սերմանեսցեն ի նոսա
202բ եւ առցեն ի // նոցանէ առանց խղճոյ եւ ամաւթոյ, ապա թէ տրտնջելով տա-
ցեն, մի՛ առնուցուն ի նոցանէ։ Այլ կերակրեա եւ որ ընդ քեզ են ձեռն տուր եւ
անախանձաբար սփռել ի նոսա զշնորհս Հոգւոյն Սրբոյ, յորոց վերայ կարգե-
ցար մատակարար եւ վերատեսուչ յԱստուծոյ։*

## ԼԶ. ՎԱՍՆ ԹԷ Ի ՊԱՏԱՐԱԳԻՆ ԳԱՐՏ Է ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՆԻԾՔ ՀԱՆԵԼ

*Ա՜ն. ի բաց զայդ տար ի քումմէ կարճմտութենէդ, քանզի տեղին այն
ահաւոր եւ սարսափելի է, ոչ է տեղի տրտմութեան, այլ ուրախութեան, ոչ
բարկութեան, այլ հեզութեան, ոչ խռովութեան, այլ խաղաղութեան, ոչ անի-
ծանել զանիծիչս մեր եւ զհալածիչս, այլ աւրհնել, զթշնամիսն սիրել, ոչ նա տե-
ղի կապանաց է, այլ ազատութեան, որով Քրիստոս զմեզ ազատեաց ի կա-
պանաց մահու եւ մեղաց եւ չարչարողացն իւր ի վերայ խաչին աղաւթս առ-
նէր՝ Հա՜յր, թո՛ղ զոցա։ Եւ զայն մարմին չարչարեալ ետ մեզ կերակուր եւ
203ա յիշատակ յաւիտենից իւրոյ // անսխալականութեանն։ Ասէ՝ Զայս արարէք
առ իմոյ յիշատակի, այսինքն՝ որպէս ես արարի եւ դուք առնիջիք։ Արդ, մի՛
ոք եկեսցէ յայնպիսի կարճմտութիւն։ Ապա թէ ոք մի անգամ կամ երկիցս
անգիտացեալ անէծ իցէ հանցեալ թշնամոյն, եւ յետոյ զղջացեալ, Խ (40)*

*ար արտաքս կացցէ եւ յԾ (50) հաղորդեսցի։ Ապա թէ սովորութեամբ կամաւք անգիտացեալ զանճառ խորհուրդն Քրիստոսի, զարհանապազ ի բաց կացցէ ի սուրբ խորհրդոյն։*

## ԼԷ. ՎԱՍՆ ԱՆՑՈՒՍԻՑ ՔՈՒՆԱՒՈՐԱՑ ՈՐ ԳԱՅՑԵՆ, ԵՒ ԵՍ ԱՌ ՀԱՐԿԻ ՇՆՈՐՀՈՒԿՍ ԱՐԱՐԻ

*Եթէ անյուսից քունաւորաց ոք եկեսցէ և առ հարկի ոք շնորհուկս առնէ, որպէս թէ ի պատիւ նմա եւ նա շնորհուկս ոչ ումի պարգեւին, այլ առ ցոփութիւն մտաց իւրոց անհրախտի ընդումի, պարտ է ամենայն հաւաստութեամբ փորձիւք իմանալ, որ ի նմանէ խորհուրդ եւ ի բանիցն եւ ի շրթանցն*
203բ *իմացեալ // թէ ապերախտ գտանի, ոչ է պարտ զմարգարիտ արկանել առաջի խոզից, զի մի՛ առ ոտն կոխիցեն եւ դարձեալ երգիծ[ուցանէ]։ Ապա թէ անգիտացեալ, յերկրորդումն մի՛ աշխատ առնիցի։*

## ԼԸ. ՎԱՍՆ ԱՆՍՈՒՐԲ ԱՆԱՍՆՈՑ ԶԵՆՄԱՆՑ

*Այլ վասն անսուրբ կենդանեաց զենման հարցեալ՝ այս է. եթէ ոք պատարագ մատուցանիցէ իբրաւալէս եւ այլ ոք ընդ քէն կամ ընդ խաղ ասիցէ, անսուրբ է, պատուհասեն զնա, զի դատարկաբանեաց եւ զմիսն անխիղճ կերիցեն ամենեքին։ Ապա թէ քահանայ ոք ասիցէ զոհեալ է կամ հեղձուցիկ, տնօրէնկացեալ ճշտիւ քննեսցեն եւ հաստատեալ զբանն, նախ շահեսցեն զքահանայն եւ ապա կերիցեն. ինքն տացէ պատասխանի Աստուծոյ վասն անիրաւութեանն։ Ապա թէ յափշտակութենէ կամ ի գրկանաց իցէ զենեալն եւ ասիցէ*
204ա *ոք յաշխարհականաց կամ ի քա//հանայից, ի բաց ընկեցեալ կերիցեն զնա շունք եւ ոչ մարդիկ։ Այլ թէ դահավէժ լինի կենդանին եւ ջանայցէ ոք զնա կենդանի ըմբռնել ի զենուլ, թէ աքոյ տա[յ] եւ արիւն ոչ ելանէ, սուրբ է, թէ արիւն ելանէ ի բաց հոսմամբ եւ ոտն ոչ շարժէ, սուրբ է։ Եթէ յորդ արիւն ելանէ առանց ցայտման եւ հոսման եւ առանց ձայն արձակելոյ խոչակին, հեղձուցած է, մի՛ ուտիցի։*

## ԼԹ. ՎԱՍՆ ՀԱՒՐ ՄԱՆԿԱՆ, ՈՐ ԳՆԱՑ Ի ԳԻՆԵՄՊՈՒԹԻՒՆ

*Այլ հայր մանկան գնացեալ իցէ առ գինըմպութ կամ ի գործ ինչ եւ մանուկ սորա անկատար դիմեալ առ հայր իւր եւ հեղձեալ ի գետ, զի ոչ գիտաց ի նոցանէ, անպատուհաս են վասն անգիտութեանն, բայց վասն սրբեցութեան, զի եղեն պատճառ կորստեան մանկանն, երիցս քառասուն պահեսցեն՝ զերկու սրբապահութեամբ եւ զմինն շաբաթապահաւք՝ Ճ (100) ծննդրաւ, իսկ հայր մանկանն ամ մի պահեսցէ՝ զվեց ամիսն սրբապահութեամբ եւ զվեց շա-*
204բ *բաթապահութեամբ ծննդր[ութեամբ]։ // Նոյնպէս եւ մայր մանկանն։*

## Խ. ՎԱՍՆ ՄԱՒՐ՝ ԹԷ ԱՆԿԱՆԻ ԸՆԴ ՔՈՒՆՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ՄԵ[ՌԱՆԻ]

*Այլ եթէ ընդ քուն անկանի [մայր] ի վերայ մանկանն, կամ անհոգացեալ մանուկն ի հուր անկանի և այրի՝ Ե (5) ամ ապաշխարեսցէ՝ մինն սրբապահութեամբ, իսկ զԲ (2) շաբաթապահութեամբ եւ դարձեալ զերկու երիցս քառասուն պահեսցէ։*

## ԽԱ. ՎԱՍՆ ԳՈՂՈՑ. ՈՐ ԸՄԲՌՆԻՆ ԵՒ Ի ՓԱՅՏԱՔԱՇԻՆ ԱՅՍ Է

*Այլ վասն գողոց ի փայտ հանելոյ. եթէ քուրդ իցէ եթէ հայ, եւ մարդոյ հրամայիցեն ի փայտ հանել, թէ հնար իցէ խոյս տացէ ի տեղւոջէն, ապա թէ՝ կաշառով զերծցին։ Իսկ եթէ այսու ոչ ապրեսցեն, ապա զհրամայեալսն ի տէրանց պարտ է կատարել, այլ ոչ առաւելութեամբ, որպէս հրամայէ Յովհաննէս զինուորացն, թէ մի՛ առաւել քան զհրամայեալսն առնիցէք. քանզի Աստուած ի սիրտն հայի, որպէս ասէ Տէր։*

## ԽԲ. ՎԱՍՆ ՄԱՐԴՈՑ, ՈՐ ՈՒՆԻ ԱՆԱՍՈՒՆ ԽԵՌ ԿԱՄ ՁԻ ԿԻՑ[ԸՆԿԵՑ]

*Այլ եթէ մարդոյ լինի չորի խեռ կամ ձի կիցս ընկեց, կամ մարդակեր,
205ա կամ եզն հարկանող եւ անգիտասցէ եւ այլք ազդեսցեն նմա, // թողոք բարձեալ
զվնասն ցուցանիցեն եւ նա յանհոգս գայցէ եւ ոչ հնարեսցի զնա որպէս ար-
ժան է, սպանցէ զոք, տէր նորա մահապարտ է։ Թէ յանյսուրք անասնոց է. թէ
ձի, թէ չորի, ի մեռելոյն տէրքն տացին, զի ի պէտս հոգւոյն ծախիցեն։*

## ԽԳ. ՎԱՍՆ ՄԱՐԴ Ի ՃԱՆԱՊԱՐՀ ՅՈՒՂԱՐԿԵԼՈՅ ԱՅԼՈՒՄ

*Այլ մարդ ի ճանապարհ յուղարկել ումեք բազում ապրինակ տեսանի
ի հարցմունս խղճի եւ անխղճի, զի են ոմանք, որ ի գործս մշակութեան
կարգեալ ի տերանց իւրեանց եւ կէսք յարգեգործութիւն եւ այլք ի զինուորու-
թիւն են այլքն յայլ գործ, որ ի պէտս մեր հասարակաց կենաց։ Այլ եթէ ի
գործս իւրեանց եկեսցէ որոգայթ մահու, անպարտք են տեարք նորա, մանա-
ւանդ այնոքիկ, որ զպատրաստութեան պատուէրն հանապազ կացուցանեն ի
լսելիս հնազանդելոց իւրեանց, ապա թէ հասարակ միաբանութեան սիրոյ եւ
խաղաղութեան մերոյ կենաց զընդդէմսն հրամայեն գործել տեարք ծառայից
205բ եւ անդ պատահիցէ ումեք մահ // կամ սպանումն, մահապարտ է տէր նորա։
Դարձեալ, եթէ ոք ի նոցանէ ծանուցանէ տեառն իւրոյ զվնաս նորա առաջի-
կայ եւ նա անհոգացեալ անպատրաստաբար առաքէ զնա ի գործ եւ պատահի
վնասն, յորմէ խիթայր, որ առաքեացն, արեամբ պարտ է։ Իսկ եթէ ոք զայլ
ոք որ ոչ իւր իցէ եւ առաքէ ի գործ իւր եւ անդ, որ որոգայթի, արեան պարտ
է։ Այլ թէ վարձկան ոք լինի եւ ասէ ցտանուտէրն թէ առաքեա զիս եւ կամ
տուր ինձ գործ, զի արարից , իսկ նա յառաջապատրաստ ծանուցանէ նմա
զորոգայթն եւ նա առ կարիս հարկի իւրոյ յանձն առնուցու եւ նա կրկին զան-
պատրաստութեան բանն ասէ առ նա, եւ անդ պատահի նմա, անպարտ է։
է եւ այլ, որ ի վաղւն գործի ամենայն զգուշութեամբ եւ ի բազմաց վկայեալ
վնասն, առաքիցէ կամ գործել հրամա[յից]է եւ անդ հասանէ նմա որոգայթ
մահու, արեան պարտ է։*

## ԽԴ. ՎԱՍՆ [ՄԱՆԿԱՆ], ՈՐ ԱՆԿՆՈՒՆՔ ՄԵՌԱՆԻ

206ա *// Այլ վասն անկնունք մեռանելոյ մանկան այս է։ Թէպէտ եւ անկատար
մեռանի, որ ոչ ունէր զլուսաւորութեան ծնունդ աւազանին յաստուածծնու-
թեան անկատար ծնունդ մարդկան, սակայն յաստուածածնիցելոց անձանց
քրիստոնէից եւ մարմնոյ նոցա ծնեալ մանկունք են։ Վասն որոյ մասին կնքու
հասեալ զոնյարժան է վասն այնորիկ եւ վասն անմեղութեան անձին իւրոյ
խաչիւ եւ աւրհնութեամբ թաղել զքրիստոնեայն ընդ այլ քրիստոնեայսն։ Եւ
եթէ մեռեալ բերիցէ մայր զմանուկն, թէ արու իցէ եւ ինքն երկու ամսա-
կան կամ երեք, քանզի ի խ (40) աւր շնչաւորի մանուկն եւ կենդանանայ,*

յայնմհետէ գիտացեալ որ ծնաւ զնա, պարտ է ի դիր թաղել, խաչիւ եւ աղօթիւք միով կնքել զգերեզմանն։ Իսկ եթէ ամսաւրեալ իցէ նկարեալ սաղմնն յօրովայնին եւ ի պատահմանէ վիժանի զոնգողի իմն է մած[նու]մն արեանն,
206բ ներքոյ հողոյ արասցեն։ Ապա թէ լիցաց է, // յառաջ քան զՁ (80) աւրն վիժի նկարեալն յօրովայնին, նոյնպէս ի ներքոյ հողոյ [արասցեն]։ Ապա թէ յետ երկուց Խ (40) աւուրց կամ երից եւ յետ այնորիկ արտաքս ելանիցէ մանուկն մեռեալ, քանզի էգն յութսուն աւրն շնչաբերեալ կենդանանայ, պարտ է ի քրիստոնէից դիրս գնել և խաչիւ եւ աւրհնութեամբ կնքել զգերեզմանն։

## ԽՍ. ՎԱՍՆ ՓԱԽՈՒՑԵԱԼ ԳԵՐՈՅ

Այլ վասն փախուցեալ գերոյ եւ ի մեզ դիմելոյ, թէ զկնի եկեսցէ տէր նորա եւ խնդրէ, մի՛ ոք երդնուցու ամենեւին, այլ հաւանեցուսցէ բանիւ կամ կաշառաւք, ապա թէ ոչ՝ ամենեքին զփրկանս տայցեն ընդ անձին։ Եւ թէ աղնու ոչ վճարին իրքն եւ նոքա բռնութեամբ կամին գրաւել զմեզ, ոչ է պարտ պարտ անձն ընդ անձին փրկանս տալ, զի այս Քրիստոսի Աստուծոյ մերոյ միայն վայել է։ Այլ թէ յանցաւորութեամբ լինի ծառայ փախուցեալ ի տեառնէ եւ առ մեզ դիմեսցէ եւ տէր նորա հետամուտ եղեալ մինչ գտանիցէ՝ սպանանիցէ, թագուցանել պարտ է եւ բազում հնարիւք ջանալ մինչեւ զերծցի, եւ
207ա յետ ամենայն հնարից մինչեւ // ի զգեստ մարմնոյ հանել եւ տալ։ Եթէ ոչ հա[ւ]անի քինախնդիր եղեալ յանցանացն յաղագս գազանութեան իւրոյ, եւ յայն եկեալ զի երդումն պահանջէ, եւ զայն ի քահանա[յ]էն, մի՛ երդնուցու, այլ՝ ժողովրդականքն, զի փրկեսցեն զառաջնորդն իւրեանց։ Ապա թէ ոչ հաւանեալ, երդումն քահանային հասանէ, երդնուցու եւ փրկիցէ զգերին եւ յետ այսորիկ մի՛ պաշտիցէ զքահանայութիւն։ Իսկ եթէ զերդումնն ոչ պարզապար ի խաչ եւ յեկեղեցի, բանիւ կամ ձեռն դնելով, այլ ուրացութիւն խնդրէ ի քահանայէն կամ յաշխարհականէ այսպէս՝ թէ առ ոտն կոխել զխաչն, կամ ծիր առնել Քրիստոսի եւ Մահմետի, կամ շուն ի գիրկս առնուլ եւ յեկեղեցի մտանել, կամ ջուր եւ ձէթ ի բերանոյ ի բաց փչել, կամ ի վերայ եկեղեցւոյ լուսոյ ջուր փչել եւ անցուցանել, կամ զձէթ շան բերանով ըմպել, կամ թէ յանբան կենդանեաց ստիպէ ասել, թէ զնա պաշտէ, եւ այլ այսպիսի չարիք հնարի
207բ զուրացութենէ երդումն, մի՛ ոք առ//ցէ յանձն, մի՛ ի քահանայից եւ մի՛ յաշխարհականաց, քանզի չէ պարտ փրկել զոք ուրացութեամբ զՔրիստոս, քանզի եւ Քրիստոս ոչ ուրացաւ զաստուածութիւն իւր, որ ի հայրէ եւ առ հայր առաջի Պոնտաց[ւ]ոյ Պիղատոսի, այլ մատնեաց զանձնն չարչարողացն։ Արդ. թէ տացէ ոք զանձն ի փրկանս փոխանակ արեան նորա, ինքն գիտէ, բայց դսուրբ հաւատ ոչ ումիմք վաճառել եւ գնել արիւն, եւ մինչեւ յարիւն իւր եկեալ ոչ կարաց դարձուցանել զպահանջողն, միաբան տացեն մինչեւ ցչափ գնոյ նորա կաշառս եւ զարիւն նորա գնեսցեն։ Եւ ըստ աւրինաց իւրեանց երդումն նմա եւ այնպէս ամենայն հաւաստութեամբ տացեն ի նա զգերին։ Իսկ եթէ պահանջողք նենգեալ երդմանն սպանցեն զգերին, անպարտ են գնողքն՝ թէ Տէր կամի։

(Շառունակելի)

---

697. A խաչ իւր փոխ. խաչիւ
706. A թաքուցանել
717. A ձէտ
719. A երգումն
720. A քանզի չէ պարտ... զՔրիստոս չիք
724. A սուրբ

# ՑԱՆԿ

## «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1952 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

### I. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Ադրբեջանի և Թուրքեստանի հայոց առաջնորդական փոխանորդ բարձրապատիվ Տ. Վարդգես ավագ քահանա Գրիգորյանին վարդապետական խաչ շնորհելու մասին, VII՝ 7։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ գերապատիվ Տ. Սիոն եպիսկոպոսին Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ նշանակելու մասին, III՝ 8։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Դպրոցասեր Հայ Տիկնանց Միության, նրանց վարժարանի 75-ամյա հոբելյանի կազմակերպիչ կենտրոնական հանձնաժողովին և Սփյուռքի հայ ժողովրդին, VIII՝ 8։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Եվրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սերովբե Ս. վարդապետին և համայն հայ ժողովրդին, IX—X՝ 3։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հարավային Ամերիկայի հայության և Եվրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սերովբե վարդապետ Մանուկյանին՝ ի նպաստ Սրբոց Հակոբյանց Աթոռին և Պաղեստինի աղետյալ հայության՝ Հարավային ամերիկահայության մեջ կատարվելիք հանգանակության մասին, VII՝ 8։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը՝ հնդկահայ նվիրատուներին, IV՝ 7։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերական հեռագիրը արտասահմանյան թեմերին՝ Մեծի Տանն Կիլիկիո Երջանկահիշատակ Կաթողիկոս Նորին Ս. Օծության Գարեգին Ա.-ի մահվան մասին, VI՝ 8։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերական հեռագիրը՝ գերաշնորհ Ռուբեն սրբազանի մահվան առթիվ և արտասահմանից ստացված ցավակցական հեռագրեր և գրություններ, II՝ 8։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ հեռագիրը՝ Նորին Սրբության Կալիստրատ Կաթողիկոսի մահվան առթիվ, II՝ 7. և Վրացական Պատրիարքական Աթոռի տեղապահ Միտրոպոլիտ Մելքիսեդեկի պատասխանը, II՝ 8։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ցավակցական գրությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խադ արքեպիսկոպոսին՝ լուսահոգի Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան առթիվ, VI՝ 5։

ԳԵՎՈՐԳ Զ.՝ ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ. Առաջին ուղերձ Նորին Սրբազնության Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին, XI—XII՝ 4։

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Գևորգ Զ.-ի անունով ստացված շնորհավորական հեռագրեր և գրություններ, I՝ 8։

Ամենայն Հայոց Հայրապետի անունով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ գերաշնորհ Տ. Խադ արքեպիսկոպոսից ստացված նամակն ու հեռագրերը լուսահոգի Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի հիվանդության ծանրացման, մահվան գույժի և թաղման կարգադրության վերաբերյալ, VI՝ 4։

Ամենայն Հայոց Հայրապետության դիվանի հաղորդումը Կոմիտասի արխիվի նոր նյութերի ստացման և համապատասխան հաստատությանց հանձնելու մասին, VIII՝ 41։

Գերաշնորհ Տ. Զարեհ եպիսկոպոսի հեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսի Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի Կաթողիկոսական տեղապահ ընտրվելու մասին և Նորին Ս. Օծության պատասխանը, VII՝ 8։

Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա.-ի մահվան առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի անունով ստացված ցավակցական կարևորագույն հեռագրերը, VI՝ 7։

Փրկչի Հրաշափառ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Գևորգ Զ.-ի անունով ստացված շնորհավորական հեռագրեր և գրություններ, VI՝ 10։

### II. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ամենայն Հայոց Հայրապետությունը և նրա թեմերը, VIII՝ 8։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության և անվանակոչության տոնը, IX—X՝ 7։

Խաղաղության պատգամը, I՝ 8։

Հայ եկեղեցին խաղաղության համար պայքարի ճակատում, V՝ 7։

Հայրենասեր Հայրապետի մահը, VI՝ 12։

Հայրենասիրությունը Հայոց Եկեղեցու կարևոր հատկանիշն է, III՝ 4։

Պապի՝ «Sempiternus Rex»-ի ընդհանրական նոր թուղթը, IV՝ 8։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, XI—XII՝ 8։

Վարդանանց տոնը, II՝ 8։

## III. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ (լուրեր Մայր Աթոռից) հունիս, VI՝ 47, սեպտեմբեր, IX—X՝ 13։
ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ. Զատկական տոները Մայր Աթոռում, IV՝ 41։— Սարկավագների ձեռնադրություն. I՝ 57։
ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ. Սարկավագական ձեռնադրություն, XI—XII՝ 26։— Վարդապետական ձեռնադրություն, II՝ 20։
Հոգևոր Ճեմարանի քննությունները, III՝ 38։

## IV. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ Ֆ., Երկու խոսք կարդինալ Աղաջանյանի ազգադավ գործունեության մասին, IV՝ 24։
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Էջմիածնի և Կիլիկիո Աթոռները. VI՝ 22։
ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Դարձյալ միևնույն հանկերգը. IV՝ 21։
ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ. Ապաշխարություն, IX—X՝ 18։
ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Հայրենիքի և հայրենասիրության մասին, III՝ 3։
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Սրբոց թարգմանչաց տոնը. VIII՝ 10։— «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», III՝ 13։
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Հարության պատգամը. IV՝ 10։
ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Մեր ազգային-եկեղեցական վերնատունը, VII՝ 28։
ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագիրը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին, XI—XII՝ 3։

## V. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. (ՊՐՈՖ.-ԴՈԿՏ.), Դավիթ Ալավկա որդու կանոնները. IX—X՝ 48։ XI—XII՝ 56։— Ղուկաս Կեղեցու չափածո տոմարը. VI՝ 57։— Ուդիների դիմումը Պետրոս I-ին. IV՝ 39։— Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, I՝ 30, II՝ 34։— Սարգիս Փիլիսոփայի չափածո տոմարը, VIII՝ 56։
ԱՃԱՌՅԱՆ Հ. (ՊՐՈՖ., ԱԿԱԴԵՄԻԿՈՍ), Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը իբրև հայ հնագրության մեծ վարպետ, VII՝ 31։
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՌԱՔԵԼ, Հայկական տաղաչափությունը, II՝ 26։
ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ, Մշո Առաքելոց վանքի դուռը. I՝ 23։
ԲԱՆԱՍԵՐ, Անտիպ վավերագրեր լուսահոգի Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի կենսագրության համար. VII՝ 37։
ԵՐԵՄՅԱՆ Ա, Տասներեքերորդ դարի մի անհայտ նկարչուհի, VII՝ 48։
ՄԱԳՍՈՒՏՅԱՆ Ն., Կիլիկիո Հեթում Առաջին թագավորը և իր երկլեզվյան դրամները, I՝ 27։
ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՂԱՎՆԻ, Կոմիտասի ստեղծագործության աղբյուրը և անոր հայրենասիրությունը. VIII՝ 36։
ՍԱՐԳՍՅԱՆ Գ., Անապատ կամ Նոր-Վարագ վանքը և նրա վիմագրությունը, IX—X՝ 21, XI—XII՝ 27։— Թղենա Նորավանք, III՝ 27, IV՝ 28, VI՝ 41։
ՍԵՄՅՈՆՈՎ Լ. (ՊՐՈՖ.), Լուսնա-արեգակնային խավարումներ, III՝ 23։
ՍԻՄՈՆՅԱՆ ՍԻՄՈՆ, Գարեգին Կաթողիկոսի բանասիրական վաստակը, VII՝ 34։

## VI. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԹԱՆԱՍՅԱՆ ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ, Իմ աշակերտելս Խրիմյան Հայրիկին Վարագա վանքում և Մուշի Ս. Կարապետում, IX—X՝ 30, XI—XII՝ 35։— Իմ հուշերս Խաչատուր Աբովյանի մասին, VIII՝ 44։
ԱՐԱՄՅԱՆ Հ., Հայրենասեր և էջմիածնասեր գործիչը. VI՝ 37։
ԳՆԵԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ, Անմահ Վեհափառը, VII՝ 14։
ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ ՇԱՎԱՐՇ ՎՐԴ., Հայրենասեր Հայրապետը, VI՝ 28։
ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՂԱՎՆԻ, Հիշողություններ հայ ականավոր գիտնականի՝ Գարեգին Ա. Կաթողիկոսի մասին, VII՝ 17։
ՄԻԱԲԱՆ, Գարեգին Կաթողիկոսի կյանքը և գործունեությունը, VI՝ 16։
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Բեմբասացը և հռետորը, VI՝ 24։
ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ, Հայրենասեր և էջմիածնասեր Կաթողիկոսը, VI՝ 31։
Ամենապատիվ Տեր Խադ արքեպիսկոպոս Աչապահյան՝ Կաթողիկոսական տեղապահ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի, XI—XII՝ 11։

## VII. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՂԻՎԱՐԴ, Ս և ա ն (բանաստեղծություն), VIII՝ 26:
ԻՂԹԱԿԻՆ, Խնդության երգեր, XI–XII՝ 40:
ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆ Հ., Սառլինյան մրցանակի հայ լաուրեատները, III՝ 45:
ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՂԱՎՆԻ, Երևանից Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապ. IX–X՝ 42:— Երևանի Մանկական երկաթուղին, VI՝ 51:— Հոբելյանական երեկո ամերիկահայ բանաստեղծ Կ. Սիտալի գրական-հասարակական գործունեության 40-ամյակի առթիվ. III՝ 41:— Ս. Մեսրոպ Մաշտոցի տանը Օշականի մեջ, I՝ 37:
ՄԻՆԱՍՅԱՆ Մ., Երիտասարդ հնագետի հայտնագործությունները, II՝ 44:
ՇԱՀԱԳՈՒՆԻ ՇՄԱՎՈՆ, Ջերմուկն անցյալում և այժմ. VIII՝ 18:
ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ, Երևանի կենտրոնական ծածկած շուկայի բացումը. IV՝ 46:— Երևանյան տպավորություններ, VII՝ 55, VIII՝ 29, IX—X՝ 37, XI—XII՝ 44:— Ուղևորի տպավորություններ. III՝ 18:
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, I՝ 42, II՝ 46, III՝ 49, IV՝ 50, V՝ 61, VI՝ 55, VII՝ 58, VIII՝ 34, IX—X՝ 46, XI-XII՝ 50:
Կարծիքներ Ջերմուկի մասին, VIII՝ 23:

## VIII. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՌԱՔԵԼ, Ճանապարհորդական տպավորություններ՝ VII՝ 24:
ՍԱՆՃՅԱՆ Ա., Խոսքն ուրիշ՝ գործն ուրիշ, I՝ 59:
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Էջմիածնի պատվիրակությունը Անթիլիասում, I՝ 16:
Երուսաղեմի հայոց Պատրիարքական տեղապահը լանջախաչ է տալիս Նարեշ եպիսկոպոսին, VIII՝ 55:
Կարդինալ Աղաջանյանը և իր գործունեությունը. III՝ 52:
Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը Սոֆիայում, VIII՝ 54:
Հայտարարություն բանաստեղծ Կ. Սիտալի գրական գործունեության 40-ամյա հոբելյանի առթիվ. III՝ 56:
Հատված Ս. Ծննդյան տոնի առթիվ Լիբանանի ռադիոկայանից գերապատիվ Գ. Խաչ արքեպիսկոպոսի խոսած քարոզից, II՝ 61:
Մեծի Տանն Կիլիկիո Դպրեվանուց վարչության հայտարարություն, III՝ 62:
«Մեր օրերի իրական Վասակը», IV՝ 53:
Ուրարտական կարևոր մի արձանագրության գյուտ. II՝ 58:
Ռումանահայ թեմի պատգամավորական ժողովը. VII՝ 60:
Ռումինահայ թեմական խորհրդի հավատարմագիրը Ամենայն Հայոց Հայրապետին, VIII՝ 53:
Սովետական Հայաստանի 31-րդ տարեդարձի տոնակատարությունը Փարիզի մեջ, II՝ 57:
Վերափոխման տոնակատարություններ Երուսաղեմի մեջ. XI—XII՝ 54:
Տեսակցություն մը Սովետական Հայաստան այցելող ուրուկվացիներու հետ, II՝ 59:

## IX. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

ՍՍՌ Միությունում գանվող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների Մոսկվայում գումարված կոնֆերենցիայի դիմումը Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին, V՝ 3:
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ճառը ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում, V՝ 42:
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒՏԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻ ճառը ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում, V՝ 51:
ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՆԻԿՈԼԱՅԻ զեկուցումը ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում, V՝ 19:
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ելույթը ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում, V՝ 49.
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻ բացման խոսքը ՍՍՌՄ քրիստոնյա եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի կոնֆերենցիայում, V՝ 16:
ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ, ՍՍՌՄ քրիստոնյա եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում, V՝ 11:
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ, II՝ 12, III՝ 10, VII՝ 51, VIII՝ 19. IX—X՝ 10, XI—XII՝ 15:
Ուղերձ ՍՍՌ Միությունում գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների կոնֆերենցիայից՝ խաղաղության Համաշխարհային խորհրդին, V՝ 59:
Ուղերձ ՍՍՌ Միությունում գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների կոնֆերենցիայից՝ ողջ աշխարհի եկեղեցիներին, կրոնական միավորություններին, հոգևորականության և բոլոր կրոնների հավատացյալներին, V՝ 55:

## X. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ, Մեր ամառային արձակուրդները, VIII՝ 16։— Վեհափառ Հայրապետը և Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, XI–XII՝ 22։
ՄԱՐՏԻՐՅԱՆ ԻԳՆԱՏԻՈՍ, Ջեբել-Մուսայի բարբառը. III՝ 33։
ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ, Երախտագիտական խոսք Վեհափառին, IX–X՝ 15։
ՔԱՋԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ, Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստը. VIII՝ 40։

## XI. ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ, ԱՆՆՈՏԱՑԻԱՆԵՐ ԵՎ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

ԱՃԱՌՅԱՆ Հ. (ՊՐՈՖ., ԱԿԱԴԵՄԻԿՈՍ), Գարեգին Ա. Կաթողիկոս, «Հիշատակարանք ձեռագրաց», հատոր Ա, I՝ 46։
ՂՈՂՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ, Լեզվաբանական մեծարժեք մի գրքի մասին (Հ. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», II մաս), III՝ 57։— Լեզվական փաստերի գանձարանը (Հ. Աճառյան, «Լիակատար քերականություն հայոց լեզվի» հատոր I) IX—X՝ 59։
Ե., Նաղաշ Հովնաթան. «Բանաստեղծություններ». IV՝ 62։
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, II՝ 63, III՝ 63 IV՝ 63, VIII՝ 63։
ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ, I՝ 49, II՝ 49, IV՝ 67։
Մեծի Տանն Կիլիկիո հանգուցյալ Կաթողիկոս Երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Ա.ի տպագրված աշխատությունները. VII՝ 62։

## XII. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ, ԴԱՄԲԱՆԱԿԱՆՆԵՐ

ԴԱՐԵԳԻՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատի մահը և հուղարկավորությունը՝ II՝ 14։
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Դամբանական (խոսված Գարեգին Վեհափառի դագաղի առաջ, օծման կարգին), VII՝ 12։
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Դամբանական (խոսված Անթիլիասի Մայր Տաճարում, հոգեհանգստի Գարեգին Կաթողիկոսի դագաղի առջև). VII՝ 10։
Ակադեմիկոս Հ. Մանանդյան. II՝ 22։
Դերաշնորհ Տ. Ռուբեն արքեպիսկոպոսի մահը և հուղարկավորությունը, II՝ 17։
Դոկտոր Գարանֆիլյան. III՝ 61։
Հանգիստ Մեծի Տանն Կիլիկիո Երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի, VI՝ 3։
Հանգիստ Տ. Հովսեփ Եպիսկոպոս Կարապետյանի՝ IX–X՝ 66։
Մեծի Տանն Կիլիկիո Երջանկահիշատակ Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Գարեգին Ա.ի մահը, փառաշուք հուղարկավորությունն ու թաղումը. VII՝ 19։